Հոդվածում ցույց է տրված, որ հետազոտության օբյեկտ և առարկա հասկացությունները կարելի է դիտարկել ինչպես հայեցողական, այնպես էլ գործունեության մեթոդաբանական հայեցակարգերի տեսանկյունից: Մակայն վերջին դեպքում ավելի բովանդակային արդյունք է ստացվում, քանզի հայեցողական մոտեցման հասկացություն-տերմինաբանական ապարատը, որը նախնառաջ ներկայացված է առարկա և օբյեկտ կատեգորիաների միջոցով, հանդիսանում է գործունեությանի մասնավոր

դեպք, որում կենտրոնական կատեգորիաներն են նպատակը, միջոցը և արդյունքը: Դա հանգեցնում է ամեն անգամ հետազոտության միջոցների և նպատակների ձևակերպման հետ մեկտեղ դրա օբյեկտի և առարկայի մասին տեղեկություն տրամադրելու պահանջի ավելորդությանը, ինչպես դա տեղի է ունենում որոշ նորմատիվ փաստաթղթերի համաձայն:

*Հանգուցային հասկացություններ.* Հետազոտության օբյեկտ, հետազոտության առարկա, հայեցողական մեթոդաբանական

## THE CONCEPTS OF OBJECT AND SUBJECT OF STUDY IN THE LIGHT OF THE CONCEPT OF ACTIVITY-BASED METHODOLOGY

### ABSTRACT

It has been shown that the notions of object and scope of research may be viewed from two methodological perspectives – contemplative and practice-oriented. The latter perspective, however, yields a more content-rich product, as the terminology and concept range of the contemplative approach turns out to be a sub-set of the action-oriented perspective, focused on the notions of the ends, means and result. This suggests that

the requirement to state the object and scope of research in addition to its goal and means, as stipulated in a number of regulations, may be superfluous.

*Key concepts:* object of study, subject of study, contemplation methodological concept, the concept of activity-based methodological.

## РОЛЬ ВОПРОСОВ В АРГУМЕНТАЦИИ

В ходе аргументации посредством вопросов уточняются тезисы, аргументы, способы рассуждения и т.д., передается информация, совершаются уловки. В статье с логической и прагматической точек зрения формулируются виды правильных и неправильных вопросов и ответов, встречающихся в процессе аргументации.

### ЛОГИЧЕСКИЙ АСПЕКТ

*Вопрос как вид мысли.* Предположим, что мы занимаемся политикой. Хотим присутствовать на встрече политического деятеля с населением, чтобы представить его в неприглядном виде. Знаем, что он едет из города А в город В на автотранспорте и встретится с населением в одном из промежуточных населенных пунктов. Между городами А и В есть четыре дороги. Наша задача – ждать политического деятеля в том населенном пункте, где будет остановка. Задаем вопрос своему человеку, входящему в группу лиц, сопровождающих политического деятеля: «В каком населенном пункте будет остановка?».

Задавая вопрос, мы знаем, что есть четыре дороги и четыре населенных пункта (по одному на каждой дороге), где может быть остановка, и что политический деятель сделает остановку только в одном из них, что он передвигается на автотранспорте и т. д. Исходное знание, явно или неявно содержащееся в вопросе (его можно выразить посредством суждения, простого или сложного, или системы суждений), называется предпосылкой вопроса. Предпосылка обуславливает множество возможных ответов на вопрос. Пусть мы получаем ответ: «Политический деятель и его сот-

рудники будут передвигаться на легковых автомобилях». Кроме того, известно, что две дороги грунтовые, и только что прошел ливень, т.е. по этим двум дорогам легковые автомобили не проедут. Таким образом, описана вопросно-ответная ситуация: есть предпосылка вопроса – исходное знание, есть неопределенность, есть ответ, который снижает неопределенность.

Обобщая сказанное, вопрос можно определить как вид мысли, в которой выражено пожелание (просьба, требование и т.д.) дополнить имеющуюся информацию с целью устранения или уменьшения познавательной неопределенности.

В процессе аргументации вопросы могут использоваться для неявной передачи информации, поскольку они имеют предпосылки. Так, принимая экзамены с известным ученым-логиком профессором Е.К. Войшвилло, который отличался повышенной требовательностью к студентам, я иногда посредством вопросов подсказывал студентам ответ. Войшвилло спрашивал: «Кто является основателем науки логики?». Студент не отвечал. Тогда задавал вопрос я: «Основателем науки логики является древнегреческий философ Аристотель или президент Украины Кучма?». Студент отвечал, а Войшвилло делал мне замечание.

Посредством вопросов в процессе аргументации могут совершаться уловки, т.е. приемы, которые облегчают аргументацию одной стороне и затрудняют ее другой стороне.

Одна из уловок – «сокрытие необоснованности утверждения посредством вопроса». Необоснованное утверждение выражается в виде предпосылки вопроса. Эта уловка –

частный случай уловки «вовсе не высказанный лживый аргумент». (Ивлев 2015а: 183-184) Уловка «сокрытие необоснованности утверждения посредством вопроса» применяется в процессе политической аргументации. Так, известные политические деятели, депутаты Верховного совета СССР, задавали вопрос: «Кто из руководителей СССР дает разрешение на торговлю оружием?» и требовали приглашать этих руководителей на заседание Верховного совета для отчета и наказания. Фактически они обосновывали утверждение «пердадим рынки торговли оружием США».

Другая уловка – «подмена вопроса». Она основана на том, что вопросы, имеющие одно и то же вопросительное предложение, могут быть различными из-за различных предпосылок. Пусть кто-то задает вопрос: «Есть ли жизнь на Земле?». Для землян ответ очевиден. Допустим, что на Марсе есть разумные существа, и такой же вопрос задан марсианам. В 1966 году американский ученый Саган проанализировал огромное количество снимков Земли, сделанных с метеорологических спутников, и установил, что если бы такие спутники были посланы к Земле марсианами, то марсиане не могли бы утверждать, что на Земле есть жизнь (Воронцов-Вельяминов 1976: 148-149).

Совершая уловку «подмена вопроса» заданный вопрос заменяют другим, имеющим то же самое вопросительное предложение, но иную предпосылку. Так иногда обосновывают мнение населения по той или иной проблеме. Проводят социологическое исследование. Задают вопрос с одной предпосылкой, а объявляют ответ на другой вопрос, имеющий тоже вопросительное предложение, но другую предпосылку. Эта уловка является разновидностью ошибки «подмена тезиса». (Ивлев 2015б: 249-254)

**Логически правильные и логически неправильные вопросы.** Логически правильным

является вопрос, который обладают следующими свойствами: (1) на него можно дать ответ; (2) ответ является истинным; (3) ответ снижает познавательную неопределенность.

Логически правильные вопросы, между предпосылками которых можно установить отношение логического следования, могут быть более информативными и менее информативными. Если из предпосылки одного вопроса следует предпосылка другого, а обратное неверно, то первый является более информативным, чем второй. Вопросы с эквивалентными предпосылками могут различаться по информативности. Один вопрос является более информативным, чем другой, если он требует устранения большей неопределенности, чем второй. Например, в случае приведенного выше примера с передвижением политического деятеля, могут быть заданы такие вопросы. Первый: «В каком населенном пункте будет встреча политического деятеля с избирателями?». Второй: «В каком населенном пункте будет встреча политического деятеля с избирателями, и чем она закончится?». Второй вопрос является более информативным, так как требует устранения большей познавательной неопределенности.

На логически неправильные вопросы нельзя дать ответа, характеризуемого указанными выше признаками, т. е. это вопросы, на которые (1) нельзя дать никакого ответа или (2) нельзя дать прямого истинного ответа, или (3) нельзя дать ответа, снижающего познавательную неопределенность.

Вопросов, на которые нельзя дать никакого ответа, в свою очередь два вида. Это бессмысленные и недоопределенные вопросы. На первые нельзя дать ответа, так как, во-первых, в их формулировках содержатся выражения, не имеющие смысловых значений.

В теории аргументации выражения языка целесообразно рассматривать в качестве знаков, т.е. материальных объектов (написанных



или произнесенных слов или словосочетаний), выступающих в качестве представителей каких-либо материальных объектов или нематериальных объектов (мыслей). Выражение языка является знаком, если оно имеет смысловое значение.

Смысловое значение может состоять из смысла и зрительного или интуитивного представления об обозначаемых знаком объектах. Смысл – это выраженная в языке характеристика обозначаемых объектов, позволяющая отличать эти объекты от всех других объектов. В традиционной логике зрительное или интуитивное представление называли идеей. То есть смысловое значение знака может включать смысл и идею или что-то одно (или смысл, или идею). Бессмысленные вопросы содержат выражения, не имеющие ни смысла, ни идеи.

В качестве примера приведу вопрос, заданный мне на лекции студентами факультета психологии МГУ: «Приводят ли критическое метафизирование абстракциями и дискредитация тенденции церебрального субъективизма к игнорированию системы парадоксальных иллюзий?». Во-вторых, бессмысленными являются вопросы, если они построены неправильно грамматически или семантически. Примеры: «Будете ли Вы проживать в Ереване в прошлом году?»; «Как на Вас смотрят осенние деревья?».

Недоопределенными являются вопросы, если в их формулировках содержатся многозначные выражения и из контекста не ясно, в каком из возможных смыслов они употребляются в данном случае. Пример: «Вы за или против передачи земли народу?» Не ясно, что такое народ. Рабочие? Крестьяне? Очень хорошие люди? Все население страны? Не ясно, что понимается под передачей. Продать? Дать бесплатно? Дать тем, кто ее обрабатывает? Всем сельским жителям? Этот вопрос был задан при проведении социологического ис-

следования в России по поводу передачи сельскохозяйственных земель «очень хорошим людям».

Иногда вопросы формулируются нечетко неумышленно. Например, задан вопрос: «Как определяется площадь треугольника?». Обычный ответ: «Площадь треугольника равна половине произведения основания на высоту». Отвечающий на вопрос добавляет к вопросу предпосылку «Треугольник расположен одной стороной параллельно основанию». Без этого добавления ответ должен быть таким: «Площадь треугольника равна половине произведения длины любой из его сторон на длину перпендикуляра, опущенного из противоположного угла на эту сторону или ее продолжение».

Вопросы, на которые нельзя дать прямого истинного ответа называются провокационными. Предпосылки этих вопросов – ложные суждения. (Ивлев 2015б: 65) Иногда при ответе на такой вопрос достаточно сказать, что вопрос является провокационным и обратить внимание участников аргументации на ложность его предпосылки. К сожалению, это не всегда делается. Так, после известного в СССР Узбекского дела развернулось движение за отмену высшей меры наказания за хищения в особо крупных размерах. Одному из следователей, расследовавших это преступление, в процессе дискуссии, проходившей в Ленинграде, был задан вопрос: «Вы за ужесточение наказаний или за их неотвратимость?». Следователь должен был заметить: «Вопрос является логически неправильным, провокационным. Предпосылка «Человек должен выступать либо за неотвратимость наказаний, либо за их ужесточение» является ложным суждением. Мог предложить образовать из заданного вопроса две таких вопроса: «Вы за ужесточение или за смягчение наказания, или за то, чтобы оставить действующую меру наказания?», «Вы за неотвратимость наказаний или против

неотвратимости?». На первый вопрос следователь мог бы ответить: «Я за то, чтобы оставить действующую меру наказания», а на второй: «Я за неотвратимость наказаний».

Вопросы, на которые нельзя дать ответа, снижающего познавательную неопределенность, являются тавтологичными (логически или фактически). Информация, запрашиваемая посредством таких вопросов, выражена логическими или фактическими предпосылками. Примеры логически и фактически тавтологичных вопросов, соответственно: «Верно ли, что больной будет жить или не будет жить?»; «Между кем и кем была российско-японская война?».

**Виды ответов.** Ответы, как и вопросы, могут быть бессмысленными и недоопределенными, а также истинными и ложными. Характеристика бессмысленных и недоопределенных ответов аналогична характеристике бессмысленных и недоопределенных вопросов. Особым видом ложных ответов являются противоречивые ответы. Пример: «Над дверью своего деревенского дома Бор прибил подкову, которая, согласно поверью, должна приносить счастье. Увидев подкову, один из посетителей воскликнул: «неужели такой великий ученый, как вы, может действительно верить, что подкова над дверью приносит удачу?» – Нет, – ответил Бор, – конечно, я не верю. Это предрассудок. Но, вы знаете, говорят, она приносит удачу даже тем, кто в это не верит» (Турчин 1992: 160).

Среди истинных ответов важно различать правильные и неправильные. Правильными являются ответы, полностью или частично устраняющие познавательную неопределенность. Ответ, полностью устраняющий познавательную неопределенность, является сильным, не полностью — слабым. Из двух слабых ответов один может быть более сильным, чем другой. Неправильными являются ответы, не снижающие познавательной неопределенности.

Это тавтологичные и нерелевантные ответы. Тавтологичные ответы могут быть истинными в силу логической формы (логически тавтологичные). Тогда они не несут фактической информации и в силу этого не могут снижать познавательную неопределенность. Фактически тавтологичные ответы истинны в силу того, что выражают информацию, содержащуюся в вопросе (полностью или частично повторяют предпосылку вопроса), или общеизвестную информацию. Нерелевантными являются ответы не на заданные вопросы. Участники аргументаций специально готовятся к тому, как не отвечать на заданный вопрос, а отвечать на другой вопрос, «похожий» на заданный. Например, политическому деятелю задают вопрос: «Говорят, что Вы принадлежите к масонской ложе. Что это за ложа, и какое у Вас там звание?». Политический деятель отвечает: «Мама у меня русская, а папа – белорус».

### ПРАГМАТИЧЕСКИЙ АСПЕКТ

В процессе аргументации и критики кроме логического аспекта вопросов важно учитывать их прагматический аспект, то есть оценивать вопросы и ответы с точки зрения полезности. Например, задавая вопрос в суде, адвокат не должен требовать устранения неопределенности, если это устранение усугубляет виновность подсудимого. Пример. Судят Куськова. В качестве свидетеля выступает участковый инспектор. Молодой адвокат задает свидетелю вопрос: «Вы раньше знали подсудимого?».

Участковый инспектор отвечает: «Давно знаю. Известный вор».

– Почему Вы так считаете? - спрашивает адвокат.

– Да я не раз спрашивал Куськова: «Воруюсь?». Он отвечал: «Ворую. Поймаешь - не буду отпираться».

Задавая такого рода вопросы, адвокат выступает в роли обвинителя. Такие вопросы я называю расширительными.

Иногда в процессе аргументации задаются вопросы, не относящиеся к делу. Такие вопросы называются нерелевантными, или не относимыми.

Неправильными с прагматической точки зрения могут быть и ответы. К таковым относятся избыточные ответы. Избыточным называется ответ, снижающий не только выраженную в вопросе неопределённость, но и ту, которая в вопросе не выражена и которую устранять невыгодно. Например, подсудимого спрашивают, знал ли он ранее потерпевшего. Подсудимый отвечает, что не знал, но знал его жену.

Еще пример.

- Вот умру, ты и женишься.
- Нет, не умрешь, зачем тебе умирать.
- Да я к примеру. Умру, ты и женишься.
- Нет, не женюсь. Один буду жить.
- Зачем тебе одному жить? Я не хочу, чтобы после моей смерти ты один жил.
- Ну, тогда женюсь, но не сразу.
- И правильно сделаешь. А где же ты будешь жить тогда, в этой квартире?
- Где же мне еще жить.
- Да конечно. И спать на этой кровати будете?
- Да не знаю я, может и на этой.
- И в гольф она будет играть моей битой?
- Да нет, она левша. Тьфу, проговорился.

#### ЦИТИРУЕМАЯ И УПОМЯНУТАЯ ЛИТЕРАТУРА

1. Брутян, Г. (1984) Аргументация. Ереван: Издательство АН Армянской ССР.
2. Воронцов-Вельяминов Б. (1976). Очерки о вселенной. Москва: Наука.
3. Ивлев, Ю. (2013). «Аргументация и её неаргументативное сопровождение или замещение»: МУДРОСТЬ 2013, № 1.
4. Ивлев, Ю. (2015а). Теория и практика аргументации. Учебник. Москва: Проспект.
5. Ивлев, Ю. (2015б). Логика. Учебник. Москва: Проспект.
6. Турчин, В. (Ed.) (1992) Физики все еще шутят. Москва: Макет.

*Юрий ИВЛЕВ*

## РОЛЬ ВОПРОСОВ В АРГУМЕНТАЦИИ

### РЕЗЮМЕ

Под аргументацией понимается обоснование каких-либо знаний при помощи других знаний и средств логики. (Брутян 1984: 5; Ивлев 2013: 45-55) В статье рассматривается роль вопросов различных видов в процессах аргументирования.

Формулируется понятие вопроса с логической точки зрения. Дается определение воп-

роса как мысли, в которой выражено желание дополнить имеющуюся информацию с целью устранения или уменьшения познавательной неопределенности, т.е. рассматривается вопросно-ответная ситуация, включающая исходное знание – предпосылку вопроса. Выделяются виды вопросов: логически правильные и логические неправильные. Среди первых

различаются более информативные и менее информативные, более информационные и менее информационные. Среди логически неправильных выделяются бессмысленные (в формулировках которых есть выражения, не имеющие смысловых значений, а также есть выражения, построенные грамматически или семантически неправильно) и недоопределенные (в формулировках этих вопросов есть многосмысленные выражения); провокационные (те, на которые нельзя дать истинного прямого ответа, предпосылками этих вопросов являются ложные суждения); тавтологичные, логически или фактически, (запрашиваемая информация, содержится в самих вопросах (передается логической формой вопросов или нелогически-ми терминами).

Формулируются логически правильные и логически неправильные ответы. Ответы, как и вопросы, могут быть бессмысленными и недоопределенными. Среди истинных ответов выделяются правильные (полностью или частично устраняющие познавательную неопределенность) и неправильные (не снижающие познава-

тельной неопределенности). Различаются виды правильных ответов (сильные и слабые) и виды неправильных ответов (тавтологичные и нерелевантные).

Дается прагматическая характеристика вопросов и ответов. Прагматически неправильными вопросами являются расширительные (вопросы, требующие устранения неопределенности, устранять которую нецелесообразно для аргументатора) и не относимые (вопросы, не относящиеся к обсуждаемой проблеме). Прагматически неправильными ответами являются избыточные (ответы, которые снижают не только выраженную в вопросе неопределенность, но и ту, которая в вопросе не выражена и которую устранять невыгодно для аргументатора).

*Ключевые понятия:* аргументация, вопрос, ответ, логически правильный вопрос, логически неправильный вопрос, логически правильный ответ, логически неправильный ответ, прагматически неправильный вопрос, прагматически неправильный ответ.

*Յուրի ԻՎԼԵՎ*

## ՀԱՐՑԵՐԻ ԴԵՐԸ ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ՄԵԶ

### ԱՄՓՈՓՈՒՄ

Փաստարկում ասելով՝ հասկանում ենք որոշակի գիտելիքների հիմնավորումը այլ գիտելիքների և տրամաբանության միջոցների օգնությամբ (Բրուսյան 1984: 5; Իվլև 2013: 45-55): Հոդվածում դիտարկվում է տարբեր տեսակի հարցերի դերը փաստարկման գործընթացներում:

Ձևակերպվում է *հարց* հասկացությունը տրամաբանության տեսակետից: Տրվում է հարցի՝ իբրև մտքի սահմանումը, որում ար-

տահայտված է առկա տեղեկատվությունը լրացնելու ցանկությունը՝ ճանաչողական անորոշությունը վերացնելու կամ նվազեցնելու նպատակով, այսինքն՝ դիտարկվում է հարց-պատասխանային իրավիճակը, որը ներառում է ելակետային գիտելիքը՝ հարցի նախապայմանը: Առանձնացվում են հարցի տեսակները՝ տրամաբանորեն ճիշտ և տրամաբանորեն սխալ: Տրամաբանորեն սխալների մեջ առանձնանում են անիմաստները

(որոնց ձևակերպումներում կան արտահայտություններ, որոնք չունեն իմաստային նշանակություն, ինչպես նաև կան արտահայտություններ քերականորեն կամ իմաստաբանորեն սխալ) և թերի ձևակերպված (այդ հարցերի ձևակերպումներում կան բազմիմաստ արտահայտություններ), սադրիչ (նրանք, որոնց չի կարելի տալ ճշմարիտ ուղիղ պատասխան, այդ հարցերի նախադրյալները կեղծ դատողություններ են); նույնաբանությունները՝ տրամաբանական կամ փաստական (հայցվող տեղեկատվությունը պարունակվում է հենց հարցերում. փոխանցվում է հարցերի տրամաբանական ձևով կամ անտրամաբանական տերմիններով):

Ձևակերպվում են տրամաբանորեն ճիշտ և տրամաբանորեն սխալ պատասխաններ: Պատասխանները, ինչպես և հարցերը, կարող են լինել անիմաստ և թերի ձևակերպված: Ճշմարիտ պատասխանների մեջ առանձնացվում են ճիշտ (որոնք ամբողջությամբ կամ մասնակի վերացնում են ճանաչողական անորոշությունը) և սխալ (որոնք չեն վերացնում ճանաչողական անորոշությունը): Առանձնացվում են ճիշտ պատասխանների տեսակները (ուժեղ և թույլ) և սխալ պատաս-

խանների տեսակները (նույնաբանական և ոչ վերաբերելի):

Տրվում է հարցերի և պատասխանների պրագմատիկ բնութագիրը: Պրագմատիկորեն սխալ հարցեր են ընդլայնող (հարցեր, որոնք պահանջում են անորոշության վերացում, որը փաստարկողի համար նպատակահարմար չէ հեռացնել) և անվերաբերելի (հարցեր, որոնք չեն վերաբերում քննարկվող խնդրին): Պրագմատիկորեն սխալ պատասխաններ են ավելորդները (հարցեր, որոնք նվազեցնում են ոչ միայն հարցում արտահայտված անորոշությունը, այլև այն, որը հարցում արտահայտված չէ և որը հեռացնելը ձեռնտու չէ փաստարկողի համար):

*Հանգուցային հասկացություններ.* փաստարկում, հարց, պատասխան, տրամաբանորեն ճիշտ հարց, տրամաբանական սխալ հարց, տրամաբանորեն ճիշտ պատասխան, տրամաբանորեն սխալ պատասխան, պրագմատիկորեն սխալ հարց, պրագմատիկորեն սխալ պատասխան:

Yuri IVLEV

## THE ROLE OF THE QUESTIONS IN ARGUMENTATION

### ABSTRACT

An argumentation is interpreted as justification of knowledge by means of some logical instruments and other knowledge. The article focuses on the role of questions of different sorts in the argumentation process. The notion of question is formulated from logical point of view. The question is defined as thought which demands to complete

available information with a view to elimination or minimizing cognitive indeterminacy, which is the presupposition of the question. All questions may be divided into logically correct and logically incorrect. Among the former more informative and less informative, more informational and less informational questions can be distinguished. Among logi-

cally incorrect questions can be distinguished senseless questions (i.e. questions including some meaningless expressions as well as expressions which are grammatically or semantically incorrect) and undefined questions (i.e. questions including ambiguous expressions); provocative questions (i. e. questions which presuppositions are logically invalid statements and which cannot be answered correctly); (logically or factually ) tautological questions (i. e. questions containing needed information).

Logically correct and logically incorrect answers are defined. Like questions, answers can be senseless and undefined. Among true answers can be distinguished correct answers (fully or partially eliminating cognitive indeterminacy) and incorrect answers (not eliminating cognitive indeterminacy). Correct answers can be divided into strong and

weak; incorrect answers can be divided into tautological and irrelevant.

Pragmatic characteristic of questions and answers is also given in the article. Pragmatically incorrect questions are expansive questions (i.e. questions, requiring to eliminate some additional indeterminacy, which is inexpedient for the argumentator) and irrelevant questions (i.e. questions which do not relate to the problem under consideration). Pragmatically incorrect answers are excessive ones (i.e. answers reducing some indeterminacy which is not expressed in the question).

*Key concepts:* argumentation, question, answer, logically correct question, logically incorrect question, logically correct answer, logically incorrect answer, pragmatically incorrect question/answer.

ՎԱՂ ՏԱՐԻՔՈՒՄ ՓԻԼԻՍՈՓՈՒՅԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ. ՊԱՏԿԵՐԱՎՈՐ  
ՓԻԼԻՍՈՓՈՒՅՈՒԹՅՈՒՆ

Վաղ տարիքում փիլիսոփայական մտածողության զարգացման մեխանիզմների առաջադրման, երեխաների փիլիսոփայական կրթության մեթոդաբանական հիմքերի մշակման, ինչպես նաև մանկավարժներին՝ երեխաներին *փիլիսոփայություն* սովորեցնելու գործին պատրաստելու տեսանկյունից կարևորվում է այսպես կոչված *պատկերավոր փիլիսոփայության* ներմուծումը՝ որպես երեխայի (ինչպես նաև առհասարակ սովորողի, ընթերցողի) աշխարհայացքի ձևավորման, երեխային փիլիսոփայություն սովորեցնելու կենսափորձի մշակման գործընթացի արդյունավետությունը բարձրացնող կարևոր գործոն:

Կրթության ճգնաժամի պատճառներից մեկն այն է, որ երեխաները չեն հասկանում, թե ինչ են իրենց սովորեցնում: Կրթության ընթացքում ամենակարևորը երեխային կանոնավոր, բայց և ինքնուրույն, վերլուծաբար մտածել սովորեցնելն է, և այդ գործընթացն ամբողջական է, համապարփակ, քանի որ իրականանում է ուսուցման բոլոր ոլորտներից փոխառնված հասկացությունների հենքի վրա: Այսպիսի ուսուցում կարող է ապահովել բացառապես փիլիսոփայությունը: Արդեն իսկ նախադպրոցական տարիքից երեխան պետք է հարմարվի տրամաբանության սկզբունքներին և կշռադատություններին, որոնք նրան պետք է մատուցել առավել հետաքրքիր ձևով: Փիլիսոփայության դասի ժամանակ, փիլիսոփայական բանավեճի ընթաց-

քում երեխաներն իրենց փորձը քննարկելու բնական ցանկությունն ու պահանջը իրականացնում են ոչ թե իրենց «ես»-ի, այլ երրորդ դեմքի՝ հերոսների գործունեության կամ մտքերի տեսանկյունից: Նրանք գործածում են պատկերներ և սովորում են դրանց միջոցով ըմբռնել տեքստի ենթատեքստն ու համատեքստը:

Փիլիսոփայական կրթությունը մարդու ինքնության, անձի, անհատականության ձևավորման և մշակույթի ու ավանդույթների ժառանգորդման միջոցով ստեղծում է այն հասարակությունը, որտեղ վաղը այսօրվա երեխա-մարդն ապրելու է: Այստեղից էլ՝ «Ինչպիսին փիլիսոփայական կրթությունն է, այնպիսին էլ հասարակությունն է» արտահայտությունը:

Հարկավոր է միավորել ավանդական և ժամանակակից կրթական հայեցակարգերը, ուսմունքներն ու ձեռքբերումները, քանի որ կրթության իրական կոչումը երեխաների մոտ ազգային մշակույթի հարուստ և ինքնատիպ արժեքների վերարտադրությունն է: Փիլիսոփայությունը կրթական նպատակների համար օգտագործելու գաղափարը ներառում է բազմակողմանի մտածելակերպ, սոցիալական ժողովրդավարություն, բարոյագիտական ու գեղագիտական կշռադատություններ:

Տեղեկույթն ուղեղում ամրագրելու բազում եղանակներ կան, որոնք, որպես կանոն, հենվում են տեսողականացման (վիզուալիզացիայի)՝ տեղեկույթը պատկերների ձևով հիշե-

լու կամ խոսքայնացման (վերբալիզացիայի)՝ տեղեկույթը խոսքի ձևով հիշելու վրա: Տեղեկույթը հիշելու տեսանկյունից էական նշանակություն ունի այն, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այդ եղանակներից հատկապես որն է գործածվում, ընդ որում տվյալ տեղեկույթի ամրագրման հնարի ընտրությունը կախված է յուրացվելիք նյութի տեսակից: Վիզուալ կամ տեսողական մենտոնիկայի<sup>1</sup> համակարգը թույլ է տալիս վիրտուալ կերպով անսահմանափակ քանակի տեղեկույթ փոխանցել հիշողությանը: Ըստ համաշխարհային ձայնագրող ընկերությունների փորձի՝ վերջինիս հնարներն ու համակարգերը<sup>2</sup> հիմնականում ունեն երկու նպատակ՝ ձևավորել մտավոր կերպարներ և ստեղծել կապեր այդ պատկերների միջև, ինչն իրագործելու ունակությունից էլ կախված է տեսողական մենտոնիկայի համակարգի օգտագործման արդյունավետությունը:

Ակնառության գաղափարի կարևորության ըմբռնման մասին վկայում են կրթության կազմակերպման ոլորտում և ժամանակակից ուսումնական պրակտիկայում պատկերագրող դասագրքերի, ուսումնական ձեռնարկների լայնազանգված հրատարակությունն ու կիրառությունը: Պատկերավոր ուսուցմանը վերաբերող առկա հետազոտությունների (տե՛ս մասնավորապես՝ Anderson & Hidde 1971) արդյունքները ևս հաստատում են ուսուցման գործընթացում պատկերների ուժն ու հզորությունը և որ ուղեղի համար շատ

ավելի դյուրին է պահպանել և հիշել պատկերը, քան խոսքը, քանի որ բառը վերացական է, մինչդեռ պատկերը կոնկրետ է, ուստի՝ հեշտ հիշվող: Դրանով պետք է բացատրել այն, որ մանկության տարիներին սերտած տեսական գիտելիքները հիշելու համար շատ ավելի մեծ ջանքեր են պահանջվում, քան նույն ժամանակահատվածում տեղի ունեցած լավագույն դրվագների, կարևոր ու նշանակալի դեպքերի ու իրադարձությունների վերարտադրությունը, ինչն ուղեղի համապատասխան բաժինն անգամ տարիներ անց հեշտությամբ և ավտոմատ կերպով հիշում է: Կոնկրետ հղումներով ինքնատիպ պատկերների (նկարներ, իլյուստրացիաներ, նշաններ, սիմվոլներ, սխեմաներ, ֆիգուրներ, գրաֆիկային պատկերներ և այլն) ստեղծումը և դրանց կիրառությունը տեքստի մեջ կարող են նպաստել մարդու մտածողության կազմակերպվածությանը, տեղեկույթի ընկալմանը՝ դարձնելով կրթական գործընթացն առավել արդյունավետ, ուրախ, հետաքրքիր, կրճատելով ուսուցման ժամանակը, ապահովելով նյութի մտապահման ու վերարտադրության երկարատևությունը:

Ասվածը, իհարկե, բացարձակ չէ և ամեն ինչ չէ, որ կարելի է պատկերավոր դարձնել: Կարելի է մատնանշել տարբեր օրինակներ, երբ տեղեկույթը հիշելու համար ավելի նպատակահարմար և ավելի արդյունավետ է խոսքայնացման հնարների գործածությունը: Սակայն տվյալ աշխատանքում խնդիր է դրվել սահմանափակվել տեքստի պատկերավորման կարևորության վերհանմամբ և ընդգծմամբ:

Հաշվի առնելով ուղեղի նշված առանձնահատկությունները, նպատակահարմար է պատկերավոր դարձնել այն տեղեկույթը, որը մենք ուզում ենք սովորել կամ սովորեցնել: Առավել դյուրին է կոնկրետ, նյութական

<sup>1</sup> Տեսողական մենտոնիկայի մասին կան բավականին հետազոտություններ, գրքեր և համապարփակ ուղեցույցներ, որոնք օգնում են հիշել ամենատարբեր փաստերը և բացահայտել շատ անհասկանալի բառերի առեղծվածը պարզ մենտոնիկական սարքերի միջոցով (տե՛ս Evans 1956; 2007):

<sup>2</sup> Վիզուալ մենտոնիկայի հնարներին ու համակարգերին հանգամանորեն կարելի է ծանոթանալ *creating effective visual imagery* կայք-էջում:



առարկաներ մատնանշող հասկացությունների տեսողականացումը, որի դեպքում պարզապես պատկերվում է իրական օբյեկտը: Այլ է վերացական նյութի համար պատկերների ստեղծման գործընթացը, երբ հարկ է հաշվի առնել մի շարք նկատառումներ, մասնավորապես օգտագործել և ինքնուրույն կերպով առաջադրել պարզ, հստակ, ազդեցիկ, դրական կամ հումորային հույզեր արթնացնող, արտառոց, տարօրինակ, ծիծաղելի, նույնիսկ անհեթեթ պատկերներ, չափազանցնել պատկերվող հասկացությունների հատկանիշները, հաշվի առնել այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են ձայնը, կառուցվածքը, համը, հոտը և այլն, ստեղծել գործողություններ արտացոլող կապեր փոխազդող պատկերների միջև: Վերացական հասկացությունները տեսողականացնելիս հիմնականում նախ՝ դրանք կապում են նույն իմաստն ունեցող կամ հիշվելիք գաղափարն ակնարկող որևէ պատկերավոր խորհրդանշի հետ՝ այսպես ասած, կողավորելով տեղեկույթը պատկերների ձևով, ապա՝ այդ պատկերները ապակողավորելու միջոցով փորձում են վերհիշել այն:

Ասվածից ակնհայտ է, որ մարդկային մտածողությունը միատարր չէ: Մտածողության կառուցվածքում տարբերվում են երկու հակադիր տեսակներ՝ վերացական մտածողությունը և կոնկրետ մտածողությունը: Վերացական մտածողության տիպական օրինակ է մաթեմատիկական տրամաբանությունը, իսկ որպես կոնկրետ, առարկայական մտածողության օրինակ կարելի է նշել արվեստի գործերը, գրական կերպարները և այլն: Ռուս ֆիզիոլոգ Ի.Պավլովը փորձնական հետազոտությունների օգնությամբ եկել է այն եզրահանգման, որ վերացական հասկացություններով դատող գիտնականների գլխուղեղի ճակատային մասն է հիմնականում զարգացած և խիստ արտահայտված, իսկ պատկե-

րավոր մտածողների մոտ ընդգծված կերպով զարգացած է գլխուղեղի հետին մասը, և միայն բացառիկ հանճարների մոտ է, որ գլխուղեղի երկու՝ ճակատային և հետին տեղամասերը զուգակցվում են:

Ինչպես առօրյա կյանքի, այնպես էլ ուսումնական գործընթացի դիտարկումները ցույց են տալիս, որ մանկապատանեկան հասակում երեխաներն ավելի դժվարությամբ ընկալում են վերացական, քան կոնկրետ հասկացությունները: Այստեղից էլ, առաջանում են որոշ դժվարություններ դպրոցական ուսումնական գործընթացում մաթեմատիկական առարկաների ընկալման հարցում, և դրանով թերևս պետք է բացատրել այն, որ շատ շրջանավարտներ բարձրագույն կրթության իրենց բնագավառն ընտրելիս խուսափում են մաթեմատիկական առարկաներից: Նկատելի է նաև այն հանգամանքը, որ փոքր տարիքում մաթեմատիկական առարկաներից խուսափող երեխան ավելի մեծ դժվարություններ է ունենում հասուն տարիքում վերացական գիտությունների, մասնավորապես փիլիսոփայության ընկալման հարցում, փիլիսոփայական առարկաների ուսումնասիրության բնագավառում: Ի դեպ, հարկ է նկատել, որ աբստրակտ գիտությունների, մասնավորապես մաթեմատիկայի, ուսումնասիրության հարցում երեխաները շատ դժվարություններ հաղթահարում են հիշողության շնորհիվ, ինչը նշանակում է, որ նրանք դպրոցում ոչ թե ըմբռնում էին վերացական հասկացությունների էությունը, մաթեմատիկական բանաձևերի բովանդակությունը, այլ իրենց հասակին հատուկ սուր հիշողության շնորհիվ վերարտադրում էին վերացական հասկացություններ և բանաձևեր, առանց լիովին պատկերացնելու, թե ինչին է վերաբերում խոսքը: Այս դժվարությունների հաղթահարումը, ըստ էության, անհնարին է դառնում ավելի մեծ

հասակում: Գիտնականները և մանկավարժները փորձում են մաթեմատիկան հասկանալի դարձնել ավելի ուշ հասակում «Զվարճալի մաթեմատիկա», «Հետաքրքրաշարժ տրամաբանություն» և նման կարգի այլ գրքերի, դասագրքերի ու ձեռնարկների միջոցով, որոնց գրեթե չի հաջողվում իրականացնել իրենց առջև դրված խնդիրները: *Փիլիսոփայություն* դասընթացի շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում վերացականի և կոնկրետի միասնության խնդրին, սակայն հարցը մնում է վերացական և դիտարկվող թեմայի շուրջ դասախոսությունները, որպես կանոն, կրում են ձևական բնույթ:

Այստեղ խնդիրն այն է, որ առանց համոզման հնարավոր չէ հասկանալ փիլիսոփայական շատ դրույթներ, հնարավոր չէ սեփական գիտակցության սեփականությունը դարձնել դասախոսի կողմից լուսաբանվող կատեգորիաներն ու հասկացությունները: Խոսքն առավել ևս վերաբերում է խնդիրների հիմնավորման ըմբռնմանը, ինչն անհրաժեշտ է դառնում որոշ տեսությունների, մասնավորապես, փիլիսոփայության բնագավառում:

\*

Որոշ փիլիսոփաներ, մաթեմատիկոսներ փորձել են գիտամանկավարժական առումով հաղթահարել հիշատակված դժվարությունները: Այդ նպատակով ստեղծվել են տեսություններ գիտության, այդ թվում՝ փիլիսոփայության, մաթեմատիկայի լեզուների մասին՝ որոշակիորեն տարբերակելով գիտության լեզուն առօրյա խոսակցական լեզվից՝ ինչպես իմաստաբանական (սեմանտիկայի), այնպես էլ շարահյուսական (սինտաքսիսի) տեսակետից: Եթե առօրյա խոսակցական լեզվի իմաստաբանությունը ուսումնասիրում է առօրյա խոսակցական լեզվի բառերի բովանդակությունը, ապա գիտության լեզվի իմաստաբանությունը հետազոտում է տվյալ գիտա-

կան տիրություն ներառված հասկացությունների առանձնահատկությունները: Եթե առօրյա լեզվի շարահյուսությունը ուսումնասիրում է բառերի կապակցման հնարավոր եղանակներն ու ձևերը, ապա գիտական լեզվի սինտաքսիսը հետազոտում է հասկացությունների շաղկապման եղանակները դատողություններում և մտահանգումներում, ինչը, ի վերջո, հնարավոր է դարձնում ճշմարիտ եզրահանգումների իրականացումը, ճշմարիտ ասույթներից ճշմարիտ եզրակացությունների բխեցումը: Ֆինն-ամերիկյան փիլիսոփա Հինտիկան ևս ընդգծում է բնական և ձևական լեզուների միջև թարգմանության խրթինությունը (այդ մասին տե՛ս Բրուսյան 2004. 271):

\*

Դիտարկվող խնդիրների պատասխանները մաթեմատիկոսներն ու փիլիսոփաները լուսաբանել են տարբեր ձևերով: Անգլիացի մաթեմատիկոս Մոյերն ընդգծում է գիտության մի լեզվից մի այլ լեզվին անցնելու անհրաժեշտությունը (Сойер 1972), ինչը, ըստ էության, այլ բան չէ, քան անցում արստրակտիկ կոնկրետին և հակառակը: Հանրահաշվի լեզվից երկրաչափության լեզվին անցումը հնարավորություն է ընձեռում պատկերավոր և հասկանալի դարձնելու հանրահաշվական բանաձևերի խորքերում, այսպես ասած, թաքնված գիտելիքը, իսկ ոչ ձևականի փոխակերպումը ձևականի՝ պատկերավորի, նշանակում է ըստ էության հասկանալի և ըմբռնելի դարձնել այն, ինչը մնացել է գիտական մտքի մշուշում: Հակառակ գործողությունը՝ երկրաչափության լեզվից հանրահաշվի լեզվին թարգմանելը, հնարավորություն է ընձեռում ստուգելու երկրաչափական պատկերների միջոցով արտահայտված գաղափարների ճշգրտությունը:

\*

Մաթեմատիկայից հետ չմնաց փիլիսոփայությունը: Պետք էր ժամանակ, որպեսզի կոնկրետ գիտություններն ամփոփեին իրենց արդյունքները, իսկ փիլիսոփայությունը դրանք յուրովի ընդհանրացներ ինչպես գիտության համար ընդհանրապես, այնպես էլ ինքն իր համար (վերջին դեպքում մենք գործ ունենք 20-րդ դարում խիստ ակտիվ դարձած մետատեսությունների հետ (տե՛ս, մասնավորապես՝ Բրուսյան 2008; Brutian 2012; Hovhannisyan 2015/): Փիլիսոփաները սկսեցին հրատարակել գործեր, որտեղ փիլիսոփայության պատմությունը ներկայացվում էր պատկերների ձևով: Առաջին պատկերագրող ստեղծագործությունը փիլիսոփայության ոլորտում *Փիլիսոփայության պատկերավոր պատմությունը* ստվարածավալ մենագրությունն է (Runes 1963), որը լույս է տեսել 1959 թվականին, այնուհետև ունեցել է բազմաթիվ այլ վերահրատարակություններ: Աշխատության խմբագիր դոկտոր Դագորբերտ Դ.Ռունսը, համագործակցելով աշխարհի առաջատար համալսարանների գրադարանների, թանգարանների և մասնավոր հավաքածուներ ունեցողների հետ, հավաքագրել և ժողովածուում զետեղել է փիլիսոփայության ոլորտին վերաբերող մոտավորապես 1000 դիմանկարներ, պատկերներ, նկարներ, պատճեններ, հնագիտական նկարագրումներ և պատկերագրող տեքստեր, որոնցում ամփոփված են հիմնական փիլիսոփայական դպրոցների, իմաստասիրական հայտնի գրքերի, արևմուտքի և արևելքի մեծագույն մտածողների, իմաստասերների և գիտնականների նկարների, քանդակների ու արվեստի այլ աշխատանքների (ներկայացված որպես ավանդական, դերասանական և լուսանկարչական պատկերներ) վերարտադրված տարբերակները և ավելի քան երեք հազար տարվա

փիլիսոփայությունը՝ Սոկրատեսից մինչև Մուզուկի, հնդկական ուպանիշադներից մինչև Էկզիստենցիալիստներ, Մոզեսից մինչև Էյնշտեյն:

Այսօր ԱՄՆ-ում և Անգլիայում հրատարակվում է *Ներկայացնելով գրաֆիկական ուղեցույցը* մատենաշարը՝ ավելի քան 100 վերնագիր փիլիսոփայության, քաղաքականության, գիտության և արվեստի շրջանակներում համալիր տեսական թեմաների վերաբերյալ: Մատենաշարում տեղ է գտել *Ներկայացնելով փիլիսոփայությունը* գրաֆիկական պատկերագրող գիրքը (Robinson & Groves 2000): 2011 թ. շարքը ընդլայնվել է՝ ներառելով *Ներկայացնելով գործնական ուղեցույցները*, որոնք տրամադրում են հակիրճ, փորձագիտական ներածություններ բիզնեսի, հոգեբանության և խորհրդատվության թեմաների շրջանակներում: Վերջին տարիներին հրատարակվել են բազում նոր նմանատիպ գրքեր (տե՛ս մասնավորապես՝ *Иллюстрированный философский словарь* 2004; Светлов 2010; *История философии в схемах и комментариях* 2010; Зотов 2001 և այլն):

\*

Պատկերավոր փիլիսոփայությունն առարկայական է դարձնում փիլիսոփայական գիտելիքը և դյուրին փիլիսոփայական կատեգորիաների ընկալումն ու ըմբռնումը ունկնդրի կողմից:

Սովորաբար փիլիսոփաները պատկերավոր փիլիսոփայությունը ներկայացնում են փիլիսոփայության պատմության հենքի վրա: Այս առթիվ պետք է նկատի ունենալ փիլիսոփայական գիտելիքի այն կարևորագույն առանձնահատկությունը, որ ի տարբերություն այլ գիտությունների, որոնց պատմությունը ժամանակակից տեսությունը չէ (ինչպես, օրինակ, հանրահաշվի պատմությունը դեռ հանրահաշիվ չէ, կամ բուսաբանության

պատմությունը դեռ բուսաբանություն չէ), փիլիսոփայության պատմությունը հենց փիլիսոփայությունն է:

Միսալ կլինի պատկերավոր փիլիսոփայությունը հանգեցնել փիլիսոփաների պատկերների վերարտադրությանը: Թեպետ փիլիսոփաների պատկերների համատեքստում որոշակիորեն դյուրին է դառնում նրանց գաղափարների ընկալումը, սակայն հարկ է դիտարկել նաև այն առարկաները, երևույթները, որոնք կարևոր դեր ունեն տվյալ փիլիսոփայի մեկնաբանություններում, հայացքներում: Այստեղից էլ՝ պատկերների բազմազան բնույթը, որոնք արտահայտված մտքերից անկախ իրենց հերթին հարստացնում են այդ մտքերը:

Եթե համեմատելու լինենք միայն հեղինակների պատկերներով հրատարակված աշխատությունները ավելի բազմազան և բազմաֆունկցիոնալ պատկերներ ընդգրկող աշխատությունների հետ, ապա կարող ենք ասել, որ առաջին դեպքում մենք գործ ունենք փիլիսոփայական մենախոսության, իսկ երկրորդ դեպքում՝ փիլիսոփայական երկխոսության հետ: Իսկ մեր դարաշրջանը երկխոսությունների և հաղորդակցությունների դարաշրջան է:

\*

*Պատկերավոր փիլիսոփայություն* դասընթացի ստեղծումը բարդ գործընթաց է: Այն պահանջում է տեխնիկական միջոցների առկայություն, հսկայական փիլիսոփայական գրականության վերընթերցում և նոր գրականության յուրացում: Դասընթացը չպետք է սահմանափակել փիլիսոփաների կենսագրության և նրանց հիմնական գաղափարների շարադրմամբ: Կարևոր է նաև այն հանգամանքը, թե ինչ դիպուկ դարձվածքներ ունեն փիլիսոփաները կյանքի այլ բնագավառների վերաբերյալ և հենց փիլիսոփայության մասին:

Ընդ որում փիլիսոփայության դերի ըմբռնումը տարբեր փիլիսոփաների մոտ խիստ տարբեր է՝ սկսած փիլիսոփայության ժխտումից մինչև փիլիսոփայության դերի բացարձակացումը: Փիլիսոփայությունը երեխաներին հրամցելու համար անհրաժեշտ է բացահայտել փիլիսոփայական մտքի խորխորատները և այն, ինչ ասել են փիլիսոփաները առօրյա խոսքի կամ սիմվոլիկ լեզվի բառապաշարների միջոցով, հարստացնել պատկերավոր լեզվի, պատկերների լեզվի միջոցով հաղորդվող տեղեկության միջոցով: Այլ կերպ ասած, փիլիսոփայության լեզվի մեջ դեռևս չբացահայտված, իմպլիցիտ խնդիրները դարձնել բացահայտ, էքսպլիցիտ:

\*

*Պատկերավոր փիլիսոփայություն* դասընթացը պետք է հարստացնել հայ փիլիսոփայության պատմության կարևոր դրույթներն արտացոլող հայեցի ոճի պատկերներով, որոնք, փիլիսոփայական դրույթների հետ մրցակցելով, պահպանել են իրենց առավելությունը և կարող են հարստացնել փիլիսոփայական միտքը համաշխարհային մակարդակով:

\*

Այս աշխատանքի մոտավոր ներկայացումը ցույց է տալիս, որ պատկերավոր փիլիսոփայությունը երեխաների համար ստեղծելիս մենք գործ ունենք հսկայական ծավալի աշխատանքի հետ, որը կարիք ունի ձևավորելու ստեղծագործական խումբ, ապահովելու համապատասխան տեխնիկական սարքավորումներ: Թերևս ճիշտ կլինի այս նախագիծն իրականացնել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման միջազգային գիտահետազոտական ինստիտուտը և ՀՊՄՀ փիլիսոփայության

փայտության և տրամաբանության ամբիոնը պատրաստ են օգտագործել բոլոր հնարավորությունները՝ հարկ եղած դեպքում հնարավոր ծրագրի մեջ ներգրավելով նաև այլ երկրների խոշոր փիլիսոփաների:

ՄԵՋԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բրուտյան, Գ. (2004): Հայագիտություն և մետահայագիտություն: Երևան. ՀՀ ԳԱԱ *Գիտություն* հրատարակչություն, 530 էջ:
2. Բրուտյան, Գ. (2008): Ակնարկներ մետատեսության մասին: Երևան, Փիլիսոփայության միջազգային ակադեմիա հրատարակչություն:
3. Հովհաննիսյան, Հ. (2015): «Վաղ տարիքում փիլիսոփայական մտածողության զարգացման հեռանկարները հայ իրականության մեջ»: Իմաստություն 2(3) 2014, էջ 56-75: Երևան, «Տիգրան Մեծ» հրատ.:
4. Anderson, R. & Hidde, J. (1971). "Imagery and sentence learning". Journal of Educational Psychology, 62(6), 526-530.
5. Brutian, G. (2012). "Metaphilosophy in the Systems of Metatheories Metaphilosophy". In Metaphilosophy LLC and Blackwell Publishing Ltd, Volume 43, Issue 3, pages 294–305, April.
6. Evans, Rod L., Ph.D. (1956). "Thingamajigs and Whatchamacallits: Unfamiliar Terms for Familiar Things". A Perigee book published by the Penguin Group (USA), Inc., New York, USA.
7. Evans, Rod L. Ph.D. (2007). Every Good Boy Deserves Fudge: The Book of Mnemonic Devices. A Perigee book published by the Penguin Group, (USA), Inc., New York, USA.
8. Evans, Rod L. Ph.D. (2007). Every Good Boy Deserves Fudge: The Book of Mnemonic Devices. A Perigee book published by the Penguin Group, (USA), Inc., New York, USA.

Ակնհայտ է, որ անհրաժեշտ է աստիճանաբար սկսել *Փիլիսոփայություն* դասընթացի վերանայումը և դրա հարստացումը *Պատկերավոր փիլիսոփայության* ընձեռած միջոցներով:

9. Hovhannisyan, H. (2015). Meta-Argumentation as an Argumentation Metatheory. Meta-philosophy, Edited By: Armen T. Marsoobian; Online ISSN: 1467-9973; Volume 46, Issue 3, pp. 479-487, July 2015. <http://onlinelibrary.wiley.com/doi/10.1111/meta.12143/abstract>.
10. McDaniel, M. A., & Einstein, G.O. (1986). "Bizarre imagery as an effective memory aid: The importance of distinctiveness". Journal of Experimental Psychology: Learning, Memory, and Cognition, 12(1), pp. 54-65.
11. Robinson, D. & Groves, J. (2000). Edited by Ricchard Appignanesi. The Introducing... series and the ...For Beginners series of graphic guides covering key thinkers and topics in philosophy, psychology and science, politics, religion, cultural studies, linguistics and other areas. Books are written by an expert in the field and illustrated, comic-book style, by a leading graphic artist. USA.
12. Runes, Dagobert D. (1963). Pictorial History of Philosophy. Paterson, New Jersey. Littlefield, Adams & Co-Paterson.
13. Patton, W. W. (1991). "Opening students' eyes: Visual learning theory in the Socratic classroom". Law and Psychology Review, 15, pp. 1-18.
14. Plotnik, Rod H. K. (January 25, 2013). Introduction to Psychology, 10<sup>th</sup> Edition. Canada: Wadsworth Publishing, Cengage Learning.
15. Verdi, M., Johnson, J., Stock, W., Kulhavy, R., Whitman-Ahern, P. (1997). "Organized spatial displays and texts: Effects of presentation order and display type on learning outcomes".

- 
- Journal of Experimental Education, 65, pp. 303-317.
16. McDaniel, M. A., & Einstein, G. O. (1986). "Bizarre imagery as an effective memory aid: The importance of distinctiveness". Journal of Experimental Psychology: Learning, Memory, and Cognition, 12(1), pp. 54-65.
17. Verdi, M. P., Johnson, J. T., Stock, W. A., Kulhavy, R. W., Whitman-Ahern, P. (1997). "Organized spatial displays and texts: Effects of presentation order and display type on learning outcomes". Journal of Experimental Education, 65, pp. 303-317.
18. Светлов, В. (2010). История философии в схемах и комментариях. Питер, изд.-во СПб, Серия: Учебное пособие.
19. Сойер, У. (1972). Путь в современную математику. Москва, изд.-во «Мир». 200 с.
20. Зотов, А. (2001). Современная западная философия: учебное пособие с иллюстрациями. Москва, изд.-во «Проспект».
21. Иллюстрированный философский словарь (2004). Москва, изд.-во "Подарочные книги".

ՎԱՂ ՏԱՐԻՔՈՒՄ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ. ՊԱՏԿԵՐԱՎՈՐ  
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Կրթության գործընթացում *Պատկերավոր փիլիսոփայության* (իմաստասիրական տեսակետներ և պնդումներ արտացոլող նկարների, սխեմաների, մեղիա, վիդեո, ֆոտո միջոցների, PDF նյութերի և պատկերավոր վերլուծություն իրականացնող այլ հնարների) ներմուծումը խթանում է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների աշխարհայացքի, նրանց ինքնուրույն-ստեղծագործական մտածողության, ունակությունների, զգացումների ու գործողությունների, նրանց նախասոցիալական վարքի բարոյագիտական հիմքերի ձևավորումը: *Պատկերավոր փիլիսոփայությունը* նաև երեխայի փիլիսոփայական կրթության մեթոդաբանական հիմքերի, մանկավարժների մոտ երեխային *փիլիսոփայություն* սովորեցնելու կենսափորձի մշակման, մանկավարժին այդ գործին պատրաստելու գործընթացի արդյունավետությունը բարձրացնող կարևոր գործոն է:

Փիլիսոփայությունը երեխաներին հրամցելու համար անհրաժեշտ է բացահայտել փիլիսոփայական մտքի խորխորատները և փիլիսոփաների առօրյա խոսքի կամ սիմվոլիկ լեզվի բառապաշարների միջոցով արտահայտված դրույթները հարստացնել պատկերների լեզվով հաղորդվող տեղեկությի

միջոցով, այլ կերպ ասած՝ փիլիսոփայության լեզվի մեջ դեռևս չբացահայտված, իմպլիցիտ խնդիրները դարձնել բացահայտ, էքսպլիցիտ:

Փիլիսոփայության դասավանդման նկատմամբ այսպիսի մոտեցումը կարող է դառնալ կրթության կազմակերպման կարևոր եղանակ ու միջոց, և այդ նախագծի իրականացումը նպատակահարմար է սկսել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, Սկզբնական կրթության, Հատուկ կրթության և Պատմության և իրավագիտության (մասնագիտություն՝ Հասարակագիտություն) ֆակուլտետներում:

*Հանգուցային հասկացություններ. Պատկերավոր փիլիսոփայություն* դասընթաց, պատկերների լեզու, բնական և ձևական լեզու, տեքստի տեսողականացում (վիզուալիզացիա), տեքստի խոսքայնացում (վերբալիզացիա), կոնկրետի և վերացականի միասնություն:

## THE MECHANISMS OF FORMING AND DEVELOPING PHILOSOPHICAL THINKING SINCE EARLY CHILDHOOD: PICTORIAL PHILOSOPHY

### ABSTRACT

The import and usage of Pictorial Philosophy (pictures and schemes, media, video, photo effects, PDF materials and other methods of implementation of visual analysis) in the process of education, enhances and contributes to the formation of children's world view, the ethical basis of their pre-social behavior, independent and creative thinking. Pictorial Philosophy is also a vital tool for improving efficiency of teachers and instructors, their experience and teaching methods.

In order to adjust philosophy to children, it is necessary to fully understand the philosophical thought and simplify the symbolic language, by enriching it with the power of imagery, overall to explicate the implicit problems in philosophy.

This approach to teaching philosophy can become an essential way and means of organizing education. The implementation of this project is appropriate to start from Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan, particularly in the Faculty of Preschool Education, Faculty of History and Jurisprudence, and Faculty of Special Education.

*Key concepts: Pictorial Philosophy Course, imagery language, natural and formal language, text visualization, text verbalization, unity of concrete and abstract.*

Асмик ОГАНИСЯН

## МЕХАНИЗМЫ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ РАННЕГО ФИЛОСОФСКОГО МЫШЛЕНИЯ: ОБРАЗНАЯ ФИЛОСОФИЯ

### РЕЗЮМЕ

В процессе образования внедрение *Образной философии*, а также отражающих разные философские точки зрения и утверждения картинок и схем, медиа-, видео-, фотосредств, PDF материалов и других способов осуществления образного анализа способствует формированию мировоззрения детей, их предсоциального поведения и сочувствия, как этической основы оценки образования и становится механизмом, стимулирующим укрепление и контроль их самостоятельного мышления, способ-

ностей, чувств и действий, а также как важнейший фактор для разработки методологических основ философского образования детей и опыта педагогов в обучении детей *философии*, а также для повышения эффективности процесса подготовки педагога этому делу.

Для представления философии детям необходимо раскрыть глубины философской мысли и обогатить положения, выраженные при помощи обыденного языка философов или словарного запаса языка символов, через передачу



информации при помощи языка иллюстраций, иначе говоря, выявить, сделать эксплицитными доселе не выявленные, имплицитные проблемы в языке философии.

Такой подход к преподаванию философии может стать важным способом и средством организации образования, и осуществление этого проекта будет правильно начать в Армян-

ском государственном педагогическом университете имени Хачатура Абовяна.

*Ключевые понятия:* Курс Образной философии, язык изображений, естественный и формальный язык, визуализация текста, вербализация текста, единство конкретного и абстрактного.

## ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԿՈՒՐՄԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ (մեթոդաբանական դիտարկումներ)

«Մի խառնե՛ք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին ...»:  
Վահան Տերյան

«Հայաստան պետք եղած չափով չի հետաքրքրուիլ արտասահմանով»:  
Նիկողոս Մարաֆեան

Ինքնության խնդիրը դառնում է «հարցերի հարցը» ամեն անգամ, երբ որոշակի ակամա հոսանքից հետո կանգնում ենք քաղաքական կամ մշակութային ընտրության առջև, քանզի վարքի քիչ թե շատ ռացիոնալությունը ենթադրում է քայլերի հաջորդականություն ներսից դեպի դուրս: Մյուս կողմից, սակայն, «ներսը» ներս է այն չափով, որ չափով հարաբերված է դրսի հետ: Այլ կերպ՝ ներսի և դրսի սահմանագիծը առնվազն ակնառու չէ, ինչը ինքնությանը մոտենալու դեպքում նշանակում է կամ կարող է նշանակել, որ տվյալ պարագայում ռեդուկցիոնիստական դիրքորոշումը կամ, որ իմաստային առումով նույնն է, զուտ ընտրությունը հավերժ հետաձգվում է: Վիճակն է՛լ ավելի է բարդանում, երբ ի հայտ են գալիս քաղաքական և քաղաքակրթական մարտահրավերներ, որոնց ազդեցության ներքո մարդկային գործունեությունը դառնում է «բազմաձայն»՝ միաժամանակ լինելով տարբեր հարթություններում: Այս դիտանկյունից՝ ինքնությունն այն իդեալական ապաստարանն է, որը գտնելուց հետո բոլոր հարցերը, ըստ էության, լուծվում են կամ գոնե ստանում են լուծման բանալիները: *Ընդ որում, ինքնության յուրահատկություններից մեկն այն է, որ մտածվում է ոչ թե հենց ինքը,*

*այլ իր բացակայությունը:* Այսինքն, ինքնության մասին խոսակցությունները սովորաբար սկսվում են դրա ճգնաժամի մասին խոսակցություններից: Այդօրինակ բանախոսությունները յուրօրինակ տազնապի վկայությունն են, որն էլ իսթան է դառնում սեփական գիտակցության մեջ առկա մտածական իրողությունների վերբալացման համար: Մառը պատերազմի ավարտից հետո ձևավորված ինքնության դիսկուրսները անգամ մակերեսորեն այժի անցկացնելով՝ պարզ է դառնում նմանատիպ տազնապների առկայությունը: Ինչպես նշում է Հանթինգտոնը, ինքնությունն ունի մի քանի մակարդակներ՝ անհատական, ազգային և ամենալայնը՝ քաղաքակրթական (տե՛ս, Huntington 1993: 24): Նրա համոզմամբ՝ հետզհետե առավել կարևորվելու է վերջինը, քանի որ «մեծ կայսրությունների» (Խորհրդային Միության և ԱՄՆ-ի ու իր դաշնակիցների) փլուզումից հետո երկրների առջև ծառայավ այս կամ այն քաղաքակրթությանն անդամակցելու խնդիրը: Բայց այստեղ մեթոդաբանական մի նրբություն կա. տվյալ դեպքում գործ ունենք երկու տարբեր հարցերի հետ: Այսպես, «ո՞վ եմ ես» հարցը կարող է դրվել տարբեր միջավայրերում և համատեքստերում. Խոսքը, մասնավորապես, անհատական և ազ-

գային (հավաքական) գիտակցությունների մասին է, տվյալ պարագայում՝ դրանց հակադրման: Առաջին դեպքում վերոնշյալ հարցը, որ անկախ արտաքին ազդակներից, կարող է անընդհատ հոլովվել, ըստ էության, միտված է սեփական էաբանական հիմքերի որոնմանը: Այսինքն, այստեղ գործ ունենք «ինքնության» «ուրիշից տարբերվելու, հենց ինքը լինելու» իմաստի հետ (Ego, Ich, Self և այլն) (տե՛ս, Ոսկանյան 1995թ. 11): Հավաքական գիտակցության դեպքում ինքնության նկատմամբ անդրադարձերը որպես կանոն վերաբերում են ինքնության կենտրոնացում-խտացմանը՝ շեշտելով դրա նույնությունը կամ նույնականությունը (տե՛ս, նույն տեղում) և պատասխանում են «ու՞ր եմ գնում կամ ու՞ր պետք է գնամ» հարցին: Դրանք, անշուշտ, կարող են խաչավորվել թե՛ բուն հարցերի, թե՛ մակարդակների (գիտակցությունների) առումով: Այս երկու խնդիրների տարանջատումը կարող է մեթոդաբանական կարևոր նշանակություն ունենալ ինքնության դիսկուրսի ըմբռնման համար: Օրինակ՝ Թուրքիան այդօրինակ «տարանջատ քաղաքականության» վառ դրսևորում է մինչ Աթաթուրքը Թուրքիայի համար կանխատեսելի էր իր ապագան, քանի որ մակաբերելի էր իր անցյալից (ինքնությունից): Աթաթուրքից սկսած՝ Թուրքիան մտահոգվում է «դեպի ուր գնալու» կամ նույնականության հարցերով:

Միջնորդավորվելով վերը ներկայացված սկզբունքից՝ հարկ է նշել, որ հայ իրականության մեջ հաճախ այդ երկու դիտանկյունները չեն տարանջատվել: Այլ կերպ՝ թերացում է նկատվել մտածական այն երևույթի գիտակցման հարցում, որ «ազգային կերտվածքը՝ ինքնությունը, ոչ միայն շնորհ է, այլև *առաջադրանք*» (Ոսկանյան 1995ա. 8):

Որպես բնաբան ներկայացված Տերյան-Սարաֆեան դեմահանդիմանությունը այդօրինակ երկվության յուրօրինակ արտահայտություն է: Անդրադառնալով հայ ազգային ինքնությանը՝ կարելի է ասել, որ մեր դիսկուրսներում գերակշռող է եղել հենց տերյանական հղացքի մտածումը: Հայոց ողբը՝ Մովսես Խորենացու աշխատության մեջ արդեն տեսականացված, մտահայել է հայոց ինքնության հիմնական էատարրերի կորուստը: «Հայոց ողբի գործառույթով ... ինքնորոշվել է ինքնարարող հայ հանրույթը որպես համասեր, համալեզու հավաքական ընկերային հոգեբանության տեր մարդկանց միություն» (Սարգսյան 2002. 61): Ասվածի լավագույն հիմնավորումը Եղեռնի շուրջ հայ հավաքականության շարունակական ներկայությունն է. ողբի լինելիության յուրօրինակ «գազաթնակետ», որով թլպատվեց ոչ միայն հայ գիտակցությունը, այլև հայկականությունն առհասարակ:

Ինքնության և, մասնավորապես, ազգային ինքնության մտածումի երկու դիտանկյունների գիտակցումը հնարավորություն կտա հասկանալ Տերյան-Սարաֆեան երկվությունը: Ինքնությունն անհրաժեշտորեն առկա է երկու հարթություններում՝ ժամանակային և տարածական: Ժամանակային կտրվածքով ինքնությունը իր կրողի (ազգային ինքնության դեպքում՝ ազգի) պատմությունն է: Այս դիտանկյունից՝ ինքնության ճգնաժամը, տագնապը, ըստ էության, պատմության մեղամաղձությունն է, պատմությունը կրելու և պահպանելու բաղձանքը, քանի որ մի ինչ-որ առումով ինքնությունը միշտ պատմական է (պատմողակա՞ն): Ասել է թե՛ պատմության հետ կապված բնագանցական և ճանաչողական խնդիրների պարագայում է գլուխ բարձրացնում ինքնության հարցը: Սեփական պատ-

մութունից օտարումը վկայում է ինքնության կորուստը կամ մեկ այլ ինքնության հետ նույնականացման միտումը: Եթե պատմության տեսանկյունից մոտենանք խնդրին, կարելի է իրողությունը ձևակերպել այսպես. *եթե ապրողը սկսում է փորփրել պատմությունը, ուրեմն խնդիր կա ներկայի հետ*: Տեղյանական «մի խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին»-ը, ըստ էության, պատմական բողոք է ինքնության կորստի դեմ: Ինչպե՞ս կարելի է խառնել «անխառնելին»: Եվ ինչպե՞ս է հնարավոր սեփական ինքնության մինչև վերջ չորոշարկման առնչությամբ օտարին մեղադրանք առաջադրելը: Եթե կարելի է ներս մտնել, ուրեմն ներսում տեղ կա: Ուստի եթե քեզ շփոթելը բացավեր, չէր լինի նաև չշփոթելու բարձրաձայն կոչ: Այնպես որ, Տեղյանի բանաստեղծական տողն ուղղորդված է ոչ թե դեպի դուրս, այլ ներս. այն մտածելի է դառնում սոսկ իբրև ներանձնախոհական սևեռում, իբրև ահագանգ ինքնության վտանգվածության վերաբերյալ:

Մյուս կողմից՝ ինքնությունը միշտ ներկայանում է այստեղ և հիմա՝ որոշակի տարածության մեջ՝ որպես յուրահատուկ գործառության ինքնակարգ: Այսինքն, ինքնությունը այն հիմքն է, որով պայմանավորվում է տվյալ հանրության գոյության կերպը՝ կախված ինքնության մշակութային տրոն, ազգակենտրոն կամ պետականակենտրոն լինելուց: Հայրենիքը հենց ինքնության առկայացումն է: Իսկ քանի որ ինքնության լինելիությունը հարատև գործընթաց է, ուրեմն հայրենիքը ևս հնարավոր չէ ամրագրել մեկընդմիջտ: Այլ կերպ՝ հնարավոր չէ ցուցադրել «մերկ» ինքնությունը, այլ միայն դրա, այսպես ասած, իմպուլսը, ինչպես որ անհնար է եռաչափորեն նկարագրել հայրենիքը (այս առթիվ տեղին է վերհիշել գերմանացի ռոմանտիկներին):

Ինքնության «ընթացքը» պատմության հոլովություն մնում է ինտերցիայի հույսին, եթե չի լեզվափոխվում: Ահա հենց լեզվափոխվումն է, որ ինքնության շուրջ մտածումները պիտի «ավագանի» ու առանցք սարքի: Սա նշանակում է, որ ինքնությունը ես-ի կազմակերպման էատարների համակարգն է՝ գումարած *պատումը դրա մասին*: Պատումը ինքնության պատմության հոլովության ինչ-որ կտրվածքի վերբալացումն է և արդիականացումը: Ինքնության լեզվափոխումը հենց այդ պատումի լեզվափոխումն է: Եվ, ուրեմն, ինքնության շարունակականությունն ապահովող որևէ քաղաքական ճակատագրի ընտրությունը ենթադրում է որոշակի քաղաքական առասպելի կամ պատումի առկայություն: Եղե՞նք, որ նոր պատում դարձավ հայ իրականության մեջ և հայի ինքնության տարր դարձավ, յուրօրինակ փորձաքար եղավ, օրինակ, Տիգրան Մեծի առասպելի շարունակության կամ ընդհատման համար: Նիկողոս Սարաֆեանի՝ այստեղ որպես բնաբան ներկայացված միտքը կոչ է՝ մտանցել այդ երևույթը և, օգտագործելով հայ ինքնության տարածական նոր կերպի՝ սփյուռքի լինելիությունը, կառուցել հոգեվերանորոգված քաղաքական ճակատագիր: 1927 թ. «Փոխում են դարերը» էսսեում Սարաֆեանը գրում է. «Հայկական հագուստներով, լեռներով, գիւղերով, երգերով, վանքերով չէ միայն որ գրականութիւնը պիտի ըլլայ ազգային: Նիւթը ընդհակառակն աւելի հետաքրքրական է հիմա եւ տիեզերական. – Հայը երկրագունտին վրայ: Թող ըլլան դարձեալ հայրենիք երգողներ, հին պանդուխտներուն պէս, թող ըլլան տիրացուներ, պլպուլի ու վարդի երգիչներ, բայց անոնց քով ըլլան

մանաւանդ սանձարձակ անհատներ: Մեր ազգային փրկութիւնը պիտի գայ այս վերջիններէն: Թող գլորին անոնք, երկիրէ երկիր, խոշորնան ու սպառնական դառնան, ինչպէս լեռներէն գահավիժող ձիւնակոյտերը: Թող նետուին անոնք, անվախ՝ հայրենական տունէն դուրս՝ անառակ տղուն պէս: Աւելի տոկուն պիտի ըլլան անոնք, ապագային ու աւելի բարձր՝ քան տունը մեծցող անփորձ, ճղճիմ եւ շփացած տղաքը» (Սարաֆեան 1994. 14):

Ինքնանդրադարձելով ստացվում է, որ հայ ինքնությունը, նախնառաջ, կայանում է պատումներում, որոնց հիմքը հայագիտությունն է (տե՛ս, Թորոսյան 2006. 8-12): Գր. Պըլտեանի ձևակերպմամբ՝ «ինքնութեան տագնապը է նաեւ գերազանցապէս գրական տագնապ» (Պըլտեան 2002. 93): Գրականությունը և հայագիտությունը առհասարակ միջոց են (թերևս եզակի)՝ կոորդինացնելու ինքնության ժամանակա-

յին և տարածական չափումները: Ինքնության տարածական չափման լեզվաբանական հետ կապված խնդիրն այն է, որ այդ հարթության մեջ փաստարկող բոլոր կողմերը հանդէս են գալիս ազգի, հայրենիքի կամ պետության անունից, ինչի հետևանքով վերջիններս հետզհետեւ ավելի «ոճվար բռնելի» են դառնում (ի դեպ, այդ իրավիճակի «գոհն» է նաև «Գարեգին Նժդեհ» երկույթը): Գրականությունը (հայագիտությունը) այն լեզուն է, որը կարող է դիսկուրսը տեղափոխել այլ մակարդակ՝ զանցելով երկարժեքությունը (ազգին կողմ կամ դեմ): Ի դեպ, նմանօրինակ նախապաշարմունքներից է Հայաստանի առջև կանգնած Ռուսաստան-Եվրոպա «միակողմանի առասպելը»՝ մոռացության թողնելով ԱՄՆ-ի, Իրանի, Չինաստանի հնարավորությունները (տե՛ս, Թորոսյան 2006. 13): Մինչդեռ որքան հնչել ու մեծ լինեն առասպելները, այնքան հաստատուն կլինի դրանց կենսակերտ ուժը:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թորոսյան, Տ. (2006): Ինքնության պահպանման խնդիրը տրանսֆորմացիայի գործընթացում // Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 2006, №1, էջ 5-23:
2. Մարգարյան, Մ. (2002): Ազգային մտահայեցողություն և ինքնակառավարում (հետազոտական ուրվագիծ) // Ստեփանյան Ա. (խմբ.), Ինքնության հարցեր: Երևան:
3. Ոսկանյան, Ա. (1995ա): Նախաբան // Ինքնություն: Եր., «Կամար»:
4. Ոսկանյան, Ա. (1995բ): Ազգային ինքնության հիմնահարցը և մտավորականության կոչումը // Ինքնություն: Եր., «Կամար»:
5. Պըլտեան, Գ. (2002): Ինքնութեան փորձառուին Սփիւռքի մեջ // Ստեփանյան Ա. (խմբ.), Ինքնության հարցեր: Երևան:
6. Սարաֆեան, Ն. (1994): Տեսարանները, մարդիկ եւ ես: Երևան:
7. Huntington, S. (1993). The Clash of Civilizations? // Foreign Affairs; Summer 1993; 72, 3.

## ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ (մեթոդաբանական դիտարկումներ)

### ԱՄՓՈՓՈՒՄ

Ինքնության խնդիրը դառնում է ամենակարևոր հարցը, երբ ստիպված ենք լինում քաղաքական կամ մշակութային ընտրություն կատարել: Վիճակն ավելի է բարդանում, երբ ի հայտ են գալիս քաղաքակրթական մարտահրավերներ, որոնց ազդեցության ներքո մարդկային գործունեությունը դառնում է պլուրալիստական, այսինքն՝ ձեռք է բերում տարբեր ուղղություններ: Այս առումով ինքնությունն այն իդեալական հենքն է, որը գտնելուց հետո մարդու գործունեության հետ կապված բոլոր հարցերը, ըստ էության, լուծվում են կամ գոնե ստանում են լուծման բանալիները: Ընդ որում՝ ինքնության յուրահատկություններից մեկն այն է, որ մտածվում է ոչ թե հենց

ինքը, այլ իր բացակայությունը: Այսինքն, ինքնության մասին խոսակցությունները սովորաբար սկսվում են դրա ճգնաժամի մասին խոսակցություններից:

Ընդ որում՝ հարկ է նկատել, որ հայ իրականության մեջ հաճախ ինքնության հարցը դիտարկվել է մի դիտանկյունից, այն է՝ որ ազգային ինքնությունը լոկ պարզն է: Թեև շատ ավելի կարևոր է այն գիտակցել իբրև առաջադրանք: Եվ միայն այդ ըմբռնումն է, որ հնարավորություն կտա առաջ շարժվել:

*Հանգուցային հասկացություններ.* ինքնություն, նույնականացում, ես, պատմություն, դիսկուրս:

*Davit MOSINYAN*

## THE PERSPECTIVES OF THE IDENTITY DISCOURSE (methodological observations)

### ABSTRACT

The identity issue is becoming the most important problem when we are forced by political or cultural choice. The situation is further complicated when there are civilizational challenges under the influence of what human activities become pluralistic, i.e. get different dimensions. From this point of view, the

identity is an ideal base, after finding of what all other aspects of human activity, in fact, are solved or at least get the keys to the solution. Meanwhile, one of the outstanding features of the identity is that one does not meditate on identity, but rather on its absence. In other

words, the conversations about identity usually start with the crisis of identity.

Moreover, it should be noticed that the issue of identity is often considered as if the national identity is nothing more than a gift. While, it is more important to realize it as a

task. And only this consideration will give an opportunity to move forward.

*Key concepts:* identity, identification, I, history, discourse.

*Давид МОСИНЯН*

## ПЕРСПЕКТИВЫ ДИСКУРСА ИДЕНТИЧНОСТИ

(методологические замечания)

### РЕЗЮМЕ

Проблема идентичности становится наиболее важным вопросом, когда мы вынуждены делать политической или культурной выбор. Ситуация осложняется, когда есть цивилизационные вызовы, под влиянием которого деятельность человека становится плюралистической, т.е. приобретает разные измерения. В связи с этим, идентичность является той идеальной базой, выявляя чего все вопросы, касающиеся человеческой деятельности, на самом деле, решаются или, по крайней мере, получают ключи к решению. Между тем, одна из особенностей идентичности состоит в том, что человек вдумыва-

ется не в идентичности, но, скорее, в его отсутствие. Иными словами, разговоры о личности, как правило, начинаются о кризисе идентичности.

При этом, следует отметить, что вопрос о личности в наших кругах часто обсуждается с одной точки зрения, а именно, что национальная идентичность не более, чем награда. Хотя более важно осознать идентичность как задачу. И только это понимание даст возможность двигаться вперед.

*Ключевые понятия:* идентичность, идентификация, я, история, дискурс.

## ՀԱՄԿԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԱՆՅՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Եթե մարդիկ այսօր ստույգ պատկերացնեին, թե ինչպես են իրենք մտածում, իսկ մասնագետները ձևակերպեին մարդկային մտածողության համապատասխան քայլերի ստույգ հաջորդականությունը (ալգորիթմը), ապա մի քանի օրից մենք կունենայինք բազմաթիվ ու բազմապիսի ինքնուրույն մտածող համակարգիչներ: Դրա համար ընդամենը կպահանջվեր մտածողության ալգորիթմը վերածել համակարգչային ծրագրի, որպիսի ինդիքն այսօր իրենից լուրջ դժվարություն չի ներկայացնում: Ինչպես որ համակարգիչների ստեղծումը առաջացրեց տեղեկատվական տեխնոլոգիաների հեղափոխության հզոր ալիք, այնպես էլ ինքնուրույն մտածող համակարգիչների ստեղծումը հասարակության արտադրողական կարողությունների ոլորտում մինոր, աներևակայելի հեղափոխություն կառաջացնի: Տարօրինակն այն է, որ այսօրվա համակարգիչներով գերհագեցած աշխարհում կարծես թե ինքնուրույն մտածող համակարգիչների պահանջը չի զգացվում: Պարզենք այս իրավիճակի հիմքերը:

Անգլիացի հայտնի տրամաբան Ստենլի Ջևոնսը 19-րդ դարի կեսին կարողացավ մշակել մտահանգումների այնպիսի պարզ տեսություն, որ նա շուտով ստեղծեց մտահանգումներ կատարող մեխանիկական սարք (Джевоис 1881): Քանի որ մտահանգելը մտածողության անհրաժեշտ ու կարևոր կողմերից մեկն է, ապա միանգամայն արդար կլինի Ստենլի Ջևոնսի մեխանի-

կական սարքը ընդունել որպես աշխարհում առաջին մտածող մեքենա: Ես դա առաջարկում եմ հատուկ գոհունակությամբ, քանի որ 1973 թ. ստացել եմ Խորհրդային Միության № 383052 «Տրամաբանական մեքենա» արտոնագիրը, որտեղ ես որոշ չափով բարելավել եմ Ս.Ջևոնսի մտահանգող սարքը (տե՛ս ДжиДжян 2013):

«Մտածող մեքենաներ» ստեղծելու հաջորդ քայլը կատարել է անգլիացի գիտնական Չարլզ Բեբիջը (1791-1871)՝ առաջադրելով մեքենայական հատուկ ծրագրի միջոցով հաշվարկներ կատարելու գաղափարը, որն էլ ժամանակակից համակարգիչների աշխատանքի հիմնական սկզբունքն է: Երկարատև աշխատանքի արդյունքով 19-րդ դ. կեսին նա վերջապես կառուցեց իր հաշվիչ մեքենան, որը, ցավոք, այդպես էլ չկարողացավ հաշվարկներ կատարել: Եվ դա զարմանալի չէ, քանի որ այն պարունակում էր 8000 մեխանիկական մասնիկ և կշռում էր 5 տոննայից ավելի:

Խելացի մեքենաներ ստեղծելու պատմության նոր փուլը սկիզբ առավ 1950-ական թթ. ծրագրավորվող էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ստեղծման և արդյունավետ օգտագործման ազդեցության ներքո: Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների առկայությունը արմատապես փոխեց «մտածող մեքենաների» ստեղծման հետազոտությունների բնույթը: Այժմ ավելորդ էր մտածել հատուկ կառուցվածքի մեքենայի նախագիծ մշակելու մասին: Խնդիրը վերաձևակերպ-



վեց այսպես. մշակել էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար այնպիսի հատուկ ծրագիր, որի միջոցով նրանք կարողանան ինքնուրույն լուծել ցանկացած մտավոր խնդիր: Երբ Ալեն Նյուելը և Հերբերտ Սայմոնը հրատարակեցին (Newel, Simon 1956; 1961) իրենց առաջին հոդվածները GPS (General Problem Solver՝ Համընդհանուր խնդիր լուծող) ծրագրի վերաբերյալ, թվում էր, թե վերջապես խելացի հաշվիչ մեքենաների ստեղծման խնդիրը ստացել է իր սկզբունքային լուծումը: Այդ տպավորությանը մեծապես նպաստեց ոչ միայն նոր ծրագրի անվանումը, այլև հոդվածի գիտական արդյունքը: Հեղինակները համոզված էին, որ իրենց ծրագրի ռազմավարությունը հնարավորություն է տալիս էլեկտրոնային հաշվիչ մեքենաներին ինքնուրույնաբար լուծելու խնդիրներ այնպիսի տարբեր ոլորտներում, որպիսիք են մաթեմատիկական տրամաբանությունը, երկրաչափությունը, շախմատը: Նրանք այնքան էին ոգևորվել ստացված արդյունքներից, որ պլանավորում էին իրենց ծրագիր կիրառել նաև գիտական հայտնագործությունների և տեխնիկական գյուտերի ոլորտում: Իսկ լայն հասարակայնությունը համոզված էր, որ երկու տասնամյակից ավելի ժամանակ չի պահանջվի, որպեսզի խելացի մեքենաների խնդիրը ստանա իր գործնական լուծումը:

Սակայն շուտով պարզվեց, որ խնդիրների լուծման GPS ծրագրի հեղինակների կողմից օգտագործվող եղանակն իրականում համընդհանուր չէ: Ասույթների հաշվի բանաձևերը ապացուցելիս նրանք մտցնում էին մի շարք լրացուցիչ հատուկ պահանջներ («էվրիստիկաներ»), իսկ այլ բնագավառի, ասենք, շաշկի խաղալու համար՝ այլ էվրիստիկաներ: Ամենատարօրինակն այն էր, որ հարց էլ չէր դրվում, թե արդյո՞ք մտա-

ծողության ծրագրեր մշակողներին հայտնի է մտածողության ընդհանուր ալգորիթմը: Զարմանալի է, թե ինչպես կարող էին մտադրվել մշակել «մտածող» ծրագիր՝ հստակ չպատկերացնելով մտավոր խնդիրների լուծման գործընթացի քայլերը: Հավանաբար, ինչ-որ բացահայտորեն չարտահայտված տարբերակով ենթադրվում էր, որ բոլոր առաջացող դժվարությունները կհաղթահարվեն էլեկտրոնային հաշվիչ մեքենաների հաշվարկներ կատարելու հզորության հաշվին: Պատկերացնենք, որ շախմատի խաղի տվյալ ծրագիրը շատ պարզունակ է, հաշվի չի առնում լավ խաղ ցուցադրելու համար կարևոր կողմերը: Փոյթ չէ, հաշվիչ մեքենան յուրաքանչյուր դիրքում կկարողանա իր կայծակնային արագության շնորհիվ բոլոր հնարավոր քայլերից ընտրել լավագույնը: Սակայն պարզվեց, որ նույնիսկ շախմատային խաղում՝ մտածելու փոխարեն հաշվարկներ կատարելու այդ պարզունակ ռազմավարությունը իրեն լրիվ չի արդարացնում:

Մոտ ապագայում մտածող մեքենաների ստեղծման լավատեսական մթնոլորտին նպաստում էր նաև այն հանգամանքը, որ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների նախագծումը կատարվում էր նոր, չափազանց խոստումնալից գիտության՝ *կիբեռնետիկայի* շրջանակներում: Կիբեռնետիկան սկիզբ առավ որպես ավտոմատ կառավարման համակարգերի ոլորտ: Քանի որ կառավարման հիմքում տեղեկատվության մշակումն է, ապա տեսական կիբեռնետիկայի մասնագետների կողմից մշակվեց ինֆորմատիկայի տպավորիչ տեսություն: Բայց անցյալ դարի 70-ական թթ. «մտածող մեքենաների» ստեղծման երազանքը այդպես էլ չիրականացավ: Հասարակությունը շատ արագ ընտելացավ էլեկտրոնային հաշվիչ

մեքենաներին, իսկ կիրթոնետիկան ոչ մի այլ տպավորիչ արդյունքի չհասավ: «Մտածող մեքենաների» ստեղծման անցյալի լավատեսական խնդրակարգից մեզ ժառանգվեց «արհեստական ինտելեկտի» (artificial intellect) թեմատիկան, որը, ցավոք, արդեն երկար ժամանակ ստվերում է գտնվում:

Արդեն Ա.Նյուելը և Հ.Սայմոնը շատ արագ զգացին, որ «զուտ ինտելեկտի», խնդիրների լուծման ասպարեզում դժվար է որակապես նոր ծրագրեր մշակել: Փոխարենը լայն ասպարեզ բացվեց հոգեբանական բնույթի այնպիսի ֆենոմենների համակարգչային մոդելավորման համար, որպիսիք են կարդալը, գրելը, ղեկավարումը, որոշումների ընդունումը, ինտելեկտուալ խաղերը: Հոգեբանականի ոլորտում չափանիշների մոտավոր բնույթի պայմաններում համակարգչային մոդելավորման ցանկացած արդյունք հնարավորություն էր տալիս մշակելու բազմապիսի նոր հայեցակետեր, որն էլ հույս էր ներշնչում, որ հետագայում այդ արդյունքների ընդհանրացման ուղիով կհաջողվի հասկանալ եթե ոչ ռացիոնալ մտածողության էական հատկանիշները, ապա գոնե մարդկային հոգեբանության գաղտնիքները: Բնական է, որ պարզունակ մոդելների միջոցով անհավանական էր, որ հետազոտողներին հաջողվեր բացահայտել մարդկային հոգու բարդ ու նուրբ մեխանիզմները: Մյուս կողմից՝ հոգեբանական երևույթների մոդելավորման ակտիվ աշխատանքներն օգնեցին մոռանալ բուն արհեստական ինտելեկտի ստեղծման հետ կապված դառն անհաջողությունը: Դեռևս 1971 թ. Ֆ.Հեյես-Ռոթը ստիպված էր արձանագրել, որ հասարակությունը կորցրել է հետաքրքրությունը «Կարո՞ղ են արդյոք մեքենաները մտածել» բանավեճային հարցի հանդեպ (Hayes-Roth 1971):

Այդուհանդերձ, ընդհանուր գիտական առումով այս սկզբունքային կարևորության խնդրի հանդեպ առաջացած անտարբերության մթնոլորտում հասարակական կյանքի պահանջմունքների թելադրանքով արհեստական ինտելեկտի հետ անմիջականորեն առնչվող մի շարք բնագավառներում հաջողվեց հասնել փայլուն արդյունքների: Ես նկատի ունեմ այսպես կոչված «էքսպերտային» սարքերի ստեղծումը, որոնք հնարավորություն տվեցին ավտոմատ եղանակով լուծելու այնպիսի բարդ խնդիրներ, ինչպիսիք են հիվանդությունների ախտորոշումը, օդանավակայանների չվերթների ղեկավարումը և նման կարգի կոնրկրետ, բայց կարևոր ու բարդ գործնական խնդիրներ: Նման կարգի առաջադրանքներն այնքան բարդ են, իսկ ղեկավարման օբյեկտներն էլ՝ որոշակի սահմաններում փոփոխական, որ դրանց լուծումը հնարավոր է միայն որոշակի մոտավորությամբ: Ընդ որում անհրաժեշտ է լինում նախատեսել ստեղծված համակարգի աշխատանքի մշտական բարելավման հնարավորությունը համապատասխան փորձի կուտակմանը զուգընթաց:

Սկզբնական շրջանում շախմատային ծրագրերը նույնպես փորձում էին մշակել էքսպերտային եղանակով՝ ձգտելով պարզել, թե որակյալ շախմատիստներն ինչպես են կատարում «լավ քայլերի» ընտրությունը: Բայց երբ համակարգիչների կողմից շախմատային դիրքերի գնահատման արագությունը անցավ մեկ միլիոն դիրք վարկյանում սահմանը, պարզվեց, որ համակարգչի համար ավելի հարմար է *բոլոր հնարավոր դիրքերը գնահատելով* խաղալ, քան թե խաղալ մտածելով ու հասկանալով: Իսկ երբ դիրքի գնահատման արագությունը հասավ մեկ վարկյանում 100 միլիոնի, համակարգիչները սկսեցին հաղթել շախմատ

տային խաղի լավագույն վարպետներին: Աշխարհի չեմպիոն, հանճարեղ շախմատիստ Գարի Կասպարովը 1997 թ. պարտություն կրեց Դիպ Բլու շախմատային ծրագրից:

Զուտ հաշվարկների արագության վրա հիմնված շախմատային ծրագրերի սենսացիոն հաջողությունը ևս մի լուրջ հարված էր արհեստական ինտելեկտի մշակման հեռանկարներին: Շախմատի խաղն իր բարդության, անսահման քանակով տարբերակների, գեղեցիկ գոհաբերությունների, սկզբնախաղերին վերաբերող սիստեմատիկ գիտելիքների անհրաժեշտության շնորհիվ միշտ դասվել է ինտելեկտուալ զբաղմունքի շարքերում: Եվ երբ մասնագետները սկսեցին մշակել շախմատի խաղի համակազմային ծրագրեր, այն տրամադրությունը ձևավորվեց, որ դա էլ լավագույն ուղին է ինչպես շախմատի միջոցով մարդկային մտածողությունը մոդելավորելու նպատակին հասնելու, այնպես էլ բուն մտածողության մեխանիզմը բացահայտելու համար: Ցավոք, համակազմիչների արագ հաշվարկներ կատարելու տեխնիկական կարողության ֆանտաստիկ առաջընթացը ավելորդ դարձրեց մտածողության կարողությամբ նրանց զինելու խնդիրը:

Այս կապակցությամբ փիլիսոփայորեն տրամադրված մարդկանց մոտ հարց է առաջանում. «Եթե մեքենան, համակարգիչը մարդուն հավասար ինտելեկտուալ խնդիր է լուծում, արդյո՞ք դա չի նշանակում, որ այդ սարքը մտածում է»: Հարցի պատասխանը բացասական է: Իրոք, թվաբանական հաշվարկներն ինտելեկտուալ գործողություններ են, բայց ոչ մեկի մոքով չի անցնի մեխանիկական հաշվիչը (арифмометр-ը) անվանել մտածող մեքենա: Սրելով իրավիճակը, արհեստական ինտելեկտի անզլիացի

հայտնի մասնագետ Ալան Տյուրինգը առաջարկեց հարցի հետևյալ ձևակերպումը: «Դիցուք հարևան սենյակում մի մարդ ու մի «խելացի» մեքենա են գտնվում, որոնք միաժամանակ պատասխանում են մեր հարցերին: Ի՞նչ հարցի միջոցով է հնարավոր որոշել, որ պատասխանողը մեքենա է, մարդ չէ»: Տյուրինգի հարցադրումը փաստորեն ենթադրում է, որ եթե մեքենան կարողացավ հարցերին մարդուն հավասար պատասխանել, ապա մենք պարտավոր կլինենք նրան ընդունել որպես մտածող էակ:

Տյուրինգի հարցադրումը երևի այնքան էլ նշանակալից չէ: Արդեն арифмометр-ի օրինակից մենք կարող ենք եզրակացնել, որ մտածողությամբ օժտվածությունը որոշվում է ոչ թե հարցի ճիշտ պատասխանով, այլ այն ուղիով, որով ստացվել է պատասխանը: Ավելի կոնկրետ, հարցին պատասխանողն օժտված է մտածողությամբ, եթե նա *հասկանում է* հարցը և հասկանալով է որոնում տրված հարցի պատասխանը: Ցավոք, ժամանակակից համակարգիչները ոչինչ չեն հասկանում: Համակարգիչները ոչինչ չեն հասկանում նույնիսկ այն բնագավառում, որտեղ փայլուն լուծում են իրենց առաջադրված խնդիրները: Ժամանակակից համակարգիչները մեխանիկորեն կատարում են այն քայլերը, որոնք նրանց պարտադրում է կատարել իրենց ծրագիրը: Համակարգիչների արտադրության գիտությունում ու տեխնոլոգիայում ընդհանրապես բացակայում է *հասկանալ* տերմինը:

Հաշվի առնելով, որ հասկացման խնդիրը դեռևս լուծված չէ արհեստական ինտելեկտի մասնագետների կողմից, Տյուրինգի «խելացի» մեքենային կարելի է անելանելի վիճակի մեջ դնել ցանկացած պարզ հարցով, որը, սակայն, պահանջում է հասկացման բավականին բարձր մակարդակ: Օրինակ՝

կարելի է Տյուրինգի սենյակում գտնվող մարդուն և համակարգչին պատմել մի նոր անեկդոտ և հարցնել, թե այդ անեկդոտում ի՞նչը նրանց թվաց զվարճալի: Համոզված եղեք, որ դուք միանգամից կզգաք, թե որն է մեքենայի պատասխանը:

Խնդիրների լուծման համընդհանուր  
ալգորիթմը

Բայց ո՞րն է *հասկանալ* հասկացության ճշգրիտ իմաստը: Եվ արդյո՞ք հնարավոր է ստեղծել հասկացող համակարգչային ծրագրեր, «իսկականից» մտածող մեքենաներ: Այս հարցերը մենք կքննարկենք սվյալ հոդվածի հաջորդ բաժնում: Իսկ այժմ մենք կանցնենք արհեստական ինտելեկտի առանցքային կետին՝ ինտելեկտուալ խնդիրների լուծման ալգորիթմին:

Կրկնենք արհեստական ինտելեկտ ստեղծելու ռազմավարության իմ ըմբռնումը. նախ պետք է մշակել ինտելեկտուալ խնդիրների լուծման հնարավորին չափ համընդհանուր ալգորիթմ, որի հենքով կառուցված ծրագիրն օժտված լինի մտածելու, առաջադրվող խնդիրներն ինքնուրույն լուծելու կարողությամբ: Խնդիրների լուծման տեսությանը նվիրված գրականությունը անեկբայորեն համոզում է, որ ցանկացած ինտելեկտուալ խնդիր լուծվում է երկու հիմնական փուլով՝ խնդրի *վերլուծություն* և լուծման գաղափարի *համադրություն* (վերջինս հաճախ նշում են գաղափարների *զեներացիա* տերմինով):

Այս ուղղությամբ կատարված աշխատանքի շնորհիվ մեզ հաջողվեց խնդրի վերլուծությունը ներկայացնել որպես համապատասխան *ենթաքայլերի հաջորդականություն* (Djidjian 2004): Որոշակի կոնկրետացումներ բացահայտվեցին նաև խնդրի լուծ-

ման գաղափարի համադրության հետ կապված: Բացահայտվեցին երեք կանոններ, որոնցից մեկը հնարավորություն է տալիս խուսափել «ոչ խելացի» գաղափարներ առաջադրելուց, իսկ մյուս երկուսն օգնում են «խելացի» ու «շատ խելացի» մտահանգումներ կատարելուն (տե՛ս սույն հոդվածում):

Հիշեցնենք նաև, որ խնդրի վերլուծության հիմնական քայլերը դիտարկելիս մենք ցուցադրել ենք, որ խնդրի արդյունավետ լուծման տեսակետից այդ քայլերն անհրաժեշտ են, իսկ քայլերի հաջորդականությունը՝ պարտադիր: Կարևոր է նաև այն եզրակացությունը, որ խնդրի լուծման գաղափարն առաջադրվում է միայն մեկ եղանակով՝ նման խնդրի լուծման համանմանությամբ (Джиджян 1984): Վերջին երկու հանգամանքները մեզ հուշում են խնդրի վերլուծության քայլերը և լուծման գաղափարի համադրության քայլերը միացնել խնդրի լուծման քայլերի մեկ միասնական հաջորդականության մեջ, որը մեզ կտրամադրի *ցանկացած խնդրի լուծման որոնման համընդհանուր և առավել արդյունավետ սխեմա*: Քանի որ մեր սխեմայի քայլերը բավականաչափ մանրամասն են ու պարտադիր, և ես մեծ հարգանք եմ տածում մաթեմատիկական խնդիրների լուծման ալգորիթմների հանդեպ և միաժամանակ խորապես համոզված եմ, որ ոչ մի սկզբունքային արգելք գոյություն չունի, որ մեր սխեման հարստացվի ու դառնա ալգորիթմ բառիս խիստ իմաստով, ապա ես խնդիրների լուծման վերլուծական-համադրական սխեման անվանել եմ *Խնդիրների լուծման համընդհանուր ալգորիթմ*՝ վերջինիս լայն իմաստով: Անցնենք խնդիրների լուծման որոնման մեր ալգորիթմի ձևակերպմանը (տե՛ս Djidjian 2004; Djidjian 2011):

Խնդիրների լուծման համընդհանուր  
ալգորիթմ

1. Հասկանալ տվյալ խնդրի տեքստը

1.ա. Առանձնացնել *խնդրի հարցը* արտահայտող նախադասությունը և արձանագրել, թե ինչ օբյեկտի մասին է հարցը և ինչ է պահանջում այն պարզել:

1.բ. Արձանագրել *խնդրի թեման*՝ ղեկավարվելով խնդրի հարցով և խնդրի հարցին վերաբերող տվյալներով:

1.գ. Խնդրի տեքստի յուրաքանչյուր *բարդ նախադասություն* ներկայացնել ասույթների տրամաբանության համարժեք բարդ ասույթի տեքստով:

1.դ. Ներգրավել խնդրի տեքստի հիմնային հասկացությունների *սահմանումները*:

1.ե. Տեքստում հանդիպող պատկերավոր /“խուճուճ”/ արտահայտությունները և իդիոմաները փոխարինել *ստանդարտ*, սովորական ձևակերպումներով:

1.\* Ալգորիթմի տվյալ քայլի յուրաքանչյուր ենթակետը կատարելուց հետո ստուգել՝ արդյո՞ք նրա արդյունքը հնարավորություն չի տալիս լուծված խնդիրների առկա պաշարում ընտրել հետագոտվող խնդրին *նույնական* նախատիպ խնդիր: Դրական պատասխանի դեպքում նախատիպի լուծման եղանակը կիրառել հետագոտվող խնդրի հանդեպ: Բացասական պատասխանի դեպքում անցնել ալգորիթմի հաջորդ քայլին:

2. Վերանալ երկրորդականից:

2.ա. Անտեսել խնդրի տեքստի այն տեղեկատվությունը, որն ակնհայտ *կասպ չունի խնդրի հարցի հետ*:

2.բ. Անտեսել խնդրի տեքստի այն տեղեկատվությունը, որն ակնհայտ *կասպ չունի խնդրի թեմայի հետ*:

3. Կենտրոնանալ գլխավորի վրա:

3.ա. Առանձնացնել խնդրի տեքստի այն տեղեկատվությունը, որն ակնհայտորեն *կասպված* է խնդրի հարցի հետ:

3.բ. Ներգրավել խնդրի հարցի հետ ակնհայտորեն կասպված (ռելեվանտ) հասկացությունների *սահմանումները*:

3.գ. Ներգրավել ռելեվանտ հասկացությունների միջև կապերն արտահայտող հիմնական դրույթները (օրենքները, կանոնները):

4. Խնդիրը ներկայացնել ստանդարտ եղանակով:

4.ա. *Նշաններ* (տառային սիմվոլներ) ներմուծել խնդրի ռելեվանտ հասկացությունների համար:

4.բ. *Հարցն առանձնացնել* տվյալներից:

4.գ. *Համառոտագրել* տվյալները:

5. Խնդիրը ներկայացնել գրաֆիկական սխեմայի ձևով:

5.ա. Գրաֆիկորեն ներկայացնել հետագոտվող *առարկաները*:

5.բ. Գրաֆիկորեն նշել նրանց *հատկությունները* և վիճակները:

5.գ. Գրաֆիկորեն նշել նրանց միջև *հարաբերությունները*:

6. Բացահայտել խնդրի կառուցվածքը՝ օգտագործելով խնդրի գրաֆիկական ներկայացումը:

6.ա. Բացահայտ եղանակով արձանագրել պրոբլեմային իրավիճակում ուսումնասիրվող *օբյեկտները*:

6.բ. Բացահայտ եղանակով արձանագրել ուսումնասիրվող օբյեկտների *հատկություններն* ու վիճակները:

6.գ. Բացահայտ եղանակով արձանագրել ուսումնասիրվող օբյեկտների միջև *հարաբերությունները*:

- 7. Որոշել հետազոտվող խնդրի տիպը՝ բացահայտ եղանակով արձանագրելով նրա թեման ու կառուցվածքը:
- 7.\* Ստուգել՝ արդյո՞ք հնարավոր չէ լուծված խնդիրների պաշարում ընտրել հետազոտվող խնդրի հետ նույն *տիպին* պատկանող խնդիր կամ տվյալ խնդրի *տիպին* վերաբերող «շատ խելացի համանմանության» կանոն: Դրական պատասխանի դեպքում փորձել կիրառել այդ նախատիպ խնդրի լուծման եղանակը կամ «շատ խելացի համանմանության» կանոնը հետազոտվող խնդրի հանդեպ: Բացասական պատասխանի դեպքում անցնել ալգորիթմի հաջորդ քայլին:
- 8. Խնդրի պայմաններից բխեցնել նոր հետևանքներ.
- 8.ա. Խնդրի տվյալներից բխեցնել «մեկ քայլանոց» հետևանքներ:
- 8.բ. Ներգրավել ռելեվանտ ընդհանուր դրույթներ (օրենքներ):
- 8.գ. Բխեցնել հետևանքներ խնդրի տվյալներից և ռելեվանտ դրույթներից («երկու քայլանոց» հետևանքներ):
- 8.դ. Կիրառելով 9բ և 9գ կետերը՝ կառուցել հետևանքների շղթաներ:
- 9. Հետազոտվող խնդիրը բաժանել ենթախնդիրների.
- 9.ա. Առանձնացնել հարցի հիմնային հասկացությունը («խնդրո առարկան»):
- 9.բ. Ղեկավարվելով խնդրի թեմայով՝ առանձնացնել այն ընդհանուր դրույթը (օրենքը), որն անմիջականորեն վերաբերում է խնդրի հարցին:
- 9.գ. Այդ դրույթի կազմի մեջ մտնող հասկացություններից կազմել ուսումնասիրվող խնդրի առաջին ենթախնդիրները:
- 9.դ. Կիրառելով 8բ և 8գ գործողությունները այդ ենթախնդիրների հանդեպ՝ կառուցել

հետազոտվող խնդրի «ենթախնդիրների ծառը»:

- 9.\* Ենթախնդիրների ծառի ամեն մի ճյուղ կառուցելուց հետո ստուգել՝ արդյո՞ք կառուցված ենթախնդիրների ծառի ճյուղերի բոլոր վերջին («ավարտական») հանգույցներն են համընկնում հետազոտվող խնդրի պայմանների կամ նրանցից բխեցրած հետևանքների հետ: Եթե պատասխանը դրական է, ապա *տվյալ խնդիրը լուծվում է՝* շարժվելով «ենթախնդիրների ծառի» ավարտական հանգույցներից դեպի խնդրի հարցը: Եթե պատասխանը բացասական է, ապա անցնել ալգորիթմի հաջորդ քայլին:
- 10. Այն «ամուր կորիզ» ենթախնդիրները, որոնք չեն համընկնում հետազոտվող խնդրի պայմանների կամ նրանցից բխեցրած հետևանքների հետ և որոնց հանդեպ չի հաջողվում շարունակել բաժանումը ենթախնդիրների, փորձել լուծել համանմանության միջոցով՝ կիրառելով խելացի համանմանության Կ1, Կ2 և Կ3 կանոնները (տե՛ս ստորև).
- 10.ա. Որոշել տվյալ խնդրի «ենթախնդիրների ծառի» այն ավարտական հանգույցների տիպը, որոնք չեն համընկնում հետազոտվող խնդրի պայմանների կամ նրանցից բխեցրած հետևանքների հետ, և որոնց հանդեպ այլևս չի հաջողվում շարունակել բաժանումը ենթախնդիրների, և այդ «ամուր կորիզ» ենթախնդիրների հանդեպ կիրառել վերլուծության *առաջին յոթ քայլերը*:
- 10.բ. Յուրաքանչյուր «ամուր կորիզ» հանգույցի համար ներգրավել նրա թեմայի շրջանակներում լուծված բոլոր խնդիրները և որոշել դրանց *տիպերը*:
- 10.գ. Փորձել լուծել յուրաքանչյուր «ամուր կորիզ» ենթախնդիրը ներգրավված նա-

խատիպ խնդիրների լուծման եղանակով՝ սկսելով առավել նման (նույնական) նախատիպ խնդրից և հաշվի առնելով «խելացի համանմանությունների» Կ1, Կ2 և Կ3 կանոնները:

11. Վերլուծության յուրաքանչյուր քայլում ներգրավել *ռելեվանտ* տեղեկատվություն.
- 11.ա. Ներգրավել խնդրի հարցի հետ անմիջականորեն կապված հասկացության սահմանումը կամ այդ հասկացությունը պարունակող ընդհանուր դրույթը:
- 11.բ. Ներգրավել խնդրի *տվյալներն* արտահայտող հասկացությունների հետ անմիջականորեն կապված սահմանումներ կամ օրենքներ:
- 11.գ. Կիրառել 11ա և 11բ քայլերը ենթախնդիրների հիմնային հասկացությունների հանդեպ:
- 11.դ. Ներգրավել խնդրի վերլուծության քայլերի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն:
12. Բացահայտել թաքնված տեղեկատվությունը:
- 12.ա. Բացահայտել խնդրին անմիջականորեն վերաբերող տեղեկատվությունների բազմությունից խնդրի հարցի հետ անմիջականորեն կապված կարևոր դրույթ:
- 12.բ. Բացահայտել խնդրի հարցի հետ անմիջականորեն կապված մի այնպիսի կարևոր դրույթ, որը հնարավոր է նկատել միայն խնդրի տարրերի միջև որոշ *ոչ-ակնհայտ կապը* կամ հարաբերությունը հաշվի առնելուց հետո:
- 12.գ. Բացահայտել խնդրի հարցի հետ անմիջականորեն կապված մի այնպիսի կարևոր դրույթ, որը հետևում է միայն որոշ *ոչ-ակնհայտ ռելեվանտ* տեղեկատվություն ներգրավելուց հետո:
- 12.\* Ալգորիթմի տվյալ քայլի յուրաքանչյուր ենթակետի միջոցով ստանալով նոր

դրույթ՝ այն ավելացնել հետազոտվող խնդրի պայմանին և ստուգել՝ արդյո՞ք խնդրի լուծման ալգորիթմը նոր պայմաններում լուծում է հետազոտվող խնդիրը՝ կրկնելով ալգորիթմի բոլոր *1-9 քայլերը*: Դրական պատասխանի դեպքում ստացվում է հետազոտվող խնդրի լուծումը: Բացասական պատասխանի դեպքում անցնել ալգորիթմի հաջորդ քայլին:

Այժմ ժամանակն է, որ ներկայացնենք Համընդհանուր Ալգորիթմի 10-րդ քայլում նշված խելացի համանմանության կանոնները:

**Անթույլատրելի համանմանության կանոն Կ1.** *Համանմանության սխեմայով մտահանգելուց առաջ ստուգել՝ արդյո՞ք Ա խնդիրը չունի այնպիսի Ֆ հատկություն, որն անհամատեղելի է Բ խնդրի լուծման Վ եղանակի քայլերից մեկի հետ:*

**Խելացի համանմանության կանոն Կ2.** *Համանմանության սխեմայով մտահանգելիս նախապատվությունը տվեք այն Բ նախատիպ խնդրին, որի կառուցվածքը նույնական է կամ առավել մոտ է մեր կողմից ուսումնասիրվող Ա խնդրի կառուցվածքին:*

**Շատ խելացի համանմանության կանոն Կ3.** *Եթե B նախատիպ խնդիրը լուծվել է T եղանակով, և մենք կարողացել ենք մեզ համար համոզիչ եղանակով ընդհանրացում կատարել, որ B նախատիպ խնդրի P կառուցվածքն էական պայման է, որպեսզի այդ կառուցվածքի ցանկացած խնդիր լուծվի T եղանակով, ապա այդ դեպքում արդարացված է (և շատ խելացի է)՝ հանդիպելով նոր A խնդրի, որն ունի P կառուցվածք, փորձել այն լուծել T եղանակով:*

Իհարկե, վերոներկայացված *Խնդիրների լուծման համընդհանուր ալգորիթմը* միայն լայն իմաստով է ալգորիթմ: Դեռևս շատ մեծ աշխատանք պետ է կատարվի,



որպեսզի մեր *Համընդհանուր ալգորիթմի* 12 քայլերից ու 41 ենթաքայլերից յուրաքանչ-յուրը մատչելի դառնա համակարգիչների համար: Եվ եթե մենք այդ ապագա աշխատանքների մտադրվածությամբ զննենք առաջադրված *Համընդհանուր ալգորիթմը*, ապա դժվար չի լինի նկատել, որ համակարգիչները միայն այն ժամանակ կկարողանան իրագործել դրա ենթակետերը, երբ մենք նրանց կզինենք *հասկանալու* կարողությամբ:

Այսպես՝ *Համընդհանուր ալգորիթմի* 16 ենթակետը պահանջում է «Տեքստում հանդիպող պատկերավոր (“խուճուճ”) արտահայտությունները և իդիոմները փոխարինել *ստանդարտ*, սովորական ձևակերպումներով»: Համակարգիչն ընդունակ կլինի իրագործելու այդ պահանջը միայն այն ժամանակ, երբ մենք նրան կսովորեցնենք անհրաժեշտ ծավալով հասկանալ բնական լեզուն: *Համընդհանուր ալգորիթմի* 12-րդ ենթակետը՝ «Բացահայտել թաքնված տեղեկատվությունը» իրագործելու համար համակարգիչը պետք է հասկանա տվյալ կոնկրետ խնդրի պայմանները և դրանց անմիջականորեն վերաբերող ռելեվանտ գիտելիքները:

#### Հասկացման հիմնախնդիրը

Ինչպես մեր *Համընդհանուր ալգորիթմը* խիստ իմաստով մտածողության ալգորիթմ դարձնելու, այնպես էլ արհեստական ինտելեկտ ստեղծելու համար մենք պետք է այն աստիճանի ճշգրտորեն ու մանրամասնորեն ըմբռնենք *հասկանալ* հասկացությունը, որ կարողանանք հասկանալու կարողությամբ զինենք մեր համակարգիչները: Նման լուրջ խնդիր լուծելիս նպատակահարմար է նախ ի մի բերել բոլոր այն կա-

րևորը, ինչ հայտնի է հասկանալու վերաբերյալ: Սակայն պարզվում է, որ հասկանալու կարողությունն այնքան հիմնային տեղ է գրավում մարդկային բանականության և մտածողության համակարգում, որ նա հաճախ ընկալվում է որպես ինքնըստինքյան պարզ ու հասկանալի կարողություն: Նույնիսկ այն մենագրություններում, որոնց իսկ խորագրերում է դրված հասկացում կամ իմացություն տերմինները, հասկացման կարողությունը փաստորեն նույնացվում է մարդկային բանականությանը և չի դառնում հատուկ ուսումնասիրության առարկա (Локк 1960; Лейбниц 1983; Юм 1965):

Գիտական ու փիլիսոփայական հրապարակումներում *հասկացումը* օգտագործվում է երկու հիմնական իմաստով: Առաջին դեպքում նկատի ունեն տարբեր գիտական հայեցակետերի ու կատեգորիաների բովանդակության ճշգրիտ բացահայտման խնդիրը: Երկրորդ հիմնային իմաստը վերաբերում է աշխարհի, այդ թվում նաև մարդու և մարդկային հասարակության էական հատկանիշների բացահայտման խնդրին: Վերջին դեպքում հաճախ հարցին տալիս են հետևյալ փիլիսոփայական ձևակերպումը. «Ինչպե՞ս է հնարավոր մարդու կողմից աշխարհի իմացությունը», որից պարզորոշ նկատվում է, որ այս իմաստով հասկացումը նույնացվում է մարդկային իմացական կարողությանը:

Հասկացման հիմնախնդիրը էապես ձևափոխվում է, երբ ընդհանուր փիլիսոփայական մտորումներից մենք իջնում ենք դեպի համակարգիչների համար պահանջվող հասկացման կարողությունը: Յուրաքանչյուր համակարգիչ, ըստ էության, տեղեկատվություն վերամշակող սարք է: Մարդկային հասարակությունում տեղեկատվությունների գերիշխող մասը արտա-



հայտվում է բնական լեզվի նախադասությունների, դատողությունների միջոցով: Միանգամայն բնական կլիներ, եթե համակարգիչներն իրենց մուտքի տեղեկատվությունը ստանային բնական լեզվի տեքստերի ձևով: Բայց քանի որ համակարգիչները ոչինչ չեն հասկանում, ապա նրանք չեն կարող հասկանալ նաև բնական լեզվով շարադրված տեքստերը: Ավելի ստույգ, համակարգիչները տեղեկատվությունը ստանում և մշակում են 0-ների և 1-երի *բինար լեզվով*: Եվ հարցը հետևալն է. ինչ<sup>օ</sup>ու չեն ծրագրավորողները մի հատուկ ծրագիր մշակում, որը թարգմաներ ցանկացած բնական լեզվի տեքստ բինար լեզվի:

Հավանաբար համակարգիչներ ստեղծող ժամանակակից մասնագետներն այստեղ ինչ որ անհաղթահարելի դժվարության են հանդիպել: Առաջին հայացքից ոչ մի լուրջ դժվարություն չպետք է լիներ: Եթե մենք հայերենի բոլոր բառերը համարակալենք և այդ համարները բինար թվի տեսքով հաղորդենք համակարգչին, արդո՞ք դա բավարար չէ, որ համակարգիչը ցանկացած խնդրի տեքստն ընդունի և դրա վրա աշխատի: Դժվար չէ պարզել, որ համակարգիչն այդ խնդրի վրա չի կարող աշխատել, քանի որ խնդրի բովանդակությունը կախված է դրա տեքստի բառերի իմաստից, իսկ հայերենի և բոլոր այլ բնական լեզուների բառերը բազմիմաստ են: Ընդ որում բառի իմաստն ինքը կախված է տեքստի բովանդակությունից, դրա համատեքստից, նաև տեքստի շարադրանքում այդ բառի օգտագործումից հատուկ բառակապակցություններում՝ իդիոմաներում: Մտացվում է յուրօրինակ արատավոր շրջան. տեքստի բովանդակությունը որոշվում է նրա մեջ օգտագործվող բառերի իմաստով, իսկ օգտագործված բառերի իմաստը, իր հեր-

թին, կախման մեջ է տեքստի բովանդակությունից:

Նշված իրավիճակի յուրահատկությունն այն է, որ մարդիկ կարծես թե չեն նկատում բնական լեզվի բառերի բազմիմաստության հետ կապված դժվարությունը և «հանգիստ» հասկանում են բնական լեզվով շարադրված տեքստերի բովանդակությունը: Մարդկանց օգնում է այն հանգամանքը, որ նրանք լեզուները յուրացնում են համատեքստորեն՝ տվյալ բառի յուրաքանչյուր նոր իմաստը կապելով համապատասխան իրավիճակի, համատեքստի հետ: Իրեն հաղորդվող տեքստը ընկալելով՝ մարդը գուզընթաց ճշգրտում է իր համար, թե ինչ իմաստով են այդ տեքստում օգտագործվում համապատասխան բառերը:

Համակարգիչների դեպքում վիճակը բոլորովին այլ է: Մենք համակարգչին բնական լեզու չենք սովորեցնում: Մենք ցանկանում ենք նրան տալ բնական լեզուն «պատրաստի» վիճակում, «համարակալված» բառերով: Այդ պայմաններում համակարգիչը չի կարող ինքնուրույն կողմնորոշվել, թե տվյալ տեքստում բառերն ի՞նչ ենթաիմաստով են հանդես գալիս: Ինչպե՞ս է հնարավոր օգնել համակարգիչներին, որպեսզի նրանք ճիշտ հասկանան իրենց հաղորդվող տեքստի բովանդակությունը: Պարզագույն լուծումն այն է, որ տեքստում ամեն մի բազմիմաստ բառին կցվի առանձին ցուցիչ նրա համապատասխան ենթաիմաստի համար: Այդ պարագայում համակարգիչը կարող է ճիշտ ընկալել տեքստի բովանդակությունը, հատկապես եթե նախօրոք տեքստի բարդ նախադասությունները ներկայացվեն որպես պարզ նախադասությունների համարժեք տրամաբանական կառույց: Բայց դա կնշանակի, որ համակարգիչը այդպես էլ կմնա անընդունակ ինքնուրույն

ըմբռնելու բնական լեզվով շարադրված տեքստերը և յուրացնելու գրքերում և ամսագրերում պարունակված՝ մարդկության կողմից կուտակված գիտելիքների հսկայական գանձարանը:

Եթե մենք ցանկանում ենք բնական լեզուն դարձնել համակարգիչներին մատչելի, ապա մենք չենք կարող բավարարվել տվյալ լեզվի բազմիմաստ բառերի ենթաիմաստներին ցուցիչներ կցելով: Մենք պետք է նաև յուրաքանչյուր ցուցիչի համար նշենք այն լեզվային արտահայտությունները (ինդիկատորները), որոնց ներկայությունը տեքստում հայտնաբերելով՝ համակարգիչը «կհասկանա», թե տվյալ բառը տվյալ տեքստում ինչ իմաստով է օգտագործվում: Մեր կողմից առաջադրվող այս ռազմավարությունը շատ պարզ ուղի է մատնանշում, բայց դրա իրականացումը պահանջում է աշխատանքի հսկայական ծավալ: Բնական լեզվի բառապաշարը 100 հազարին մոտ է, իսկ թե յուրաքանչյուր բառի ենթաիմաստը լեզվական քանի ինդիկատորների միջոցով կարող է արտահայտվել, դա մենք կարող ենք իմանալ միայն համապատասխան հետազոտության արդյունքով:

Ենթադրենք, որ եկել է այն ժամանակը, երբ մասնագետները կարողացել են բնական լեզվով հաղորդվող գիտելիքները և տեղեկատվությունները մատչելի դարձնել համակարգիչներին: Արդյո՞ք դա բավարար կլինի, որպեսզի համակարգիչը լիովին հասկանա ստացված տեղեկատվությունը, ասենք, երկրաչափական ինչ որ մի նոր թեորեմ: Պարզ է, որ այդ բնույթի տեղեկատվությունը հասկանալու համար համակարգիչը պետք է ունենա երկրաչափական գիտելիքների մի ամբողջական համակարգ՝ որպես անհրաժեշտ նախադրյալ: Երկրորդ,

նա պետք է գիտելիքների այդ պաշարին այն աստիճանի տիրապետի, որ կարողանա գտնել նոր տեղեկատվության (օրինակ՝ նոր թեորեմի) ստույգ տեղն իր գիտելիքների ամբողջական համակարգում (մասնավորապես, թե տվյալ թեորեմը որ աքսիոմների ու թեորեմների միջոցով է ապացուցվել): Երրորդ, գործնական տեսակետից ամենակարևորը, համակարգիչը պետք է կարողանա նոր թեորեմն արդյունավետորեն օգտագործել երկրաչափական խնդիրներ լուծելիս:

Քանի որ մեր ընդհանուր տեսակետից գիտական մտածողության առանցքը կազմում է հարցերի ու խնդիրների պատասխանների որոնումը, ապա նպատակահարմար է դիտարկել, թե ինչ մակարդակներ կարելի է առանձնացնել խնդրի հասկացման մակարդակի առումով: Այդ տեսակետից ես առաջարկում եմ խնդրի հասկացման կարողության մակարդակների հետևյալ դասակարգումը.

- կարողանալ խնդրի տեքստը վերաշարադրել «սեփական բառերով»,
- կարողանալ խնդրի տեքստից բխեցնել անմիջական եզրակացություններ,
- կարողանալ խնդրի հանդեպ կիրառել վերլուծության միջոցների ամբողջ համակարգը,
- կարողանալ բացահայտել հետազոտվող խնդրի արդեն լուծված նախատիպ խնդիրները,
- կարողանալ կիրառել նախատիպ խնդրի լուծման եղանակը հետազոտվող խնդրի հանդեպ,
- կարողանալ լուծել առաջադրված խնդիրը,
- հնարավորին չափ ընդհանրացնել առաջադրված խնդրի լուծումը:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Djidjian, R. (2004) Getting Ready for Great Discoveries. Yerevan state university publ., Yerevan.
2. Djidjian, R. (2011) "Building the logic of scientific discoveries". Main Issues of pedagogy and psychology. Yerevan. №3, 2011, p.p. 164-173.
3. Hayes-Roth, F. (1971) The meaning and mechanics of intelligence. MIT, July, 1971, p.1.
4. Newell, A. & Simon, H. (1956). "The Logic Theory Machine. A Complex Information Processing System". In RAND Corporation, P-868, June 15, 1956, p.28.
5. Newell, A. & Simon, H. (1961). «GPS, A Program that Simulates Human Thought». In Lernende Automaten, H. Billing (ed.). Munchen, R. Oldenburg, p.119.
6. Джиджян, Р. (1984). Методологический анализ процесса открытия и изобретения. Ереван, изд. Ереванского университета.
7. Джиджян, Р. (2013). «Логическая машина». Мудрость. №1, 2013.
8. Джевонс, С. (1881) Основы науки. СПб., 1881.
9. Лейбниц Г. (1983) Новые опыты о человеческом разумении. Сочинения в четырёх томах, т.2. Мысль, Москва.
10. Локк, Дж. (1960) Опыт о человеческом разуме. Избранные философские произведения в 2-х томах, т.1. Соцэргиз, Москва.
11. Юм, Д. (1965) Исследование о человеческом познании. Сочинения в двух томах, том 1. «Мысль», Москва.

*Ռոբերտ ՋիՋՅԱՆ*

ՀԱՍԿԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ՍՏԵՂԾՄԱՆ  
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են այն հանգամանքները, որոնց ազդեցությամբ համակարգիչներով գերհագեցած այսօրվա իրողությունում մոռացության է մատնվել ինքնուրույն մտածող մեքենաների, արհեստական ինտելեկտի ստեղծման սկզբունքային խնդիրը: Մտածող մեքենաների մշակման խնդիրը ձեռք բերեց գրեթե գործնական խնդրի կարգավիճակ անցյալ դարի կեսից, երբ ստեղծվեցին առաջին էլեկտրոնային հաշվիչ մեքենաները, և իր բուռն ու կարճատև ծաղկումը ապրեց 20-րդ դարի նշանակալի նվաճումներից մեկը՝ կիրառական: Սակայն բա-

վականաչափ արագ պարզվեց, որ մեկ-երկու տասնամյակում մտածող մեքենաներ ստեղծելու տարածված լավատեսական տրամադրվածությունը իրեն չի արդարացնում: Հոդվածի հեղինակը մատնանշում է արհեստական ինտելեկտի ստեղծման երկու հիմնային դժվարություն՝ ինտելեկտուալ խնդիրների համընդհանուր ալգորիթմի մշակման խնդիրը և բնական լեզվով ներկայացված տեքստային տեղեկատվության հասկացման խնդիրը:

Հոդվածում նշվում է, որ հեղինակին հաջողվել է մշակել մոտ 40 ենթակետից

բաղկացած ինտելեկտուալ խնդիրների լուծման համընդհանուր սխեմա, որը նա պայմանականորեն անվանվում է Խնդիրների լուծման համընդհանուր ալգորիթմ: Հեղինակը համոզված է, որ արհեստական ինտելեկտի ստեղծման համար անհրաժեշտ ինտելեկտուալ խնդիրների լուծման համընդհանուր ալգորիթմը կարելի է ստանալ՝ հենց շարունակելով կոնկրետացնել իր կողմից մշակված սխեման: Հոդվածում ներկայացված են Խնդիրների լուծման համընդհանուր ալգորիթմի հիմնական քայլերը:

Համակարգիչների համար ստացվող տեղեկատվության ինքնուրույն հասկացման

համար հեղինակն առաջարկում է հետևյալ միջոցները. բառերի տարբեր իմաստների համարակալում և համատեքստերի տիպերի ցուցիչների բացահայտում: Առաջարկվում է նաև խնդրի հասկացման մակարդակների դասակարգում:

*Հանգուցային հասկացություններ.* արհեստական ինտելեկտ, խնդիր, խնդրի լուծում, մտածողության ալգորիթմ, հասկացում:

Robert DJIDJIAN

## UNDERSTANDING CAPACITY AS THE PRINCIPLE DIFFICULTY IN BUILDING ARTIFICIAL INTELLECT

### ABSTRACT

This paper discusses those factors by the influence of which the great task of building artificial intellect had been forgotten paradoxically just in the modern computerized life. The dream of building thinking machines got almost practical significance in the mead 20<sup>th</sup> century when were the first electronic computing machines and took place the short period of formation and intensive development of cybernetic science – one of the 20<sup>th</sup> century most significant achievements. But it was realized soon that the optimistic expectations of building thinking machines in a decade or two were not realized. The author of the paper mentions two main difficulties in building artificial intellect: the problem of developing the general algorithm of problem solving and the problem of computer understanding of natural language textual information.

The author claims that he has succeeded developing 40-step general scheme of problem solving that he conventionally calls Problem Solving General Algorithm. He is convinced that to develop a complete general algorithm of problem solving one has just to continue making more detailed the shceme he has suggested. The main steps of this general scheme of problem solving are presented in this paper.

In regard of the task of the problem of computer understanding of natural language information the author suggests, first, applying numerical indexes to different meanings of natural language words and phrases, second, introducing indicators for contexts of natural language texts. The paper suggests also a system of classification of the levels of understanding.

*Key concepts:* artificial understanding, algorithm of thought, task, task solution, understand-

Роберт ДЖИДЖЯН

## ПОНИМАНИЕ КАК ЦЕНТРАЛЬНАЯ ПРОБЛЕМА РАЗРАБОТКИ ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА

### РЕЗЮМЕ

Настоящая статья обсуждает те обстоятельства, под воздействием которых в наш перенасыщенный компьютерами век предали забвению принципиальную задачу создания мыслящих машин, или искусственного интеллекта. Задача разработки мыслящих машин приобрела статус почти практической цели, когда были созданы первые электронные вычислительные машины и испытала период своего бурного развития одно из наиболее значительных достижений двадцатого века – наука кибернетики. Однако в весьма короткое время выяснилось, что распространённое оптимистическое ожидание создания мыслящих машин в течении ближайших одной-двух десятилетий не оправдывается.

Автор статьи указывает два главных затруднения на пути создания искусственного интеллекта – задачу разработки универсального алгоритма решения интеллектуальных задач и проблему понимания текстовой информации, представленных на естественном языке.

В статье отмечается, что её автору удалось разработать состоящую из 40 подпунктов универсальную схему решения интеллектуальных задач, которую автор условно назвал Универсальным алгоритмом решения задач. Автор убеждён, что истинный Универсальный алгоритм решения задач может быть создан именно на пути дальнейшей детализации его схемы решения задач. В статье представлены основные шаги Универсального алгоритма решения задач.

В направлении понимания искусственным интеллектом информационных текстов на естественном языке автор предлагает следующие два средства – индексацию различных значений слов и выражений естественного языка и выявление индикаторов для различных контекстов. Предложена так же система уровней понимания текстов задач.

*Ключевые понятия:* искусственный интеллект, алгоритм мышления, задача, решение задачи, понимание.

## НОВАЯ РЕВОЛЮЦИЯ В НАУКЕ: ГЛОБАЛЬНОЕ ИЗМЕРЕНИЕ

В научной литературе всё чаще высказываются мнения, что мы живем в век глобализации, глобальной революции, вступили в глобальную эпоху и т. п. Термин «глобальный» появляется и в повседневной жизни, выражая новый взгляд на окружающий нас мир – мир, который уже многим представляется глобальным миром. В этой ситуации важно выяснить: как же наука, а за ней и образование отражают возникшую глобальную ситуацию и ориентацию нашей жизни? Какие процессы и тенденции характерны для научного познания и современного образования, которые не должны оставаться безучастным к происходящим и грядущим глобальным переменам? И действительно, уже с прошлого века наука и образование начали интересоваться глобальными феноменами и появились в основном ближе к концу второй половины XX в новые научные и образовательные дисциплины, которые стали ориентироваться на глобальную проблематику, причём у ряда из них появилось своё «глобальное измерение».

<sup>1</sup> Պետք է նշել ևս երկու ռադիկալ կրոնական մտածողների մասին՝ հրեա աստվածաբան Ռիչարդ Ռուբենսթեյն և Ջոն Ռոբինսոն: Ռ. Ռուբենսթեյնի կապը ռադիկալ կամ «Աստծո մահվան» աստվածաբանության ներկայացուցիչների հետ սերտ չէր: Միակ բանը, որ կապում էր նրան ռադիկալ աստվածաբանության հետ, «Աստծո մահը» արտահայտության գործածումն էր նրա կողմից, որը նա հասկանում էր որպես մշակութային ֆեոնոմեն հրեական հոլոքոստի համատեքստում: Հրեական հոլոքոստն այն դաժան և սարսափելի ոճրագործությունն էր, որի իրագործման պատճառով հրեա աստվածաբանը հանգեց այն եզրակացության, որ Աստված մեռած է, հակառակ դեպքում, հնարավոր չէր, որ նա թույլ տար, որ տեղի ունենար այդ ողբերգությունը: Հետևաբար, ըստ Ռուբենսթեյնի Աստված մեռած է, և այս իրադարձությունից հետո Աստված դառնում է «Մուրբ Ոչնչություն»: (Մանրամասն Ռուբենսթեյնի հայացքների մասին տե՛ս նրա հիմնարար աշխատությունը՝ Rubenstein 1966): Երկրորդը բրիտանացի աստվածաբան և անգլիկանական եկեղեցու եպիսկոպոս Ջոն Ռոբինսոնն էր: Թեև ռադիկալ կամ «Աստծո մահվան» աստ-

Գ. Վահանյանի կրոնափիլիսոփայական և աստվածաբանական հայացքների ձևավորման գործում մեծ դեր ու նշանակություն են ունեցել այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Ժան Կալվինը, Սյոբեն Կիերկեգորը, Կարլ Բարտը, Պաուլ Թիլլիխը և Ռուդոլֆ Բուլտմանը, մասամբ նաև Լյուդվիգ Ֆոյերբախը և Ֆյոդոր Դոստոևսկին: Սակայն այս մտածողներից հատկապես Կ.Բարտը և Ս.Կիերկեգորն են ավելի մեծ ազդեցություն թողել Վահանյանի վաղ շրջանի հայացքների ձևավորման ու զարգացման վրա:

Բարտը Աստծո «Այլության», տրանսցենդենտության իր գաղափարով մեծապես նպաստել է Աստծո մասին Վահանյանի տեսակետի ձևավորմանը: Բարտի աստվածաբանությունը, որը նոր խոսք էր աստվածաբանության մեջ, իր հերթին կրել է Լյութերի, Կիերկեգորի և Դոստոևսկու ազդեցությունը: Իր մեկնություններում Բարտն օգտագործում է Աստծու և մարդու միջև «անսահման որակական տարբերության» Կիերկեգորի դրույթը և հայտարարում, որ մարդուց դեպի Աստված որևէ ճանապարհ չկա, քանի որ հնարավոր է միայն հակառակը: Բարտը հակադրում է հավատը և աստվածային հայտնությունը կրո-

նին. նա սկզբունքորեն չի ընդունել բնական աստվածաբանությունը՝ որպես աստվածանաչողության միջոց: Բարտը Աստվածաշունչը ներկայացնում է որպես «Աստծո խոսքը և մարդու խոսքը»՝ որոշակի հակադրություն տեսնելով աստվածայինի և մարդկայինի միջև այն դեպքում, երբ Վահանյանը խոսում է Աստվածաշնչի մասին՝ որպես «Աստծո խոսքը, մարդու խոսքը», որտեղ աստվածայինը և մարդկայինը համատեղելի են:

Աստծո՝ որպես «ամբողջովին Այլ» կամ «Այլություն» գաղափարը Վահանյանը մեկնաբանում է Կիերկեգորի՝ Աստծու և մարդու միջև «անսահման որակական տարբերության» բանաձևի համատեքստում: Վահանյանի համար Աստծո բացարձակ Այլությունը նշանակում է, որ Աստծու և մարդու միջև գոյություն ունի անսահման որակական տարբերություն: Կիերկեգորի պատկերամարտական և էկզիստենցիալիստական հայացքները, ինչպես նաև ինստիտուցիոնալ քրիստոնեության կամ «քրիստոնեական պետության» հանդեպ ունեցած նրա մոտեցումը (Kierkegaard 1960: 41, 110, 149, 168, 215) մեծ ազդեցություն են թողել Վահանյանի կրոնափիլիսոփայական մտածողության վրա: Եվ չնայած որ Վահանյանի և վերոհիշյալ մտածողների միջև առկա են որոշակի ընդհանրություններ, այնուամենայնիվ նա տարբերվում է նրանցից իր մշակութաբանական ու աստվածաբանական ծրագրով:

Վահանյանը հատկապես իր «Աստծո մահը» (Vahanian 1961<sup>b</sup>) և «Սպասել առանց կուռքերի» (Vahanian 1964) գրքերով ռադիկալ աստվածաբանության մեջ «նոր իկոնոկլավի»՝ պատկերամարտության (Sanders 1966: 176; Trotter 1967: 100) առաջատար ներկայացուցիչն է: Թոմաս Թրոտերի մեկնաբանությամբ՝ Վահանյանն իր «Աստծո մահը» աշխատությունով հարձակում է գործել կրոնականության «կուռքերի» վրա և ցույց տվել, որ «Աստծո մա-

վածաբանությունն ամերիկյան ֆենոմեն էր, և Ռոբինսոնը որևէ կապ չունի այդ երևույթի հետ, այնուամենայնիվ, նա՝ որպես ռադիկալ կրոնական մտածող, մեծ ազդեցություն է ունեցել աստվածաբանության ամերիկյան աշխարհում հատկապես իր «Անկեղծ լինել Աստծո առաջ» աշխատությունով: Ռոբինսոնը ո՛չ «Աստծո մահվան» և ո՛չ էլ աշխարհիկ աստվածաբան է, այլ պարզապես ռադիկալ կրոնական մտածող է: Նա հետազոտողների կողմից հաճախ արդարացիորեն բնութագրվել է որպես «մեղմ» կամ «աջակողմյան» ռադիկալ աստվածաբան: Ռոբինսոնի ռադիկալությունն աստվածաբանության մեջ կարելի է որակել որպես փորձ բարեփոխելու և ամբողջովին նորովի վերամեկնաբանելու քրիստոնեությունը և դրա աստվածաբանությունը՝ այն հասկանալի և համապատասխան դարձնելու ժամանակակից աշխարհիկ մարդուն և հասարակությանը: (St u Robinson 1963):

հը» նշանակում է կենդանի Աստծո իրակա- նությունն ու Աստծո գաղափարն ազատել առ- հասարակ մշակութային կաղապարներից, որոնցով փորձ է արվել սեփականաշնորհելու Աստծուն և օբյեկտիվացնելու նրան: Վահանյանի կարծիքով «Աստծո մահը» պատկերա- մարտական բնույթի եզրույթ է, որը քանդում է մեր կարծրատիպերը Աստծո կեցության կամ թեխտական նախադրությունների մասին (Vahanian 1968: 315): Ըստ Թրոտերի՝ Վահանյանը իկոնոկլաստ է այն նույն իմաստով, ինչպես Կիերկեգորը և Նիցշեն էին, որոնք հարձակվել էին եկեղեցու հեղինակության վրա (Trotter 1967: 100): Գաբրիել Վահանյանը միակն է 1960-ականների ռադիկալ կամ «Աստծո մահ- վան» ուսմունքի աստվածաբաններից, որ հետևողականորեն շարունակեց «Աստծո մահվան» իր ուսմունքը և զարգացրեց այն ընդհուպ մինչև սեկուլյար աստվածաբանությու- նը: Այս թեմային նա անդրադարձել է իր՝ «Գովք աշխարհիկի» (Vahanian 2008) աշխա- տության մեջ, որում նա հանգամանորեն ար- տահայտել է իր հայացքները աշխարհիկ աստվածաբանության մասին:

Ռադիկալ աստվածաբանության մեջ Վա- հանյանի տեղն ու դերը ճշտելու համար հա- կիրճ անդրադառնանք XX դարի 60-ական թթ. այնքան մեծ աղմուկ հանած «Աստծո մահ- վան» աստվածաբանության մյուս ներկայա- ցուցիչների կամ ըստ Ջ. Մոնթգոմերիի՝ «Աստ- ծո հուղարկավորների» (Montgomery 1967: 27), հատկապես Թոմաս Ալթիցերի, Ուիլյամ Հա- միլթոնի, Պոլ վան Բուրենի և Հարվի Քոկսի հայացքներին՝ համադրելով դրանք Վահանյանի տեսակետների հետ:

Նախ և առաջ անհրաժեշտ է նշել, որ ռա- դիկալ աստվածաբանների ուշադրության կենտրոնում եղել են քրիստոնեական կրոնին վերաբերող մի շարք հիմնախնդիրներ, որոնք էլ ձևավորել են թեմատիկ ընդհանրույթ-

յունները նրանց խնդրակարգում, սակայն տարբերություններն առաջացել են այդ հիմ- նախնդիրների մեկնաբանության մեջ: Ինչպես Վահանյանը, այնպես էլ Ալթիցերը, Համիլ- թոնը, վան Բուրենը, մասամբ նաև Քոկսը գի- տակցել են այն հիմնախնդիրները, որոնք ծառայել են քրիստոնեության առջև, և որոնց լուծումից է կախված քրիստոնեական եկեղե- ցու ճակատագիրը: Ռադիկալ աստվածաբան- ներն իրարից անկախ նկատել են այդ հիմ- նախնդիրները, որոնք, նրանց կարծիքով, դարձել են լուրջ խոչընդոտ ինստիտուցիոնալ քրիստոնեության և ժամանակակից աշխար- հիկ կողմնորոշում ունեցող մարդու և հասա- րակության միջև: Այդ հիմնախնդիրները կա- րելի է դասակարգել հետևյալ ձևով. Աստծո գաղափարի և իրականության, տրանսցեն- դենտի-իմանենտի, աստվածաբանության- քրիստոսաբանության և կրոնականի-աշխար- հիկի (սեկուլյար) հարաբերակցության հիմ- նախնդիրներ:

Թեև ռադիկալ աստվածաբանության ձա- խակողմյան ներկայացուցիչների (Ալթիցեր, Համիլթոն և վան Բուրեն) միջև առկա են որո- շակի գաղափարական տարբերություններ, այնուամենայնիվ նրանց հայացքներում կան նաև ընդհանրություններ: Վ.Դոբրենկովի դա- սակարգմամբ՝ դրանք հետևյալներն են.

1. նրանք ազդարարում են քրիստոնեական Աստծո մահը,
2. ընդունում են աշխարհիկ աշխարհը, որում գոյություն ունի «սրբազանը», և որը բացա- հայտում է իրեն նոր ձևով,
3. բացասաբար են վերաբերվում քրիստոնե- ության ավանդական ինստիտուցիոնալ կառուցվածքին՝ եկեղեցուն,
4. նոր հավատի համար ընդունում են Հիսուսի կերպարի յուրահատուկ կարևորությունը (Добренков 1980: 95):



Ռադիկալ աստվածաբանության ներկայացուցիչների ուսմունքների միջև առկա են որոշակի գաղափարական ընդհանրություններ, իսկ տարբերությունները դրսևորվում են այդ հիմնախնդիրների մեկնաբանության ընթացքում: Բացի այդ, տարակարծությունների առաջացման հիմնական պատճառն այն է, թե այս կամ այն մտածողը ինչպիսի գաղափարական հենքի վրա է կառուցում իր տեսությունը կամ ինչպիսի գաղափարական ավանդույթի դիրքերից է մոտենում խնդրո առարկային: Պետք է նշել, որ նեոթոթոքսիան, որի հիմնադիրն էր շվեյցարիացի անվանի աստվածաբան Կ. Բարտը, ընդհանուր առմամբ մեծ ազդեցություն է թողել ռադիկալ աստվածաբանների հայացքների ձևավորման վրա, սակայն այդ ազդեցությունը եղել է ն՝ դրական, և՛ ժխտական, քանի որ ռադիկալ աստվածաբանությունը որոշակի առումով հակընդդեմ ռեակցիա էր նեոթոթոքսիայի նկատմամբ: Եվ չնայած այն բանին, որ ռադիկալ աստվածաբանության բնույթն ու առանձնահատկությունները էապես տարբերվում էին նեոթոթոքսիայի բազմադեմ դրսևորումներից, այնուամենայնիվ այն կարևոր ազդեցություն ունեցավ ռադիկալ աստվածաբանության առաջացման գործում և որոշ առումով ձևավորեց վերջինիս գաղափարական բովանդակությունը, ինչը ընդունել են ռադիկալ աստվածաբաններից հատկապես Ալթիցերը և Համիլթոնը (Altizer and Hamilton 1966<sup>d</sup>: xii): Նույն կարծիքն է արտահայտում նաև ռադիկալ աստվածաբանության պոզիտիվ քննադատ ամերիկացի աստվածաբան Լենգդոն Գիլկին (Gilkey 1965: 4-5):

Ինչպես վերը նշեցինք, Վահանյանի հայացքների համար որպես գաղափարական հենք հանդես են եկել Կիերկեգորը, Բարտը և ապոֆատիկ աստվածաբանությունը նեոթոթոքսիայի ավանդույթի շրջանակում:

Ալթիցերը, ով ավելի շուտ կրոնագետ է, քան աստվածաբան, հետազոտողների մեծամասնության կարծիքով ռադիկալ աստվածաբաններից ամենառադիկալն է: Նրան բնութագրել են որպես միստիկ հեգելական, արևելյան միստիցիզմի ջատագով: Հատկապես նրա «Աստծո մահվան» ուսմունքում կարելի է տեսնել բլեյքյան պոետիկ լեզվի, հեգելականության, նիցշեականության և արևելյան կրոնական միստիցիզմի համադրությունը: Համիլթոնի հայացքների ձևավորման վրա էական ազդեցություն է թողել գերմանացի աստվածաբան Դ.Բոնհոֆերը, ում «անկրոնական քրիստոնեություն» և «Հիսուսը ուրիշների համար» գաղափարները մեծ նշանակություն են ունեցել Համիլթոնի «Աստծո մահվան» ուսմունքի և նրա «նոր» բարոյականության «ռադիկալ» տեսակետների ձևավորման համար: Ի դեպ, Համիլթոնի «Աստծո մահվան» ուսմունքը 1960-ական թթ. արմատապես փոփոխվեց մասամբ Ալթիցերի ազդեցությամբ: Պ. վան Բուրենի հայացքների ձևավորմանը նպաստել են նեոթոթոքսիան և անալիտիկ փիլիսոփայությունը:

Ներկայացնելով ռադիկալ աստվածաբանների գաղափարական միջավայրը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է անդրադառնալ այդ հիմնախնդիրների մեկնաբանություններին, որոնցում Վահանյանն ունի որոշ ընդհանուր գծեր, ինչպես նաև տարակարծություններ ռադիկալ աստվածաբանության մյուս ներկայացուցիչների հետ:

Ռադիկալ կրոնական մտածողներն ընդունել են ժամանակակից արևմտյան աշխարհում Աստծո գաղափարի և իրականության հիմնախնդիրը: Նրանք նկատել են, որ ժամանակակից աշխարհիկ մարդու համար Աստծո գոյությունը և նրա իրականությունն էական նշանակություն չունի, նա Աստծո կարիքը չի գգում և իր կյանքում չի առաջնորդվում քրիս-

տոնեական արժեքներով ու իդեալներով: Ժամանակակից մարդն ավելի շուտ զգում է Աստծո բացակայությունն այս աշխարհում: Ավելին, ժամանակակից մարդը կրոնական սփոփանքի և եկեղեցական խնամակալության կարիքը չունի, քանի որ նա կարողանում է ինքնուրույն լուծել իր խնդիրներն այս աշխարհում և այնկողմնային աշխարհի, իրականության հանդեպ հետաքրքրություն չունի: Նա ունի իմամենատ ու այսկողմնային և ոչ թե տրանսցենդենտ և այնկողմնային կողմնորոշում, հետևաբար Աստված նրա համար տրանսցենդենտ արժեքների աղբյուր չէ: Բացի այդ, ժամանակակից մարդը, որն ունի գիտական աշխարհայացք, այլևս չի կարող ընդունել անցյալի կրոնադիցաբանական աշխարհայացքը: Նրա համար անհասկանալի է «Աստված» հասկացությունը: Այս ամենը հիմք հանդիսացավ ռադիկալ աստվածաբանների համար, որպեսզի նրանք ազդարարեն քրիստոնեական կրոնի Աստծո մահը արևմտյան մշակույթի մեջ: «Աստծո մահվան» երևույթը նրանք ըմբռնում են որպես Աստծո բացակայությունն այս աշխարհում:

Այս հիմնախնդրի վերաբերյալ արտահայտված ռադիկալ աստվածաբանների տեսակետներում տեսնում ենք մի ընդհանրություն, այն է՝ քրիստոնեական կրոնի Աստծո մահը ժամանակակից աշխարհում: Սակայն դրանով իսկ ավարտվում է ընդհանրությունը նրանց միջև: Ստորև ներկայացվում են տարբերությունները, որոնք ավելի կարևոր են և արտահայտում են յուրաքանչյուր մտածողի հայացքների առանձնահատկությունները:

Վահանյանը «Աստծո մահվան» ֆենոմենը հասկանում է որպես մշակութային իրադարձություն, որպես քրիստոնեական քաղաքակրթության կամ «քրիստոնեական պետության» վերջը, քանի որ արևմտյան աշխարհն աստիճանաբար ապաքրիստոնե-

ականացվում է: Վահանյանի համար «Աստծո մահը» նաև նշանակում է Աստծո մասին մեր կրոնամշակութային գաղափարների, աստվածաբանական-փիլիսոփայական հասկացությունների մահը:

Ալթիցերի համոզմամբ «մեր ժամանակի ամենամեծ աստվածաբանական խնդիրն է հասկանալ Աստծո մահվան նշանակությունը» (Altizer 1965: 380): Իսկ ի՞նչ է նշանակում խոսել Աստծո մահվան մասին: Իսկապես, ինչպես է հնարավոր խոսել Աստծո մահվան մասին հատկապես այն ժամանակ, երբ Աստծո անունը կարծես թե անհնար է հնչեցնել: Ալթիցերը, ի տարբերություն Համիլթոնի և Վահանյանի, ովքեր Աստծո մահը հասկացել են մշակութաբանական ու փոխաբերական իմաստով, թերևս միակն է ռադիկալ աստվածաբաններից, որ «Աստծո մահը» հասկացել է բառացի: Այսինքն՝ նրա համար «Աստծո մահը» պատմական իրադարձություն է. «Մենք պետք է ընդունենք, որ Աստծո մահը պատմական իրադարձություն է, որ Աստված մեռավ մեր տիեզերքում, մեր պատմության մեջ, մեր գոյության մեջ» (Altizer 1966<sup>a</sup>: 11): Այնուհետև նա նշում է, որ «Աստված իսկապես մեռավ Քրիստոսում, և այդ մահը և՛ պատմական, և՛ տիեզերական դեպք է և, որպես այդպիսին, այն վերջնական և անդառնալի իրադարձություն է, որը չի կարող ոչնչացվել հետագա կրոնական կամ տիեզերական շարժման կողմից» (Altizer 1966<sup>b</sup>: 103):

Ալթիցերի ռադիկալիզմը հետևանք է այն մտահոգության ու անհանգստության, որոնք, բնականաբար, առաջանում են քրիստոնեական աստվածաբանների մոտ, երբ վերջիններս գիտակցում են այն խորը ճգնաժամը, որի մեջ հայտնվել են կրոնական հավատն ու գիտակցությունը: Ընդամին, Ալթիցերն իր առաջ խնդիր է դնում ոչ միայն աստվածաբանորեն հիմնավորելու քրիստոնեական Աստծո

մահը, այլն՝ դրա անհրաժեշտությունը: Նա շատ լավ գիտակցում է, որ ընդունելով քրիստոնեական Աստծո մահը՝ դրանով խզում է կապը քրիստոնեական հավատի ձևերի ու ավանդույթի հետ, ինչը նա չի թաքցնում՝ նշելով, որ «երբ ժամանակակից քրիստոնյան ընդունում է Աստծո մահը, նա դրանով վկայում է այն փաստը, որ քրիստոնեական ավանդույթն այլևս իմաստակից չէ նրա համար, որ խոսքը (Աստծո) ներկա չէ իր ավանդական ձևում, և որ Աստված մեռավ պատմության մեջ» (Altizer 1965: 388):

Համիլթոնն աստվածաբանության հիմնախնդիրն է համարում այն, թե ինչպես կարելի է խոսել ողջախոհ քրիստոնյաների հետ, որոնք Աստծո մահվան ժամանակաշրջանում փորձում են հավատալ, այն դեպքում, երբ Աստծուն հավատալն այլևս անհնարին է: Աստծո տրանսցենդենտության ավանդական քրիստոնեական ըմբռնումն այլևս ոչ միայն անընդունելի, այլև պրոբլեմատիկ է ժամանակակից մարդու համար: Ոչ միայն կոռուպցիոն, որոնցով փորձում էին բնութագրել Աստծուն, և ոչ միայն Աստծո գաղափարի կեղծ օբյեկտիվացված պատկերացումները մահացան, այլև, ըստ Համիլթոնի, մահացան մեզանում այն ուժն ու կարողությունը՝ ընդունելու և հաստատելու Աստծո մասին ավանդական ըմբռնումը և հասկացությունները (Hamilton 1961: 58):

Ըստ Համիլթոնի, այլ Աստվածը՝ «օգուտի նոսական-բարեփոխված» ավանդույթի Աստվածը, ոչ միայն հեռու է մեզանից, ոչ միայն հեռացել է մեզանից, այլ նաև անհամապատասխան է: Համիլթոնի համար էական է մարդուց Աստծո հեռու լինելը, քանի որ Աստծո այս «հեռավորությունը» հետևանք է Աստծո «այլության», իսկ դա իր հերթին նշանակում է, որ Աստծո «այլությունից» դեպի Աստծո բացակայությունը ընդամենը մեկ քայլ է: Եթե Աստված բացակայում է, ապա ինչպե՞ս

մարդը կարող է առ Աստված փորձ ունենալ: Հետևապես, մենք ապրում ենք Աստծո անհետացման, նրա բացակայության ժամանակահատվածում, որովհետև «Աստված հեռացել է, նա բացակա է, որոշ իմաստով՝ նույնիսկ մեռած է» (Hamilton 1961: 58): Եթե Աստված բացակայում կամ մեռած է, ապա քրիստոնյան կամ աստվածաբանը պետք է ճանաչի Հիսուսին որպես այս աշխարհի Տեր և ընդունի նրա իշխանությունն այս աշխարհի նկատմամբ:

Համիլթոնի կարծիքով «Աստծո մահը» չի նշանակում «կոռուպցիոն կամ թեիզմի Աստծո կորուստը, այլ տրանսցենդենտության իրական կորուստը: Այն Աստծո կորուստն է» (Hamilton 1965: 1220): Աստծո կորուստը, որը հաճախ փոխարինվում է «Աստծո մահը» արտահայտությամբ, կարևոր, նույնիսկ «միաբանող մոտիվ» է ռադիկալ աստվածաբանության համար: Ներկա ժամանակում «Աստծո մահվան» ֆենոմենն այն ապրումն է, որ ժամանակակից մարդը զգում է առօրյա կյանքում և ապրում այդ գիտակցումով: Համիլթոնի համար Աստված մեռած է, քանի որ ժամանակակից քրիստոնյան այլևս չի կարող հավատալ անձնական, տրանսցենդենտ, հրեա-քրիստոնեական ավանդույթի Աստծուն ու հույս ունենալ նրանից: Սակայն, հատկանշական է այն փաստը, որ ինչպես Վահանյանը և Ալթիցերը, այնպես էլ Համիլթոնը սպասում են «նոր աստվածահայտության» կամ Աստծո «մեկ այլ պատկերի», որը կազատագրի քրիստոնյային «բացակա-ներկա, անհանգստացնող Աստծուց» (Hamilton 1961: 66-67):

Ըստ Պոլ վան Բուրենի՝ ժամանակակից աշխարհիկ մարդու համար կա միայն մեկ իրականություն՝ այսկողմնային-աշխարհային իրականությունը, իսկ նրա կենսափոխափոխությունն ունի այսկողմնային կողմնորոշում: Ընդամենը, նրան չի հետաքրքրում այնկողմնա-

յին կրոնական իրականությունը և դրան վերաբերող հարցերը: Նա ապրում է ռեալ իրականության մեջ և փորձում է հասկանալ ու զգալ իրականությունն այնպես, ինչպես այն տրված է իր կենսափորձում: Հետևաբար, բոլոր հայտարարություններն Աստծո մասին անհրաժեշտ է հասկանալ որպես մարդու մասին հայտարարություններ և անհրաժեշտ է ազատվել այնպիսի անիմաստ եզրույթից, ինչպիսին է՝ «Աստված»: Պ. վան Բուրենին մտահոգում է այն հարցը, թե «ինչպե՞ս կարող է քրիստոնյան, ով ինքնին աշխարհիկ մարդ է, հասկանալ Ավետարանն աշխարհիկ իմաստով» (Buren 1963: 2): Ըստ վան Բուրենի, ում մոտեցումը հիմնված է անալիտիկ փիլիսոփայության ավանդույթի վրա, «Աստված» եզրույթի նշանակությունը հասկանալու համար անհրաժեշտ է կիրառել վերիֆիկացիայի սկզբունքը: Քանի որ «Աստված եզրույթի «ոչ-օբյեկտիվ» գործածումը վերիֆիկացիայի հնարավորություն չի տալիս, հետևաբար, այն անիմաստ է» (Buren 1963: 83): Ընդամին, եթե մենք չզիտենք, թե «ինչ» է Աստված, ապա նաև չենք կարող հասկանալ, թե ինչպես է «Աստված» եզրույթը գործածվել: Դա նշանակում է, որ Աստծո գաղափարը «իմացաբանական տեսանկյունից անիմաստ» է, քանի որ Աստծո գոյությունը և նրա բնությունը գիտական մեթոդներով ենթակա չեն վերիֆիկացիայի: Վան Բուրենը ընդունում էր անալիտիկ փիլիսոփայության այն նախադրույթը, ըստ որի՝ իրական իմացությունը և նշանակությունը կարելի է հաղորդել միայն այն լեզվով, որը էմպիրիկական ձևով վերիֆիկացվում է: Ըստ վան Բուրենի՝ աշխարհիկ դարաշրջանում Ավետարանի պրոբլեմը նրա ակնհայտ անիմաստ լեզվի տրամաբանության խնդիրն է, որը կարելի է պարզաբանել և հասկանալ լեզվաբանական վերլուծության միջոցով (Buren 1963: 84): Եթե միայն էմպիրիկական եղանակով

ստուգման ենթակա լեզուն է իմաստավոր, ապա ipso facto բոլոր լեզուները, որոնք վերաբերում են Աստծո գոյությանը, անիմաստ են, քանի որ մարդը չի կարող ստուգել և հաստատել Աստծո գոյությունը հինգ զգայարաններից որևէ մեկով: Պ. վան Բուրենը փորձում է նորովի մեկնաբանել քրիստոնեական հավատը՝ առանց Աստծուն անդրադառնալու:

Տրանսցենդենտի և իմանենտի հարաբերակցության հիմնախնդրի առնչությամբ ընդհանրությունն առկա է Ալթիցերի, Համիլթոնի և մասամբ վան Բուրենի հայացքներում: Մակայն տարբերությունն ավելի ակնհայտ ու էական է հատկապես Ալթիցերի և Վահանյանի դիրքորոշումներում:

Ընդհանուր առմամբ ռադիկալ աստվածաբանությունը տրանսցենդենտը դիտում է որպես բնության կրոնական արտահայտություն (Fackre 1971: 182-183): Մա է պատճառը, որ այն իր ուշադրությունը բևեռում է իմանենտության վրա, տրանսցենդենտ և այնկողմնային Աստծուն վերածում է իմանենտ, այսկողմնային Աստծո, և «ամբողջովին այլ» Աստվածը դառնում է մարմնավորված, «կենտիկ» Աստված՝ այն է Քրիստոս: Այս միտումը առկա է Ալթիցերի, Համիլթոնի և վան Բուրենի հայացքներում: Մակայն քննարկման համար ավելի էական ու նշանակալի է Ալթիցեր և Վահանյանի հակադրությունը: Մասնավորապես, տրանսցենդենտն անընդունելի է ռադիկալ աստվածաբանության ամենառադիկալ, ձախակողմյան ներկայացուցչի՝ Ալթիցերի համար, իսկ ռադիկալ աստվածաբանության աջակողմյան, ամենապահպանողական ներկայացուցիչը՝ Վահանյանը, այս հարցի վերաբերյալ ունի հակառակ դիրքորոշում:

Իր նոր աստվածաբանության համար «գերբնականի» արտահայտման նոր ձևերի, այսինքն՝ նոր հիմքերի որոնումներում Ալթի-

ցերը դիմում է Հեգելի և Նիցշեի փիլիսոփայություններին, ինչպես նաև Արևելքի միստիկական կրոններին ու պոետ-միստիկ Վ. Բլեյքի մտքերին: Հեգելի փիլիսոփայության միջոցով նա փորձում է հիմնավորել ավանդական քրիստոնեական Աստծո բացասման անհրաժեշտությունը: Ի հակադրություն Աստծո ավանդական քրիստոնեական ըմբռնման, այն է՝ տրանսցենդենտ, այնկողմնային, գերագույն էակ, ինքնաբավ, մեկուսացված ու հակառակ այս աշխարհին, Ալթիցերը առաջ է քաշում Աստծո մասին իր գաղափարը, ըստ որի՝ Աստված դիալեկտիկականորեն զարգացող առաջընթաց շարժում է:

Ըստ Ալթիցերի՝ աստվածաբանությունը պետք է կարողանա հասկանալ Աստծո ինքնահայտնության և նրա ինքնաբացասման կամ կենդիսի միջև առկա անխուսափելի փոխադարձ կապը: «Աստված, - նշում է նա, - ով բացահայտում է իրեն պատմության մեջ, այն Աստվածն է, ով արտահեղում է իրեն իր սկզբնական Կեցության լիությունից, հետևաբար, նա իրականում ու ճշմարտապես դրսևորվում է պատմության մեջ, որը դառնում է ոչ թե լոկ հայտնության ասպարեզ, այլ հենց Աստծո մարմնավորված Մարմին» (Altizer 1966<sup>b</sup>: 86): Ալթիցերի համոզմամբ՝ Աստված անանձնավորված հոգևոր իրականություն է: Եվ ինքնաբացասման ու ինքնօտարման այդ անդադար դիալեկտիկական գործընթացի շնորհիվ տեղի է ունենում Աստծո զարգացումը: Աստծո ներկայությունը հենց պատմության մեջ Աստծո ինքնօտարման և նրա էության ակտուալացման հետևանքն է: «Աստված, - նշում է Ալթիցերը, - ով գործում է աշխարհում և պատմության մեջ, այն Աստվածն է, ով բացասում է իրեն՝ աստիճանաբար ու վճռականորեն ոչնչացնում իր սեփական սկզբնական Ամբողջականությունը: Աստված այն Ամբողջականությունն է, որը ... լիովին

շարժվում է դեպի իր սկզբնական ինքնության հակապատկերը: Աստված կամ աստվածությունը դառնում է Աստված Քրիստոսում՝ անցնելով Իր սկզբնական ձևի փոփոխման միջոցով: Այսպիսով, տրանսցենդենտը դառնում է իմմանենտ, իսկ Հոգին՝ մարմին» (Altizer 1966<sup>b</sup>: 89-90):

Մակայն Աստծո մարմնավորումը և տարբալուծումը աշխարհում դեռ չի նշանակում, որ նա դադարեց լինել Աստված: Իր ինքնագարգացման գործընթացում ինչպիսի փոփոխություններ էլ կատարվեին նրա հետ, միևնույն է, նա ինքնին մնում է Աստված: «Աստված, - նշում է Ալթիցերը, - կենտիկ մետամորֆոզների առաջընթաց-շարժում գործընթաց է, որը մնում է ինքնին, անգամ եթե անցնում է բացարձակ ինքնաբացասման շարժման միջոցով» (Altizer 1966<sup>b</sup>: 91):

Հետևապես, Աստծո մարմնավորումը պատմության և աշխարհի մեջ նշանակում է միայն այն, որ Աստված բացասում է սեփական կեցության տրանսցենդենտ, վերացական նախամարմնավորված ձևը, երբ նա գոյություն ունի որպես զուտ իրականություն, որն անկախ էր պատմությունից ու աշխարհից: Ընդամին, Աստծո ինքնագարգացումը, նրա էության ակտուալացումն անհրաժեշտաբար ենթադրում են Աստծո կեցության տրանսցենդենտ ձևի բացասումը, որը նշանակում է, որ տրանսցենդենտ ու այնկողմնային Աստվածը դառնում է իմմանենտ և այսկողմնային Աստված: Հետևաբար, ազդարարելով Աստծո մահը՝ Ալթիցերը բացասում է ոչ թե Աստծուն որպես այդպիսին, այլ նրա կեցության որոշակի տրանսցենդենտ ձևը: Իսկ դա նշանակում է, որ քրիստոնեական Աստծո մահվամբ պետք է սպասել Աստծո «նոր ձևի» հայտնությանը և դրսևորմանը, բայց այս անգամ մարդու և աշխարհի մեջ:

Ըստ Ալթիցերի՝ ռադիկալ դիալեկտիկական մտածողությունը սկիզբ առավ Կիերկեգորից, սակայն այն ավարտուն ձև ստացավ Նիցշեի մոտ, մի մտածող, որը, Հայդեգերի բնութագրությամբ, վերջ դրեց արևմտյան մետաֆիզիկական ավանդույթին: Նիցշեի կողմից Աստծո մահվան ազդարարումը պարզապես փլուզեց կեցության տրանսցենդենտության մասին պատկերացումը: Այլևս չկա մետաֆիզիկական աստիճանակարգ, որը կարող է իմաստավորել կամ արժևորել գոյություն ունեցող կեցությունը կամ էականերին: «Աստծո մահը» դիալեկտիկական նշանակություն ունի, քանի որ այն «ոչ-ասել է» Աստծուն և տրանսցենդենտությանը: «Ոչ-ասելը» Աստծուն հնարավոր է դարձնում «այո ասել» մարդկային գոյությունը (Dasein, լիարժեք գոյություն այստեղ և հիմա): Հետևաբար, «բացարձակ տրանսցենդենտությունը վերածվում է բացարձակ իմմանենտության» (Altizer 1966<sup>6</sup>: 98): Համիլթոնը նույնպես համակարծիք է Ալթիցերին, ում համար «Աստծո մահը» նշանակում է ինչպես տրանսցենդենտի մահը, այնպես էլ տրանսցենդենտ Աստծո մահը: Մինչդեռ Վահանյանի տեսակետը լիովին տարբեր է Ալթիցերի տեսակետից: Ըստ Վահանյանի՝ Աստված տրանսցենդենտ է, այնպես որ չկա «ամբողջովին այլ» է և տարալուծված չէ իմմանենտի մեջ: Վահանյանն Աստծո մասին՝ որպես «ամբողջովին այլ» իր տեսակետում հետևում է Օտտո-Բարտ ավանդույթին և նեոթորոդոքսիային, ինչպես նաև կիերկեգորյան աստվածայինի և մարդկայինի միջև «անսահման որակական տարբերության» սկզբունքին, իսկ Ալթիցերը՝ Հեգելին:

Աստվածաբանության և քրիստոսաբանության հարաբերակցության հիմնախնդիրը Ալթիցերը, Համիլթոնը և վան Բուրենը հանգուցալուծում են ի օգուտ քրիստոսաբանության: Ալթիցերի համար քրիստոսաբանության

նությունն ավելի կարևոր է, քան Աստված կամ աստվածաբանությունը: Թեիզմը իմաստավորվում է քրիստոսաբանությամբ, և եթե կա Քրիստոս, ապա Աստված պետք չէ: Փաստորեն, Ալթիցերը առաջարկում է ոչ միայն «աստվածաբանություն առանց Աստծո», այլև «քրիստոսաբանություն առանց աստվածաբանության կամ Աստծո» տարբերակը: Այս կապակցությամբ Մանդերսն իրավացիորեն գրում է, որ «քրիստոսաբանությունն առանց աստվածաբանության մարդաբանություն է» (Sanders 1966: 180): Ալթիցերի այս տեսակետը քննադատել է Վահանյանը:

Ըստ Համիլթոնի՝ աստվածաբանությունը քրիստոսաբանություն է և Հիսուսը մեկնակետ է աստվածաբանության համար: Սա նշանակում է, որ Համիլթոնի աստվածաբանական հայացքները, ինչպես և Ալթիցերի ու վան Բուրենի հայացքները քրիստոսակենտրոն բնույթ ունեն: Այս տեսանկյունից հրեա ռադիկալ աստվածաբան Ռ.Ռուբենսթեյնը ճիշտ է բնութագրել նրանց հայացքները, հատկապես Համիլթոնինը՝ նշելով, որ «ռադիկալ քրիստոնեական աստվածաբանությունը խորապես քրիստոսակենտրոն է» (Rubenstein 1966: 247): Ի դեպ, ռադիկալ աստվածաբանության քրիստոսակենտրոն ուղղվածությունը ընդունել է նաև Ալթիցերը՝ մասնավորապես նշելով, որ ժամանակակից «աստվածաբանությունը գտնվում է հավատի ամբողջովին քրիստոսակենտրոն ձևի կոնցեպտուալ ձևակերպման գործընթացում» (Altizer 1973: 195): Այսպիսով, կարելի է ասել, որ Համիլթոնի քրիստոսաբանությունն անաստված քրիստոսաբանություն է:

Վան Բուրենը նույնպես, ինչպես և Համիլթոնը, իր ուշադրությունը կենտրոնացնում է Քրիստոսի և էթիկայի վրա: Ավելին, նա այն կարծիքին է, որ հավատի լեզուն իմաստավոր է, եթե այն կիրառվում է քրիստոնեական

կենսակերպում: Հետևաբար, այն կարող է ունենալ էթիկական նշանակություն, բայց ոչ տիեզերաբանական իմաստ (Buren 1963: 101): Անդրադառնալով Նոր կտակարանի այն մտքին, որ առանց Հիսուսի մարդը չի կարող ունենալ «Աստծո» մասին ճիշտ ըմբռնում, վան Բուրենը հանգում է այն եզրակացությանը, որ Հիսուսն է այն «բանալին» կամ միջոցը, որով մարդը կարող է հասկանալ իրեն և իր կյանքը (Buren 1963: 147-148), այն է՝ Հիսուսը դառնում է նրա կյանքի համար իդեալական օրինակ: Այսպիսով, Ալթիցերը, Համիլթոնը և վան Բուրենը ընդունում են «քրիստոսաբանություն առանց Աստծո» տարբերակը:

Վահանյանն այս առնչությամբ սկզբունքորեն հակադրվում է բոլորին՝ նշելով, որ «առանց Աստծո Հիսուսը լավագույն դեպքում կուռք է» (Vahanian 1966: 29): Վահանյանն այս «քրիստոնյա աթեիստների» գաղափարական համակարգն անվանում է «աթեոսոֆիա» կամ ավելի ճիշտ՝ «քրիստոսոֆիա» (Vahanian 1966: 3) (բառի դրական, քան թե բացասական իմաստով, քանի որ այդ մարդիկ իրենց համարում են քրիստոնյաներ)<sup>2</sup>: Եթե Աստծո մահը տեղի է ունեցել, իրավացիորեն գրում է Վահանյանը, ինչն իրոք այդպես է, ապա այն ոչ թե իր դիրքերը զիջելու միջոցով է դարձել իմմանենտական մշակութային մտածելակերպի կամ գաղափարական համակարգի արդյունք, այլ որովհետև քրիստոսոֆիան դեռ շարունակում է մղել հին ճակատամարտը, որը տանուլ է տրվել Աստծո մահվամբ: Ահա թե ինչու այսպես կոչված քրիստոսոֆիական այլընտրանքային մոտեցումն այն «բրածոյի» նկատմամբ, որին վերածվել է քրիստոնեությունը,

կա՛մ պարզապես միստիկական ռացիոնալիզմի առավելագույն նմիրում է, կա՛մ էլ միստիկական դեիզմի գերագույն ռացիոնալացում (Vahanian 1966: 4): Մակայն ճիշտ չէ մերժել Աստծո մահվան իրականությունը՝ վերածելով այն ինչ-որ նորարարական, տարաբնույթ փրկաբանական հասկացության, քանի որ «Աստծո մահը» իմաստ ու նշանակություն ունի միայն այն դեպքում, երբ այն ըմբռնվում և ընդունվում է որպես մշակութային երևույթ: Հետևաբար, այն, ինչ լուկ մշակութային երևույթ է, նրանց կողմից վերածվում է հավատամքի: «Աստծո մահվան» աստվածաբանության մյուս ներկայացուցիչներն այդպես էլ ուշադրություն չդարձրին այն հանգամանքի վրա, որ «քրիստոնեական հավատը ռադիկալ է այնքանով, որքանով այն պատկերամարտական է» (Vahanian 1966: 5): Իսկ եթե մենք կորցնում ենք հավատի պատկերամարտական բնույթը, ապա այն, ինչ մենք ունենք, կրոնականության մի նոր ձևի դրսևորում է:

Կրոնականի և աշխարհիկի (սեկուլյար) հարաբերակցության հիմնախնդիրը ռադիկալ աստվածաբանները լուծում են այսպես կոչված «պանթեիստական» համատեքստում: Նախ և առաջ նրանք ընդունում են այս աշխարհը և փորձում են քրիստոնեությանը տալ այսաշխարհային և սոցիալական միտվածություն, որով կհաղթահարեն ինչպես ավանդական քրիստոնեության, այնպես էլ նեոօրթոդոքսիայի հակասոցիալական, աշխարհամերժողական և ինքնամեկուսացված միտումը: Նրանք փորձում են տարրալուծել կրոնականը աշխարհիկի մեջ և այս աշխարհում սրբազնայինի արտահայտման նոր ձև գտնել հենց աշխարհիկի մեջ, որով կփորձեն հաղթահարել քրիստոնեության մեջ ձևավորված կրոնականի և աշխարհիկի անառողջ դիխոտոմիան: Կրոնականի և աշխարհիկի հարաբերակցության հիմնախնդիրն անդրա-

<sup>2</sup> Հարկ է նշել, որ Վահանյանը ոչ մի տեղ իր այս գրքում չի նշում, թե ում է խոսքը վերաբերում կամ ում համար է օգտագործում «քրիստոնյա աթեիստներ» արտահայտությունը, սակայն դա անուղղակիորեն վերաբերում է Ալթիցերին, Համիլթոնին և մասամբ նաև վան Բուրենին:



դարձել են Ալթիցերը, Համիլթոնը, վան Բուրենը, Վահանյանը և Ն.Քոկսը: Նրանցից հատկապես ուշագրավ են Վահանյանի և Քոկսի տեսակետները: Ի դեպ, Վահանյանը նրանցից միակն է, որ «Աստծո մահվան» աստվածաբանությունը զարգացրեց ընդհուպ մինչև աշխարհիկ աստվածաբանության: Բացի այդ, Վահանյանը տարբերություն է դնում աշխարհիկի և աշխարհայինի միջև՝ դիտելով առաջինը որպես բացասական երևույթ, որպես կրոնականության ձև, իսկ երկրորդը՝ դրական՝ համարելով այն որպես այս աշխարհում Աստծո և մարդու գործողությունների ասպարեզ, որպես արարչագործություն, որով Աստված տարբերվում է արարված էակից:

Հարվի Քոկսը ռադիկալ կրոնական մտածող է աշխարհիկ իմաստով կամ «աշխարհիկ» աստվածաբան է, բայց ոչ «Աստծո մահվան» աստվածաբան: Թեև Քոկսի և Վահանյանի աստվածաբանական գաղափարների շարադրման ոճը տարբերվում է /այս ոճական յուրակերպությունը պայմանավորված է նրանով, որ ըստ որոշ հետազոտողների, Քոկսը կրոնի սոցիոլոգ է (Добренёков 1980: 79; Montgomery 1967: 30), իսկ Վահանյանը՝ գրական քննադատ (Добренёков 1980: 79; Montgomery 1967: 28)/, այնուամենայնիվ նրանց հայացքներում կան ընդհանրություններ հատկապես կրոնականի և աշխարհիկի հարաբերակցության հարցի քննարկման համատեքստում: Երկուսն էլ ընդունում են «աշխարհիկի» աստվածաշնչյան մոդելը որպես «աշխարհիկի» ճիշտ ըմբռնում, որը, սակայն, սխալ է հասկացվել և մեկնաբանվել, հետևապես նաև սխալ կիրառվել քրիստոնեության կողմից, ինչն էլ պատճառ է դարձել կրոնականի և աշխարհիկի միջև անառողջ դուալիզմի առաջացման համար: Քրիստոնեության կողմից աշխարհի նկատմամբ ունեցած իր մերժողական և արհամարհական վե-

րաբերմունքը ոչ միայն իր բնույթով հակասոցիալական, այլև հակասաստվածաշնչյան էր: Նման դիրքորոշումը չէր համապատասխանում Աստվածաշնչում, հատկապես Հին կտակարանում Իսրայելին տրված Աստծո մոդելին: Քոկսը, Վահանյանի նման, փորձում է բացահայտել անտեսված և թյուր մեկնաբանված աստվածաշնչյան այս մոդելը: Նրանք փորձում են գտնել աստվածաշնչյան իմաստով իսկական և ճշմարիտ (աշխարհային, բայց ոչ աշխարհիկ) քրիստոնեություն:

Քոկսի կարծիքով՝ քաղաքային կենսակերպը կամ ուրբանիզացիան էական փոփոխություններ են մտցրել մարդկանց ապրելակերպում, որի ժամանակակից դրսևորումն իրականացվում է գիտության և տեխնիկայի միջոցով, ինչն էլ նպաստեց ավանդական կրոնի փլուզմանը (Cox 1966: 1): Աշխարհիկացման գործընթացը, լինելով դարակազմիկ երևույթ, նախանշում է այն փոփոխությունները, որոնց լույսի ներքո մարդը հասկանում է իրեն, իր կյանքը և հասարակությունը: Աշխարհիկացումը (սեկուլյարիզացիան) դրական երևույթ է, որով «հասարակությունը և մշակույթը ազատագրվում են կրոնական հսկողության խնամակալությունից և կաղապարված մետաֆիզիկական աշխարհայացքից» (Cox 1966: 20): Քոկսը, Վահանյանի նման, տարբերակում է աշխարհիկացման գործընթացը (սեկուլյարիզացիան) կամ աշխարհայինությունը աշխարհիկությունից (սեկուլյարիզմից): Մեկույլարիզմը նա համարում է գաղափարախոսություն, որը գործառնում է որպես «նոր կրոն»: Ըստ Քոկսի՝ մենք ապրում ենք «աշխարհիկ քաղաքում» մի դարաշրջանում, որում կրոնն այլևս տեղ չունի: Ուսումնասիրելով հինկտակարանային արարչագործության, Իսրայելի ժողովրդի ելքը Եգիպտոսից և Մինա լեռան ուխտի (երբ Աստված Մովսեսին տվեց Տասնա-



բանյան և այլ օրենքներ) պատմությունները՝ Քոկսը հանգեց այն եզրակացության, որ դրանք «ազատագրող-աշխարհիկացնող առասպելներ» են, որոնց ժամանակակից օրինակը «աշխարհիկ քաղաքն» է: Քաղաքային կյանքն իր անանունությամբ և շարժունությամբ կարող է ազատել մարդուն փակ աշխարհայացքից ու կեղծ արժեհամակարգի գերությունից և բաց անել նրա առջև իսկական տրանսցենդենտությունը:

Աշխարհիկացումը շրջանցում է կրոնը և ռելյատիվացնում է կրոնական աշխարհայացքը: Այն այլևս «կրոնական կանոնների և ծեսերի մեջ չի որոնում իր համար բարոյականություն և իմաստ» (Cox 1966: 3) և ոչ էլ առաջնորդվում է իր կյանքում դրա նորմերով: Եթե մարդուն անհրաժեշտ է տրանսցենդենտություն, նույնիսկ քրիստոնեական, ապա դա հնարավոր է միայն աշխարհիկի միջոցով: Իսկ դա հնարավոր է իրագործել արվեստի, սոցիալական փոփոխությունների և «ես-դու» հաղորդակցության միջոցով: Դա նշանակում է, որ տրանսցենդենտն այդ ճանապարհով կարող է բացահայտել մեզ նոր անուն, որովհետև «Աստված» բառն այլևս կորցրել է իր օգտակարությունը և ավելի շուտ գուցորդվում է հին կուրքերի հետ: «Սա նշանակում է, - նշում է Քոկսը, - որ մենք պետք է ժամանակավորապես դադարենք խոսել «Աստծո» մասին ... մինչև որ նոր անուն հայտնվի» (Cox 1966: 266): Սա տարօրինակ չպետք է լինի մեզ համար, քանի որ «Աստվածաշնչյան Աստծո թաքնվածությունը հանդիսանում է Աստծո մասին ուսմունքի կենտրոնը: Աստված չի հայտնվում մարդուն, այլ ցույց է տալիս նրան, որ ինքը մարդկային պատմության մեջ գործում է իր թաքնվածությամբ» (Cox 1966: 258): Այսպիսով, ժամանակակից քաղաքային-աշխարհիկ կյանքը միջոց է, որով մարդը մեր դարաշրջանում կարող է ազատել իրեն կուռ-

քերի ու աստվածների գերությունից և դարձյալ հանդիպել իսկական Տրանսցենդենտին:

Քոկսը, Վահանյանի նման, աշխարհիկ աստվածաբանության ջատագով է, և, բնականաբար, նրա աստվածաբանությունն ուղղված է դեպի աշխարհը, որի հորիզոնում երևում է միայն մարդկային պատմությունը: Այս աշխարհում մարդը պետք է գործի որպես «քաղաքական» էակ արխատոտեյան իմաստով, և որտեղ նա պետք է դառնա լիարժեք մարդ: Հետևաբար, Քոկսի համար անընդունելի են մետաֆիզիկական մտակառուցումներն այսկողմնային կամ այնկողմնային աշխարհի ու իրականության մասին, և «Աստծո մահվան» տրամադրությունը նրա համար նշանակում է հեռանալ և ազատվել «Աստծո տարածական սիմվոլականացումից և մետաֆիզիկական դուալիզմի բոլոր ձևերից» (Cox 1967: 246-247): Քոկսը ինչպես հակամետաֆիզիկական, այնպես էլ որոշակի իմաստով նաև պատկերամարտ ռադիկալ աշխարհիկ աստվածաբան է: Այս առումով Քոկսի հայացքներում ընդհանրությունները Վահանյանի հայացքների հետ ավելի շատ են, քան մյուս ռադիկալ աստվածաբանների տեսակետների հետ:

Այսպիսով, Վահանյանը ռադիկալ կրոնական մտածողներից առաջինն էր, ով իր աշխատություններում անդրադարձավ քրիստոնեության հիմնախնդիրներին: Ուսումնասիրելով արևմտյան ապակրոնականացված աշխարհում քրիստոնեության տեղը և դերը ժամանակակից մշակույթի մեջ՝ Վահանյանը հանգեց այն եզրակացությանը, որ քրիստոնեությունը հայտնվել է ճգնաժամի մեջ, ավելին, արևմտյան քաղաքակրթության ու մշակույթի մեջ քրիստոնեական կրոնի Աստվածը մեռած է: Ըստ Վահանյանի՝ «Աստծո մահը» մշակութային երևույթ է, և նա նկատի չունի «Աստծո մահվան» պատմական կամ մետաֆիզիկական նշանակությունը: Վահանյանն

աստվածաբաններից առաջինն էր, որ գործածեց «Աստծո մահվան» գաղափարը աստվածաբանության մեջ մշակութաբանական իմաստով՝ տալով այդ խոսքին նոր նշանակություն մեր ժամանակի համար, մինչդեռ Ալթիցերը և Համիլթոնը «Աստծո մահվան» մոտիվը աստվածաբանության մեջ կիրառեցին հենց աստվածաբանական, մետաֆիզիկական իմաստով: Վահանյանի տեսակետները քրիստոնեության հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք նկարագրական-ախտորոշիչ և վերլուծող-արժևորող բնույթ ունեին, մեծ բանավեճերի տեղիք են տվել ամերիկյան

աստվածաբանական շրջանակներում և սենսացիոն նշանակություն ունեցել քրիստոնեական աշխարհի համար: Նա առաջնակարգ դեր ունեցավ, համապատասխան հող նախապատրաստեց և գաղափարական նպաստավոր միջավայր ստեղծեց ԱՄՆ-ում 1960-ականների ռադիկալ կամ «Աստծո մահվան» աստվածաբանության առաջացման համար: Նրա կրոնափիլիսոփայական հայացքներն իրենց ուրույն տեղն ունեն ամերիկյան կրոնափիլիսոփայական ու աստվածաբանական մտքի համատեքստում:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Altizer, Th. (1966<sup>a</sup>). America and the Future of Theology. In: Radical Theology and The Death of God by Thomas J.J. Altizer and William Hamilton. N.Y.: The Bobbs-Merrill Company, Inc. Publishers.
2. Altizer, Th. (1973). Catholic Theology and the Death of God. In: Religion in Contemporary Thought. (Ed.) George F. McLean, New York: Alba House.
3. Altizer, Th. (1966<sup>b</sup>). The Gospel of Christian Atheism. Philadelphia: The Westminster Press.
4. Altizer, Th. (1966<sup>c</sup>). Theology and the Death of God. In: Radical Theology and The Death of God by Thomas J.J. Altizer and William Hamilton. N.Y.: The Bobbs-Merrill Company, Inc. Publishers.
5. Altizer, Th. (1965). "Word and History." Theology Today, Vol. XXII, No 3, October.
6. Altizer, Th. and Hamilton, W. (1966<sup>d</sup>). Radical Theology and The Death of God. N. Y.: The Bobbs-Merrill Company, Inc. Publishers.
7. Buren, P. van. (1963). The Secular Meaning of the Gospel: An Analysis of Its Language. New York: The Macmillan Company.

8. Cox, H. (1967). The Death of God and the Future of Theology. In: New Theology No 4. (Eds.) Martin E. Marty and Dean G. Peerman, New York: The Macmillan Company.
9. Cox, H. (1966). The Secular City. Secularization and Urbanization in Theological Perspective. New York: The Macmillan Company.
10. Fackre, G. (1971). The Issue of Transcendence in the New Theology, the New Morality, and the New Forms. In: New Theology, No. 4. New York: The Macmillan Company.
11. Gilkey, L. (1965). "Is God Dead? An Examination of a Contemporary View." Bulletin of Crozer Theological Seminary, January.
12. Hamilton, W. (1961). The New Essence of Christianity. New York: Association Press.
13. Hamilton, W. (1965). "The Shape of a Radical Theology." The Christian Century, LXXXII, No 40, October 6.
14. Kierkegaard, S. (1960). Attack Upon Christendom. Boston: The Beacon Press.
15. Kliever, L. (1967). "Mapping the Radical Theologies." Religion in Life, Vol. XXXVI, No. 1, Spring.
16. Montgomery, J. (1967). A Philosophical-Theological Critique of the Death of God Movement. In: The Meaning of the Death of God. (Ed.) Bernard Murchland. New York: Random House.

17. Robinson, J. (1963). *Honest to God*. Philadelphia: The Westminster Press.
18. Rubenstein, R. (1966). *After Auschwitz: Radical Theology and Contemporary Judaism*. Indianapolis, New York: The Bobbs-Merrill Company.
19. Sanders, J. (1966). "The Validity of the Old Testament: Three Theses." *Union Seminary Quarterly Review*, N 2, Part 1, January.
20. Trotter, F. (1967). Variations on the "Death of God" Theme in Recent Theology. In: *The Death of God Debate*. (eds.) Jackson Lee Ice and John J. Carey. Philadelphia: The Westminster Press.
21. Vahanian, G. (1961<sup>a</sup>). "Christianity's Lost Iconoclasm." *The Nation*, Vol. 192, N 16, April 22.
22. Vahanian, G. (1968). "Critique: I." *Theology Today*, Vol. XXV, N 3, October.
23. Vahanian, G. (1966). *No Other God*. New York: George Braziller.
24. Vahanian, G. (2008). *Praise of the Secular*. Charlottesville and London: University of Virginia Press.
25. Vahanian, G. (1957). "The Empty Cradle." *Theology Today*, Vol. XIII, N 4, January.
26. Vahanian, G. (1961<sup>b</sup>). *The Death of God: the Culture of Our Post-Christian Era*. New York: George Braziller.
27. Vahanian, G. (1959). "This Post-Christian Era." *The Nation*, Vol. 189, N 20, December 12.
28. Vahanian, G. (1964). *Wait Without Idols*. New York: George Braziller.
29. Добренёв, В. (1980). *Современный протестантский теологический модернизм в США: Его замыслы и результаты*. М.: Изд-во Московского университета.

*Անդրանիկ ՍՏԵՓԱՆՅԱՆ*

## ԳԱԲՐԻԵԼ ՎԱՀԱՆՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՌԱԴԻԿԱԼ ԿՐՈՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂ

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է Արևմտյան քաղաքակրթության մեջ ռադիկալ մտածողության կրոնական ձևերից ամենաարմատականը՝ ռադիկալ կամ «Աստծո մահվան» աստվածաբանության ներկայացուցիչների՝ Գաբրիել Վահանյանի, Թոմաս Ալթիցերի, Ուիլյամ Համիլթոնի, Պոլ վան Բուրենի և Հարվի Քոկսի տեսակետների հակիրճ, համեմատական վերլուծությունը: Կրոնափիլիսոփայական կամ աստվածաբանական այս հոսանքի բոլոր ներկայացուցիչները ռադիկալ կրոնական մտածողներ են, որոնց ուշադրության կենտրոնում եղել են քրիստոնեական կրոնին վերաբերող մի շարք հիմնախնդիրներ, որոնք ձևավորել են թեմատիկ ընդհանրությունները

նրանց խնդրակարգում, սակայն տարբերություններն առաջացել են այդ հիմնախնդիրների մեկնաբանության մեջ, քանի որ տարբեր տեսանկյուններից են մոտեցել միևնույն ֆենոմենին: Այդ հիմնախնդիրները կարելի է համախմբել հետևյալ գաղափարների շուրջ. Աստծո գաղափարի և իրակաության, տրանսցենդենտի-իմմանենտի, աստվածաբանության-քրիստոսաբանության և կրոնականի-աշխարհիկի հարաբերակցության հիմնախնդիրներ, որոնք ծառայել են ինստիտուցիոնալ քրիստոնեության առջև, ինչպես նաև դարձել լուրջ խոչընդոտ վերջինիս և ժամանակակից աշխարհիկ կողմնու-

րոշում ունեցող մարդու ու հասարակության միջև:

*Հանգուցային հասկացություններ. Ռադիկալ կրոնական մտածողություն, ռադիկալ*

աստվածաբանություն, «Աստծո մահվան» աստվածաբանություն, սեկուլյարիզմ, տրանսցենդենտ, իմմանենտ, աշխարհիկ աստվածաբանություն, նեոօրթոդոքսիա, հետքրիստոնեական դարաշրջան:

*Andranik STEPANYAN*

## GABRIEL VAHANIAN AS A RADICAL RELIGIOUS THINKER

### ABSTRACT

This article examines comparative analysis of the most deep-seated form of the radical religious thinking in the Western Civilization, that is, the views of radical or the Death-of-God theologians – Gabriel Vahanian, Thomas Altizer, William Hamilton, Paul van Buren and Harvey Cox. All of the representatives of this theological or religious-philosophical stream are radical religious thinkers who have focused on a number of fundamental issues related to Christian religion which have formulated the thematic commonalities in their problematic. However, the differences have come forth from the interpretation of these issues as they have viewed the same phenomenon from different

aspects. These fundamental issues can be united around the following ideas: issues of relations between the idea of and reality of God, transcendent-immanent, theology-Christology and religious-secular which have posed a challenge to the institutional Christianity as well as become a serious hindrance between the latter and a contemporary secular human being and the society.

*Key concepts:* radical religious thinking, radical theology, Death of God theology, secularism, transcendent, immanent, secular theology, neo-orthodoxy, post-Christian era.

*Андраник СТЕПАНЯН*

## ГАБРИЭЛЬ ВАГАНЯН КАК РАДИКАЛЬНЫЙ РЕЛИГИОЗНЫЙ МЫСЛИТЕЛЬ

### РЕЗЮМЕ

В статье автор проводит сравнительное изучение самой радикальной религиозной формы радикального мышления – теологии смерти Бога или радикальной теологии в контексте Западной цивилизации. Все представители этого религиозно-философского течения являются радикальными религиозными мыс-

лителями. Проводится сравнительное изучение взглядов этого теологического направления – Габриэля Ваганяна, Томаса Алтицера, Уильяма Гамильтона, Пола ван Бурена и Гарви Кокса. В центре их внимания был ряд связанных с христианством проблем, которые составили тематическую общность проблематики. Одни и

те же проблемы часто имели различия в интерпритации, поскольку каждый религиозный мыслитель с определенной точки зрения подходил к данному феномену или проблематике. Основные проблемы можно классифицировать вокруг следующих идей: проблема идеи и реальности Бога, соотношения трансцендентного-имманентного, теологии-христологии, религиозного-секулярного. Эти проблемы стоят перед институциональным христианством и

являются преградой между христианством и современным человеком, а так же обществом, имеющим секулярную ориентацию.

*Ключевые понятия:* радикальное религиозное мышление, радикальное богословие, теология «смерти Бога», секуляризм, трансцендентное, имманентное, секулярная теология, неоортодоксия, пост-христианская эра.

## «ԿՐՈՆԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ԿՐՈՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳԻՏԱԿԱՐԳԵՐ

Սույն հոդվածը նվիրված է XIX դարում ծնված ամենաերիտասարդ գիտակարգերից մեկի՝ կրոնագիտության՝ որպես առանձին գիտակարգի կազմավորմանն ու մի շարք հարակից խնդիրների լուսաբանմանը: Այս աշխատանքը, ըստ էության, հումանիտար և հասարակական տարբեր գիտակարգերի կողքին «կրոնի մասին գիտության» ու «կրոնագիտության» տեղի ու դերի հստակեցման վերաբերյալ կատարված առաջին փորձն է: Փորձել ենք անդրադառնալ նաև որոշ տերմինաբանական խնդիրների, գոյություն ունեցող փաստերի հիման վրա լուսաբանել կրոնագիտական գիտելիքի միջուկը կազմող հումանիտար-հասարակագիտական գիտակարգերի դերը կրոնագիտության համար:

Որոշ մասնագետներ, կարևորություն չտալով տերմինաբանությանը (եզրութաբանություն), դրանք համարում են երկրորդական և ոչ կարևոր: Ի պատասխան նրանց՝ խորհրդային հայտնի գիտնական, ազգագրագետ Ս.Տոկարևը գրում է. «Գիտական համակարգումը, փաստերի դասակարգումը, հիմնական հասկացությունների ու եզրերի հստակեցումը ցանկացած գիտության առաջնահերթ խնդիրն է համարվում» (Токарев 1990: 14):

Առաջին անգամ «կրոնի մասին գիտություն» հասկացությունը «Religionswissenschaft»<sup>1</sup>

օգտագործվել է Գերմանիայի Մագդեբուրգ քաղաքում 1804-1806 թթ. լույս տեսած մի տարեգրքում՝ Կ.Հենկելի խմբագրությամբ, որը կոչվում էր. «կրոնագիտության թանգարանի իր ամբողջ ծավալով» (Шахнович 2006: 20): Առաջին գիրքը, որտեղ այդ հասկացությունն առաջին անգամ օգտագործվեց որպես գիտաբան՝ հատուկ ակադեմիական գիտության նշանակությամբ, համարվում է 1834 թ. լույս տեսած չեխ փիլիսոփա, տրամաբան և մաթեմատիկոս Բերնարդ Բոլցանոյի (1805-1820 թթ. զբաղեցնում էր Պրագայի համալսարանի կրոնների պատմության ամբիոնի վարիչի պաշտոնը) աշխատություն-դասագիրքը: «Կրոնի մասին գիտության» խնդիրներն ու նպատակները Բ.Բոլցանոյի կողմից դիտարկվեցին նրա գիտական ուսուցման համընդհանուր համատեքստում (Шахнович 2006: 20):

Գերմանիայում 1860-1870-ական թթ. գիտնականների շրջանում օգտագործվում էր նաև «Wissenschaft der religion» եզրը, որը սակայն հետագայում լայն կիրառություն չստացավ: Ֆրանսիայում այդ ժամանակ «կրոնների մասին գիտություն» հասկացությունը «La science des religions» գիտական գործածության մեջ մտցրեց Պ.Լ.Էբլանը (Шахнович 2006: 20-21), ով այդ հասկացությանը տվեց հատուկ բովանդակություն՝ վերոհիշյալ եզրույթի ներքո հասկանալով կրոնի անտիկ փիլիսոփայության մեջ առասպելական մոտիվների

<sup>1</sup> Գերմաներեն բացատրական բառարանում Religionswissenschaft-ը մեկնաբանվում է հետևյալ կերպ. Religionswissenschaft-ը գիտություն է, որն ուսումնասիրում է կրոնների բովանդակություն-

նը, ձևերը և վերջիններիս կապը կյանքի այլ բնագավառների հետ (տե՛ս Dudenredaktion 2006: 1383):

այլաբանական մեկնություն: 1864 թ. հայտնի գիտնական Էմիլ Բերնուն կրոնների հետազոտմանը նվիրված իր աշխատությունը նույնպես անվանեց «գիտություն կրոնների մասին» (Шахнович 2006: 21)՝ կիրառելով այդ եզրը հենց այն նույն նշանակությամբ, որ օգտագործել էին Հենկեն և Բոլցանոն:

Անգլերեն եզրը «the science of religion» առաջին անգամ գիտական գործածության մեջ ներառեց գերմանացի գիտնական, արևելագետ, հնդկագետ, լեզվաբան, համեմատական առասպելաբանության, կրոնագիտության և լեզվաբանության հիմնադիր, Ժամանակակից կրոնագիտության մեջ առասպելաբանական տեսության հիմնադիր համարվող, Օբսիդորդի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Մաքս Մյուլլերը, ով այդ եզրն առաջին անգամ օգտագործեց 1860 թ. լույս տեսած իր «Սեմական մոնոթեիզմ» հոդվածում և որից հետո էլ այն լայնորեն սկսեց կիրառել 1860-1870-ական թթ. լույս տեսած իր մյուս աշխատություններում (Müller 1867, Müller 1873): Որպես ինքնուրույն գիտակարգ՝ «կրոնի մասին գիտությունը» վերջնականապես ձևավորվեց XIX դարի երկրորդ կեսին Արևմտյան եվրոպայում:

Այսպիսով, «կրոնի մասին գիտության» հիմնադիրը համարվում է Ֆ.Մյուլլերը<sup>2</sup>: «Կրոնի մասին գիտության» մեթոդական խնդիրներով մինչև XIX դարի երկրորդ կեսը զբաղվել են շատ գիտնականներ, այդ թվում նաև Մաքս Մյուլլերը: Կրոնագիտության պատմության XX դարի հայտնի մասնագետ Էրիկ Շարպը գրում է. «XIX դարասկզբին կրոնների ուսումնասիրման ոլորտը չափազանց լայն էր, այն լի էր բազմապիսի տվյալներով և փաստացիորեն այնտեղ քառս էր տիրում: Մաքս Մյուլլերից հետո այն ձեռք բերեց ընդհանուր իմաստ, որն արդեն լիովին կարելի էր յուրացնել՝ օգտա-

<sup>2</sup> Այս տեսակետը ընդունվում է աշխարհի բոլոր հեղինակավոր կրոնագետների կողմից:

գործելով որոշ գիտական մեթոդներ. այլ խոսքերով ասած՝ հիանալի հնարավորություն ընձեռվեց բացատրելու բազմաթիվ տվյալներ գիտականորեն» (մեջբերումը՝ ըստ Красников 2007: 32):

Կրոնների պատմությունն ուսումնասիրող շատ մասնագետներ սկսեցին այդուհետ կիրառել «Religionswissenschaft» գիտաբառը: Մշակելով կրոնների պատմության վերաբերյալ սեփական մոտեցումները՝ նրանք «Religionswissenschaft» եզրի տակ սովորաբար հասկանում էին բոլոր կրոնները<sup>3</sup>՝ սկսած կրոնի ամենավաղ ձևերից մինչև ազգային ու համաշխարհային կրոնները՝ հակադրվելով ավանդաբար գոյություն ունեցող «Religionsgeschichte» (գերմ. եզ. կրոնի պատմություն) եզրույթին, որի տակ հիմնականում հասկացվում էին միաստվածային կրոնները կամ այսպես կոչված գրոց ժողովուրդները (Шахнович 2006: 21), սակայն «Religionsgeschichte» եզրի ներքո իհարկե հիմնականում ավանդաբար հասկացվել է քրիստոնեությունը՝ որպես «միակ ճշմարիտ կրոն»:

XX դարասկզբին այս կարևորագույն խնդրին է անդրադարձել նաև հայտնի մշակութային մարդաբան Լ.Շտերնբերգը. ըստ գիտնականի՝ «կրոնի մասին գիտությունը» և «կրոնների պատմությունը» բացարձակ տարբեր գիտակարգեր են, որոնցից առաջինն ուսումնասիրում է բոլոր կրոնների և կրոնական երևույթների պատմական զարգացումը, իսկ երկրորդը՝ միայն զարգացած կրոնները:

«Նախնադարյան կրոնը ազգագրության լույսի ներքո» հայտնի աշխատություն մեջ՝

<sup>3</sup> Մշակելով կրոնների ուսումնասիրման հերմենևտիկական մոդելը՝ գերմանացի հայտնի կրոնագետ Յ. Վախը գրում է. «Religionswissenschaft-ի գլխավոր նպատակը պետք է լինի այլ կրոնների ըմբռնումը» (Wach. 1968: 126): Այլ կրոններ ասելով՝ գիտնականը նկատի ունի քրիստոնեությունից բացի այլ կրոններ ևս:

«կրոնական հավատալիքների պատմական զարգացումների վերաբերյալ դասախոսություններ» հաստատում իր տեսությունը հիմնավորելու համար գիտնականը գրում է. «Խոսելով կրոնական հավատալիքների պատմական զարգացումներից՝ անհրաժեշտ է նշել, որ ընդհանուր ազգագրության այս բաժինն իրենից ներկայացնում է բոլորովին ինքնուրույն գիտակարգ և առավել ճիշտ կլիներ անվանել այն «գիտություն կրոնի մասին»: Այս երիտասարդ գիտակարգը պետք է հստակորեն առանձնացնել այն գիտակարգից, որը հայտնի է շատ վաղուց «կրոնների պատմություն» անվամբ: Կրոնների պատմությունն ուսումնասիրում է միայն բարձր ու զարգացած կրոնները, այնպիսիք, ինչպիսիք են բուդդայականությունը, հուդայականությունը, քրիստոնեությունը, իսլամը և այլն, իսկ կրոնների վաղ ձևերի ուսումնասիրությունը կրոնների պատմության ուսումնասիրման շրջանակներից դուրս է: Նույնիսկ Պ.Շանտեպի դը լա Մոսեի առավել քան հայտնի «կրոնների պատմության դասագրքում» ներկայացված են ոչ թե կրոնների վաղ ձևերն ու դրանց պատմական զարգացումը, այլ միայն «բարձր ու զարգացած կրոնները» (Штернберг 2012: 241):

Անդրադառնալով Պ.Շանտեպի դը լա Մոսեի XIX դարի աշխատությանը՝ նախ և առաջ պետք է նշել, որ հիշյալ աշխատության մեջ հեղինակը ամեննին էլ չի խոսում միայն բարձր ու զարգացած կրոնների մասին: Երկու հատորից բաղկացած վերոհիշյալ աշխատության առաջին հատորում հեղինակը խոսում է ոչ միայն հուդայականության և իսլամի, այլ նաև աֆրիկյան, ամերիկյան, մոնղոլական, Օկեանիայի, չինական, ճապոնական, եգիպտական, բաբելական, ասորական և Առաջավոր Ասիայի հյուսիսային մասի սեմական ժողովուրդների պաշտամունքային տարբեր

ձևերի և աստվածությունների վերաբերյալ: Աշխատության երկրորդ հատորում գիտնականը մանրամասն խոսում է հնդկական ազգային աստվածությունների ու հավատալիքների (բրահմայականություն, վեդայականություն), ջաինիզմի, բուդդայականության, հինդուիզմի, գրադաշտականության, հունական, հռոմեական, գերմանական և սլավոնական կրոնների ու դրանց պատմական զարգացման մասին: Վերը շարադրվածից պարզ է դառնում, որ Պ.Շանտեպի դը լա Մոսեի մեծածավալ երկհատոր աշխատության մեջ խոսվում է թե՛ հին ժողովուրդների տարբեր հավատալիքային համակարգերի, թե՛ ազգային և թե՛ համաշխարհային կրոնների (բուդդայականություն, իսլամ) մասին (Cocce 1899):

Հիմնավորված է, որ սոցիալական կառավարման և համաշխարհային հանրության մեջ դրա սոցիոլոգիական բաղադրիչի կատարելագործումը մեծ մասամբ պայմանավորված է նոր դարաշրջանի յուրահատկություններով, միջազգային հարաբերությունների կարգավորման մեջ Ռուսաստանի փոփոխված դերով: Այն, իհարկե, կախված է նաև ռուս հասարակության ներքին կառավարման վիճակից: Ռուսաստանի համար ներքին սոցիալական կառավարման կատարելագործման գլխավոր ուղղություն է դառնում պետության մասնակցության ուժեղացումը սուբյեկտների հարաբերությունների կարգավորման մեջ ֆինանսատնտեսական գործունեության ոլորտում, Ռուսաստանի քաղաքացիների կյանքի որակի բարձրացման մեջ:

*Հանգուցային հասկացություններ.* գլոբալացում, նոր դարաշրջանի հայտանիշներ, սոցիալական կառավարում, կառավարման ցուցանիշներ, սոցիալական համակարգի բնորոշ տարրեր, միջազգային հարաբերությունների անկանոնություն, ազգային և տարածաշրջանային մշակույթների ինքնություն, միջազգային ահաբեկչություն, լեգալություն, լեգիտիմություն, «հումանիտար միջամտություն», «երկակի ստանդարտներ», պետական ինքնիշխանության նորմ, Ռուսաստանի ոչ

## METHODOLOGY OF SOCIAL MANAGEMENT ANALISYS IN THE NEW AGE

### ABSTRACT

The most important problem of open and impartial investigation of Russian science is the study of social regulation and control of the relations of subjects in economic activity from the branches of the Russian state. Methodological analysis of the current social management features are considered at the manifestation of a new era in the life of the world community and the Russian society. The problems of relations regulation between states and other actors of the international community in the areas of financial and operating performance, social demography, trade, energy resources, global and regional threats, the level and quality of human life, the problems of the future are investigated. Are given grounds for retaining in these terms the autonomy of the state and nation, the civilizational identity and national culture, for ensuring the security of the country, society and the individual.

It is argued that the improvement of social governance and its sociological component in the international community is largely due to the peculiarities of the new era, the changing role of Russia in regulating international relations. It depends, of

course, also on the state of the internal handling of the Russian society. The main focus of the internal improvement of social management, for Russia, is becoming increasing state involvement in ordering subjects relations in the field of financial and economic activities, improving the quality of Russian citizens' life.

*Key concepts:* globalization, signs of a new era, social management, performance handling, typical elements of the social system, the randomness of international relations, the identity of national and regional cultures, international terrorism, legality, legitimacy, "humanitarian intervention", "double standards", the rate of national sovereignty, non-state actors in Russia, migration and demographic processes.

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ  
CHAIR OF YOUNG SCIENTIST  
КАФЕДРА МОЛОДОГО УЧЕНОГО

## ՏԵՄԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՁԱՏՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ՇՈՒՐՁ

Իշխանությունների բաժանման սկզբունքը ժողովրդավարական պետության մեջ պետական իշխանության ճիշտ կազմակերպումն է, որի առկայության պարագայում հակակշիռների ու զսպումների համակարգի միջոցով իրականացվում են պետության բարձրագույն մարմինների փոխադարձ վերահսկողություն և փոխգործակցություն (Шохин 1997: 18-20): Վերջինիս կիրառման համար ելակետայինն այն է, որ իշխանության միակ աղբյուրն ու կրողը ժողովուրդն է. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին» (ՀՀ Սահմանադրություն. Հոդված 2):

Փաստացի իշխանությունների տարանջատման սկզբունքը ձևավորում է կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից կամայականության դրսևորումը բացառող կառուցակարգեր: Առաջին իշխանական ինստիտուտները և վարքագծի կանոնների համընդհանուր ճանաչված նորմերը ձևավորվել են արդեն իսկ հասարակության զարգացման առաջնային փուլում: Այդ ժամանակաշրջանին հատուկ էին քաղաքական իշխանության և պետական ինստիտուտների բացակայությունը, իսկ սոցիալական նորմերն այս շրջանում սովորությունների, ավանդույթների, ծիսակատարությունների և արգելքների ձևով էին կիրարկվում: Պետությունը հասարակական զարգացման արդյունք է:

Իշխանությունների բաժանման սկզբունքի տեսության հիմնադիրներից է ֆրանսիացի փիլիսոփա Շարլ Լուի Մոնտեսքյուն (1689-1755

թթ.): Նա համարվում է սահմանադրության նախահայրը: Մոնտեսքյուն զարգացրեց Ջոն Լոքի գաղափարները պետության մասին և առաջարկեց պետության մեջ երեք իշխանությունների բաժանման սկզբունքը: Ըստ Մոնտեսքյոյի, պետությունը նման է մարդու օրգանիզմի. մարդու սիրտը օրենսդիր մարմինն է, ուղեղը՝ գործադիր, իսկ դատական իշխանությունը արյունատար անոթներն են: Նրանք պետք է գործեն փոխհամաձայնեցված, հակառակ դեպքում այդ օրգանիզմը՝ պետությունը, չի կարող նորմալ ու բնականոն գործել, և դա կհանգեցնի բազմաբնույթ կամայականությունների: Ըստ Մոնտեսքյոյի 1748 թ. «Օրենքների ոգու մասին» աշխատությամբ առաջ քաշված դրույթների՝ ազատություն լինել չի կարող, քանի դեռ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները բաժանված չեն, և որ օրենսդիր իշխանությամբ օժտված դատավորը կարող է վերածվել «բռնապետի», իսկ գործադիր իշխանության դեպքում՝ նաև «կեղեքչի» (Монтескье 1995: 215):

Ըստ պետական իշխանության համակարգի բնույթի՝ միջազգային սահմանադրական պրակտիկայում շահարկվում է նաև իշխանությունների «ձկուն» և «կոշտ» բաժանում: «ձկուն» բաժանումը հիմնվում է օրենսդիր իշխանության գերակայությամբ՝ իշխանությունների գործակցության վերաբերյալ Ջոն Լոքի գաղափարների վրա, իսկ «կոշտ» մեթոդը սկիզբ է առնում իշխանությունների հավասարակշռության և առավել հստակ բաժանման մասին Մոնտեսքյոյի դիտարկումներից:

Եվրոպական սահմանադրական և քաղաքական պրակտիկան երկու մոդելներն էլ կիրառում է, իսկ երկրորդ մոդելի դասական օրինակը կարելի է հանդիպել ԱՄՆ-ում: Մոդելներից յուրաքանչյուրը գործում է որոշակի պայմաններում և կապված է շատ գործոններից. հասարակության քաղաքական մշակույթ, քաղաքական ինստիտուտների կայացման աստիճան, իրավական ավանդույթներ ու մտածելակերպ, հոգեբանություն, իրավագիտակցության մակարդակ և իշխանության տարբեր ճյուղերի զարգացման միտվածություն, դրանց գործառնությանն ու կառուցվածքային զարգացումների դիալեկտիկա և այլն (Зеркин, Игнатов 2000):

Որպես ազատության ու անկախության ապահովման երաշխիք, իշխանությունների բաժանումը ենթադրում է երեք առանձնացված գործառնություններ. օրենսդրական, գործադիր և դատական (արդարադատության):

Իշխանությունների բաժանումը պետք է պայմանավորված լինի երեք դրսևորումներով. **կառուցակարգային, հասցեական և գործառնության:** Իշխանությունների բաժանման **կառուցակարգային** մոտեցումը ենթադրում է իշխանության թևերից յուրաքանչյուրի գործունեությունը պետական ապարատի առանձին օղակների ու մարմինների միջոցով, որոնք միմյանցից գտնվում են հարաբերականորեն անկախ և ինքնուրույն վիճակում: Դրա նպատակը իշխանությունները չկենտրոնացելն է մեկ մարմնի ձեռքում, ինչը կարող է հանգեցնել պետական իշխանության չարաշահման: Իշխանության յուրաքանչյուր ճյուղ պետք է զբաղվի միայն իրեն վերապահված գործառնություններով, իսկ որոշ դեպքերում, միայն որոշակի վերահսկողական իրավունքով կարող է օժտված լինել, օրինակ, Ազգային ժողովի կողմից իշխանության նկատմամբ պետական բյուջեի կատարման կապակ-

ցությամբ: Իսկ դատական իշխանության որևէ կերպ միացումն օրենսդիր կամ գործադիր իշխանությանն ընդհանրապես անթույլատրելի է (Авакян С.А. 1991):

Իշխանությունների բաժանման **հասցեական** դրսևորումը նույնպես կարևոր դերակատարում ունի իշխանությունների տարանջատման սկզբունքի կենսագործման համար: Ի ապահովումն սույն պահանջի, պատգամավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից: Այս պահանջ-սահմանափակումը տարածվում է նաև կառավարության անդամների, դատավորների և սահմանադրական դատարանի անդամների վրա (ՀՀ Սահմանադրություն. Հոդվածներ՝ 65, 45, 88, 98):

Պատգամավորական մանդատի անհամատեղելիությունն այլ պաշտոններ զբաղեցնելու հետ բնորոշ է պետությունների բացարձակ մեծամասնությանը: Թեև պետք է արձանագրել, որ ոչ բոլոր պետություններում է պատգամավորին արգելվում միաժամանակ զբաղեցնել այլ պաշտոն: Խորհրդարանական հանրապետության և խորհրդարանական միապետության հատկանիշներ ունեցող երկրների խորհրդարանների անդամները միաժամանակ կարող են լինել նաև կառավարության անդամ: Բացառություն են կազմում Նիդերլանդները, Նորվեգիան, Շվեդիան: Օրինակ, Մեծ Բրիտանիայում, պառլամենտի անդամը նաև կառավարության անդամ կարող է լինել:

Եվ այսպես, խոսելով օրենսդիր իշխանության առանձնահատկություններից, գրեթե բոլոր պետություններում օրինաստեղծ բարձ-



րագույն գործառույթն իրականացվում է այնպիսի մարմնի կողմից, որի անդամները հանդիսանում են ժողովրդի (հասարակության) ներկայացուցիչները:

Հաճախ այդ մարմինն անվանվում է լեզիսլատուրա (առաջացել է լատիներեն «lex» (օրենք) բառից) կամ օրենսդիր ժողով (կորպուս) (Страшун (ред.) 1996):

Հայաստանում օրենսդիր իշխանությունն իրականացնում է խորհրդարանը, որն առաջացել է «խորհուրդ», «խորհրդակցել» բառից: Երբեմն, այդ բառի փոխարեն օգտագործվում է «պառլամենտ» հոմանիշը: Վերջինս ծագել է անգլերեն «parliament» բառից, որի հիմքում ընկած է լատիներեն «parlare» (կամ ֆրանսերեն «parler», թարգմանաբար՝ խոսել) բառը: «Պառլամենտ» («խորհրդարան») բառն առավել գործածական է, քան «լեզիսլատուրա» եզրույթը, քանի որ օրինաստեղծ գործունեությունն այդ մարմնի թեև հիմնական, բայց ոչ միակ գործառույթն է:

Համարվում է, որ խորհրդարանի հայրենիքը Անգլիան է, երբ 12-րդ հարյուրամյակում թագավորի լիազորությունները սահմանափակվեցին մի ժողովի կողմից, որը գումարվել էր այդ իսկ նպատակով և բաղկացած էր խոշոր ֆեոդալներից, հոգևորականներից, քաղաքների ու կոմսությունների ներկայացուցիչներից: Թագավորի ու ներկայացուցչական մարմնի միջև մղվող երկարամյա պայքարն առ այն, թե ում պետք է պատկանի օրենսդիր իշխանությունը, ի վերջո, ավարտվեց հօգուտ պառլամենտի: Հետագայում այդ օրինակին հետևեցին նաև լեհերը, հունգարացիները, ֆրանսացիները, իսպանացիները և այլոք (Чиркин 2001): Խորհրդարանը համապետական ներկայացուցչական մարմին է, որի հիմնական **գործառույթն** իշխանությունների բաժանման համակարգում օրենսդիր իշխանության իրականացումն է: Խորհրդարանը

յուրահատուկ տեղ է զբաղեցնում և ցանկացած պետության սահմանադրական համակարգում առանձնահատուկ դերակատարություն ունի, ինչը տվյալ պետության կառավարման ձևի, պետական ռեժիմի առանձնահատկություններով (նախագահական կամ խորհրդարանական հանրապետություն, պառլամենտարիզմ կամ մինիստրալիզմ և այլն) պայմանավորված, կարող է տարբեր լինել: Բացառություն կարող են կազմել այն պետությունները, որտեղ չեն գործում ներկայացուցչական մարմիններ, կամ իշխանությունների բաժանում սահմանված չէ: Օրինակ, Օմանի Սուլթանությունում, Մաուրիտիան Արաբիայի Թագավորությունում և այլն: Առավել հաճախ են հանդիպում պետություններ, հատկապես Աֆրիկյան պետություններում՝ զինվորական հեղափոխություններից հետո, երբ լեզիսլատուրան, որպես այդպիսին, բացակայում է, չի գործում (Страшун (ред.) 1996: 405):

Խորհրդարանը ոչ միայն օրինաստեղծ, այլ նաև ներկայացուցչական մարմին է: ՌԴ Սահմանադրությամբ՝ «Դաշնային ժողովը... Ռուսաստանի Դաշնության ներկայացուցչական և օրենսդիր մարմինն է» (Собрание законодательства Российской Федерации 1995): Դա նշանակում է, որ այն հանդես է գալիս որպես ժողովրդի (ազգի) կամքն ու շահերն արտահայտող մարմին: Օրինաստեղծ գործունեությունից զատ, նրա իրավասության շրջանակում են պետության ներքին և արտաքին քաղաքականության հիմքերի որոշումը, հիմնարար ծրագրերի մշակումն ու ընդունումը, բյուջեի հաստատումը և այլն:

Որպեսզի խորհրդարանները կարողանան ամբողջությամբ իրականացնել իրենց սոցիալական գործառույթները, նրանց վերապահվում են մի շարք լիազորություններ, որոնք գործառույթների հետ միասին կազմում

են նրանց սահմանադրաիրավական կարգավիճակը:

Պետության մեջ, խորհրդարանի դերով պայմանավորված, իրավասությունները լինում են անսահմանափակ և սահմանափակ:

Անսահմանափակ իրավասություններով խորհրդարաններ ունեցող պետությունները, որպես կանոն, պառլամենտների իրավասությունների սպառիչ ցանկ չեն սահմանում: Օրինակ, Ճապոնիայի Սահմանադրությունը որևէ դրույթ չի պարունակում, որը սպառիչ կսահմաներ պառլամենտի իրավասությունները: Այսպես է Չինաստանում, այսպես էր նաև նախկին ԽՍՀՄ-ում: Վառ օրինակ է Մեծ Բրիտանիան:

Օրենսդիր մարմինը տարբեր երկրներում ներկայանում է տարբեր անվանումներով: Պառլամենտն ընդհանուր տերմին է, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Ճապոնիայում այն անվանվում է հենց «Պառլամենտ», Ամերիկայի Միացյալ Նահանգներում այն կոչվում է Կոնգրես, Ռուսաստանի Դաշնությունում՝ Դաշնային (Ֆեդերալ) ժողով Լեհաստանում, Լատվիայում՝ Սեյմ, Գերմանիայում՝ Բունդեստագ, Բելգիայում՝ Պետական ժողով, Ֆրանսիայում և Հայաստանում՝ Ազգային ժողով (Խոռպանյուկ 1997. 169):

Հայ իրականության մեջ ազգային ժողովներ կամ աշխարհաժողովներ գումարվել են դեռևս վաղնջական ժամանակներից: Ազգային ժողովներ, իհարկե, ոչ ժամանակակից ըմբռնմամբ, Հայաստանում գումարվել են ժամանակ առ ժամանակ՝ ազգի առջեւ ծառայած բախտորոշ ու ճակատագրական հարցերի վերաբերյալ վճիռներ կայացնելու, ինչպես նաև հասարակական հարաբերությունները կարգավորող կանոններ ընդունելու նպատակով: Հայ եկեղեցին 428 թվականին՝ Արշակունյաց հարստության անկումից հետո, փորձեց իր շուրջը համախմբել նախարարների կենտրո-

նախույս ուժերը և հանդես գալ որպես Հայաստանի միասնականության երաշխավոր: Աշխարհաժողովին փոխարինեց Եկեղեցական ժողովը՝ կաթողիկոսի նախագահությամբ: Դվինում (506 թ., 554 թ., 609 թ., 645 թ., 702 թ.) տեղի ունեցած ժողովներում ու այլ ազգային-եկեղեցական ժողովներում քննարկվեցին դավանաբանական հարցեր, և ընդունվեցին հարյուրավոր կանոններ:

Հայ եկեղեցին պատմական հանգամանքների բերումով պարտադրված էր դառնալու հայ նախարարական իշխանության եւ օրենսդրության գլուխ: Հետևաբար Հայաստանի օրենսդրությունը ներկայացվել է հիմնականում եկեղեցական գրավոր կանոններով, որի վառ օրինակն է 8-րդ դարի 10-ական թթ. Հովհաննես Գ Օձնեցու կողմից կազմած «Կանոնագիրք Հայոց»-ը: Այն միջնադարյան իրավաբանական փաստաթղթերի պաշտոնական ժողովածու է, որը բաղկացած է հոգևոր-եկեղեցական, բարոյախրատական, գաղափարաքաղաքական եւ տնտեսական-քաղաքացիական խնդիրներ ընդգրկող կանոն-հոդվածներից: «Կանոնագիրք Հայոց»-ը հրատարակվել է մի քանի անգամ: Առավել ամբողջական հրատարակվել է 1964-71 թթ. և ընդգրկում է VIII, X և XI դդ. խմբագրումները՝ 57 կանոնախմբով և 1332 կանոնով:

Այս ամենը, իհարկե, շատ հեռու է բուն պառլամենտարիզմից, որը ենթադրում է ժողովրդի կողմից ընտրված, մշտապես գործող ներկայացուցչական օրենսդիր մարմին, սակայն այն ներառում է դրա նախնական տարրեր. ազգի ճակատագիրը որոշող ավագանին հավաքվում, հարցեր էր քննարկում, բանավիճում, քվեարկությամբ ընդունում ազգի համար բախտորոշ որոշումներ ու կանոններ եւ դրանց համապատասխան կազմակերպում իր գործունեությունն ու ձեւավորում հարաբերությունները:

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածն ամրագրում է. «Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը» (ՀՀ Սահմանադրություն. Հոդված 62):

Օրենսդիր իշխանության գործունեության հիմնական ոլորտը օրենքների և այլ իրավական ակտերի ընդունումն է, դրանցում լրացումներ, փոփոխություններ կատարելը կամ օրենքն ուժը կորցրած ճանաչելը:

Օրենսդիր իշխանությունն իր գործառույթներն իրականացնում է պետական իշխանության համապատասխան մարմինների, ներկայացուցիչների միջոցով, ովքեր, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, պետք է օժտված լինեն հատուկ լիազորություններով:

Բացի օրինաստեղծ գործունեությունից, որի միջոցով կարգավորվում է երկրի արտաքին ու ներքին քաղաքականությունը, Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովն իրականացնում է նաև մի շարք այլ գործառույթներ. քաղաքական վերահսկողություն, որը կարող է տարածվել ՀՀ կառավարության գործունեության վրա, հաստատում ու վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման նկատմամբ (Հակոբյան Հ.Հ. 2007; Խաչատրյան Հ. 1994): Խորհրդարանին կից ստեղծվում ու գործում են մի շարք մշտական և ժամանակավոր կոլեգիալ մարմիններ, որոնք գործունեություն իրականացնելով կոնկրետ հարցերի լուծման շրջանակներում՝ կոչված են առավել արդյունավետ դարձնել օրինաստեղծ առաքելությունը:

Սակայն, օրենսդիր իշխանության գերակայությունը բացարձակ բնույթ չի կրում: Դրա իրավասության սահմաններն ընդգծված են իրավունքի սկզբունքներով, մարդու բնական

իրավունքներով, արդարության և հավասարության գաղափարներով:

Գործադիր իշխանության հիմնական գործառույթն օրենքների կենսագործումն է: Այն, ըստ անհրաժեշտության, հարկադրանքի ուժի կիրառման իրավագործությամբ պետության ընթացիկ կառավարում իրականացնողն է: Այդ լիազորությունը պետք է լինի իրավագործ օրենքով սահմանված:

Հայաստանի Հանրապետությունում գործադիր իշխանությունն իրականացնում է կառավարությունը: Կառավարությունը պետական իշխանության բարձրագույն գործադիր ու կարգադրիչ մարմինն է, որն անմիջականորեն իրականացնում է երկրի կառավարումը:

Գործադիր իշխանությունը տարբեր երկրներում ունի տարբեր անվանումներ. Հայաստանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Կոլումբիայում, Չեխիայում՝ կառավարություն, Գերմանիայում՝ ֆեդերալ կառավարություն, Ճապոնիայում՝ կաբինետ, Իտալիայում, Լեհաստանում՝ նախարարների խորհուրդ, Չինաստանում՝ պետական խորհուրդ, Շվեյցարիայում՝ դաշնային խորհուրդ: Կառավարության անվանումը կարող է պայմանավորվել այն հանգամանքով, թե ով է նախագահում կառավարության նիստը, կամ ինչ կազմով է այն գումարված: Օրինակ, Ֆրանսիայում կամ Բելգիայում, եթե կառավարության նիստը վարում է Նախագահը, ապա այն կոչվում է Նախարարների խորհուրդ, եթե Վարչապետը՝ Կաբինետի խորհուրդ: Իսկ, օրինակ, Մեծ Բրիտանիայում (որի կառավարության կազմը բաղկացած է 100 անդամից, սակայն երբևէ այս կազմով չի գումարվել) կառավարության հիմնական խնդիրները լուծում է Կաբինետը, որը կազմվում է վարչապետից ու մոտավորապես քսան՝ առավել հեղինակավոր նախարարներից (Страшун (ред.) 1996):

Կառավարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականությունը: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է հանրապետության նախագահի հետ համատեղ (ՀՀ Սահմանադրություն. Հոդված 85):

Կառավարությունը կազմված է վարչապետից ու նախարարներից: Իր իրավասությունների շրջանակում, կառավարությունն ընդունում և հրապարակում է որոշումներ: Գերատեսչական ստորաբաժանումները պետության տարածքում տարբեր են, սակայն բոլորն էլ կոչված են ապահովել երկրի անվտանգությունը, պահպանել հասարակական կարգը, բարենպաստ պայմաններ ստեղծել հասարակական կյանքի տարբեր ոլորտների կառավարման համար:

Գործադիր իշխանության մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավունք չունեն հրապարակել այնպիսի համապարտադիր ակտեր, որոնք նախատեսված չեն օրենքով կամ հակասում են դրան: Գործադիր իշխանությունն իրավական բնույթ է կրում միայն այն դեպքում, երբ հանդիսանում է ենթաօրենսդրական իշխանություն: Գործադիր իշխանությունը հաշվետու և պատասխանատու է օրենսդիր իշխանության առաջ: Իրավական պետության մեջ յուրաքանչյուր քաղաքացի կարող է դատական կարգով բողոքարկել գործադիր իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց անօրինական որոշումներն ու գործողությունները: Հարկ է ընդգծել, որ

կառավարության նշանակությունը, դերը և պետական մարմինների համակարգում նրա տեղը մեծապես պայմանավորված է տվյալ երկրի պետության ձևի՝ կառավարման ձևի, պետական ռեժիմի առանձնահատկություններով:

Իրավական պետության առկայությունը ենթադրում է ուժեղ ու անկախ դատական իշխանության կազմավորում և գոյություն: Դատական իշխանությունը կոչված է ապահովել օրենքների իրականացումը, պահպանել իրավունքը պետական, հասարակական ոլորտների ու անձանց կենսագործունեությանն առնչվող իրավախախտումներից: Դատական իշխանության համակարգն իրականացնում է արդարադատություն՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա: Օրենսդրի կողմից սահմանված հարկադրանքի կանոնների կիրառումը թույլատրվում կամ թելադրվում է դատարանների կողմից, իսկ գործադիրը, չունենալով օրենսդրական ու արդարադատության գործառույթ, գործում է օրենքների հիման վրա և ի կատարումն օրենքների ու դատական որոշումների:

Փամանակակից երկրներում դատարանն ապահովում է սահմանադրական կարգը, քաղաքացիների և կազմակերպությունների օրինական իրավունքներն ու շահերը: Դատարանը հատուկ հսկողություն է իրականացնում իշխանության մյուս երկու մարմինների ընդունած ակտերի նկատմամբ:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խաչատրյան, Հ. (1994): «Պաշլամենտ և պատգամավոր», *Հայաստանի պետություն*

և իրավունք: Երևան, «Արեգ» հրատարակչություն:

2. ՀՀ Սահմանադրություն (ընդ. 05.07.1995, փոփ. և լր. 27.11.2005)

// www.parliament.am:

3. Հակոբյան, Հ. (2007): *Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում*: Երևան:
4. Авакян С. (1991). *Депутат: статус и деятельность*, М.: Изд. политической литературы.
5. Зеркин, Д., Игнатов, В. (2000), *Основы теории государственного управления*. Ростов Н/Д:
6. Страшун, Б. (ред.) (1996). *Конституции зарубежных стран*. М.: Изд.-во: Бек.
7. Монтескье, Ш. (1995). *Избранные произведения*. М.:
8. *Собрание законодательства Российской Федерации* (1995). М.: Изд.-во: Прогресс.
9. Чиркин, В. (2001). *Конституционное право зарубежных стран*. М.
10. Шохин, А. (1997). *Взаимодействие властей в законодательном процессе*. М.: изд.-во. Наш дом.

Բազրատ ԲԱԳՐԱՏՅԱԼ

## ՏԵՍԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ՇՈՒՐՁ

### ԱՄՓՈՓՈՒՄ

Յուրաքանչյուր պետության համար կարևոր նշանակություն ունի իշխանությունների բաժանման սկզբունքի ճիշտ իրականացումը, քանի որ դրանից է կախված ժողովրդավարության հաստատումը: Այս սկզբունքի էությունն այն է, որ ճյուղերի բաժանված պետական իշխանությունը փոխադարձ զսպումների ու հակակշիռների միջոցով սահմանափակվում է՝ հաղթահարելով իշխանության կենտրոնացման վտանգը և անհրաժեշտ

նախադրյալներ ստեղծելով ժողովրդավարության հաստատման, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների երաշխավորման և պաշտպանության համար:

*Հանգուցային հասկացություններ.* Ժողովրդավարական պետություն, կառավարման մարմին, օրենսդիր իշխանություն, կառուցակարգեր, հասցեական և գործառության ղրկություններ:

## SOME THEORETICAL AND METHODOLOGICAL ISSUES ON THE PRINCIPLE OF SEPARATION OF POWERS

### ABSTRACT

The proper realization of the power division principle has a vital role for every state, as it is closely connected with implementation and recognition of democratic rules in the country. The essence of this principle is that the divided governmental power is limited by mutual inhibition and counterbalance. It confronts and overcomes the risks of the

power concentration and promotes democracy, as well as it protects and guarantees human rights and basic freedom of the country citizens.

*Key concepts:* democratic state, management bodies, legislature, structure, addressed and functional features.

Баграт БАГРАТЯН

## НЕКОТОРЫЕ ТЕОРЕТИЧЕСКИЕ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ О ПРИНЦИПАХ РАЗДЕЛЕНИЯ ВЛАСТИ

### РЕЗЮМЕ

Для любого государства важное значение имеет правильная реализация принципа разделения власти, поскольку от этого принципа зависит утверждение в стране демократии. Сущность этого принципа заключается в том, что разветвленная государственная власть с помощью взаимных сдерживаний и противостояний ограничивается, преодолевая тем самым опасность

централизации власти и создавая необходимые предпосылки для утверждения демократии и прав человека, гарантируя защиту основополагающих свобод.

*Ключевые понятия:* демократическое государство, органы управления, законодательная власть, структура, адресные и функциональные проявления.

## ԱՆՁԻ ԿՈՄՊԵՆՍԱՏՈՐԱՅԻՆ ԱՂԱՊՏԱՑՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Անձը ապրում ու գործում է հասարակության ներքո: Նրա կենսագործունեությունը պայմանավորող սոցիալական միջավայրը հասարակական, նյութական և հոգևոր պայմանների բարդ, բազմաշերտ և տարաբնույթ մի ամբողջություն է, որի ձևավորման ու զարգացման միտումներն հաճախ ներկայանում են հակասական և կոնֆլիկտային փոխհարաբերությունների տեսքով: Սոցիալական միջավայրի ցանկացած բնութագրումը (Ильичёв, Федосеев, Ковалёв, Панов (ред.) 1983) շեշտադրում է սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ ինստիտուտների զարգացող բնույթը, ինչը ենթարկվում է անկանխատեսելի փոփոխությունների տարատեսակ արտակարգ իրավիճակների պայմաններում, ինչպիսիք են բնական աղետները՝ երկրաշարժը, ջրհեղեղը, դժբախտ պատահարները և այլն: Նման իրավիճակները շղթայական կապով առաջ են բերում նաև սոցիալական այնպիսի իրավիճակներ, որոնք պահանջում են նոր սոցիալական պայմանների անձի ադապտացում և հարմարում նոր ստեղծված պայմաններին: Արտակարգ իրավիճակով պայմանավորված սոցիալական տարրի ներգործողությունն և ազդեցությունը չեզոքացնելու համար առաջ են գալիս անձի սոցիալ-հոգեբանական ադապտացման համապատասխան մեխանիզմներն ու գործառույթները: Ուստի արտակարգ իրավիճակներին անձի ադապտացման յուրահատկությունները ներկայացնելու համար անհրաժեշտ է նախ և առաջ բնութագրել արտակարգ իրա-

վիճակի հասկացությային շրջանակները և տալ սոցիալ-հոգեբանական համապատասխան արժևորումը (Калайков 1984; Короленко 1978):

Անձի կենսագործունեության անցանկալի, խոչընդոտող արտաքին պայմանները գիտական հարթակներում ստացել են բազմաթիվ արձագանքներ և ձևակերպումներ: Այսպես՝ հանդիպում ենք «արտակարգ», «ճգնաժամային», «էքստրեմալ» իրավիճակների սահմանումների, որոնք հաճախ լինում են հարակից ու միմյանց փոխլրացնող: Շիբուտանին «ճգնաժամին» զուգահեռ կիրառում է «կրիտիկական ժամանակահատված» եզրույթը, Ռուբինշտեյնը՝ «կյանքի ուղու շրջադարձ», իսկ Ֆ.Վասիլյուկը՝ «կրիտիկական իրավիճակ» եզրույթները (Василюк 1984; Осипова 2005; Шибутани 2002): Ճգնաժամային և արտակարգ իրավիճակների տերմինաբանական կիրառելիության հավաստիությունը պահպանելու համար նշենք առաջինի առանձնահատկությունը որպես անձի կյանքի ուղու օբյեկտիվ և անբաժանելի մաս, որը ենթադրաբար շաղկապում է անձի հոգեկանի զարգացման աստիճանական փոփոխությունները: Նման ճգնաժամային փուլեր կարող են համարվել, օրինակ, տարիքային՝ որպես հոգեֆիզիոլոգիական, կամ կրթական՝ որպես սոցիալական, որոշակի անցումները (Короленко 1978): Բացի դրանից, ճգնաժամային իրավիճակներ կարող են ստեղծվել որպես անձի հոգեկանի անհատական փուլեր և բնութագրվել որպես կյանքի իմաս-



տազրկում, ինքնատիրապետման կորուստ և այլն: Ինչ վերաբերում է արտակարգ իրավիճակների սահմանմանն ու տարանջատմանը ճգնաժամային փուլերից, ապա հարկ է առանձնացնել արտակարգ իրավիճակների յուրահատկությունը՝ որպես անձի կենսագործունեության արտաքին պայման: Այն կարող է հանդես գալ օբյեկտիվ՝ բնական աղետներ, համաճարակներ և այլն, և սուբյեկտիվ՝ բռնություններ, հանցագործություններ և այլն, պատճառաբանությամբ (Мыздыбаев 1998; Нуркова, Василевская 2003: 95-102):

Իրավիճակները, որոնք մարդկանց առջև պահանջներ են դնում և բարձրացնում են նրանց սովորական հարմարվողական ներուժը, նկարագրվում են տարբեր տերմիններով. կենսական դժվարություններ, ճգնաժամային իրավիճակներ, բացասական կենսական իրադարձություններ, սթրեսային կենսական իրադարձություններ, տրավմատիկ իրադարձություններ, անցանկալի իրադարձություններ, կենսական ճգնաժամեր, տնտեսական դեպրիվացիա, արհավիրքներ (Зотова, Кряжева 1979: 219-232;): Այս իրավիճակներից յուրաքանչյուրը պարունակում է կամ մարտահրավեր, կամ վտանգ մարդու կենսագործունեության համար, նաև բերում է անվերադարձ կորուստների. այս իրադրություններից յուրաքանչյուրը սահմանափակում է անհատի ակտիվությունը, նրա առջև դնում պահանջներ, որոնք նրա կարողություններից, բարոյական և նյութական ռեսուրսներից վեր են: Բոլոր այս տարաբնույթ իրավիճակները սթրեսորների ազդեցություն են ունենում, այսինքն այնպիսի գործոնների ազդեցություն, որոնք առաջացնում են սթրես (Лебедев 2001; Маклаков 2001: 16-24):

Արտակարգ իրավիճակները լինում են հիմնականում անկանխատեսելի և անսպա-

սելի: Նրանց էքստրեմալ լինելու հանգամանքը թերևս արտահայտվում է արդեն հասկացության «արտակարգ, կարգ ու կանոնից տարբերվող» հատկանիշով, ինչը ենթադրում է անձի գոյատևման ու ինքնաարտահայտման համապատասխան դրսևորումներ: Այս պարագայում ճգնաժամային իրավիճակները կարող են նաև հետևել արտակարգ իրավիճակներին (Тарас, Сельченко (сост.) 2000; Соловьева 2003): Քանի որ արտակարգ իրավիճակները կարող են ստեղծվել թե լայնամասշտաբ և թե ինդիվիդուալ մակարդակներում, ապա կարող ենք եզրակացնել, որ արտաքին միջավայրի որևէ արտակարգ փոփոխություն՝ լինի դա սոցիումի մակարդակում ընթացող (պատերազմ, բնական աղետներ, այլ անսպասելի իրավիճակներ), թե անձի սուբյեկտիվ վերապրումի արդյունք (բռնություն, դժբախտ պատահար, այլ), որպես արտակարգ իրավիճակ, անվերապահորեն ստեղծում է սոցիալական արտակարգ պայմաններ: Այդ պայմանների ներքո առաջանում է անձի ադապտացման պահանջունք և հոգեբանական ռեսուրսների համապատասխան վերաբաշխում:

Արտակարգ իրավիճակների ընդհանուր և ներածական բնութագրումից արդեն պարզ երևում է նրանց առանձնահատուկ կարևորությունը անձի ադապտացման համապատասխան ռեսուրսների կիրառելիության և զարգացման նկատառումներով: Ուստի արտաքին միջավայրում ստեղծված արտակարգ իրավիճակների սոցիալ-հոգեբանական ցանկացած հետազոտություն ենթադրում է սոցիալական նորմերի, փոխհարաբերությունների ու արժեքների ուսումնասիրում, քանզի հետաքրքրության կենտրոնում մնում է անձը՝ արտակարգ իրավիճակով պայմանավորված նոր, փոփոխական սոցիալական միջավայրով: Անձի վրա ներգործող սոցիալական ար-

տակարգ պայմանների ներքո ընթացող անձ – հասարակություն փոխգոծողությունը կարող է բնութագրվել որպես նոր պայմաններին ադապտացում: Այն մեր կողմից սահմանվում է իր **կոնստրուկտիվ և դեստրուկտիվ հատկանիշներով, որոնք ամբողջանում են անձի կոմպենսատորային ադապտացման եզրությամբ:** Ադապտացման **կոնստրուկտիվ** հատկանիշը արտակարգ իրավիճակի պայմաններում անձի հոգեբանական ռեսուրսների այնպիսի արտահայտություն է, երբ անձն իր հոգեկերտվածքով ոչ միայն դրականորեն նույնականացվում է սոցիալական նոր պայմանների հետ, այլև ունակ է այս կամ այն չափով ազդելու արտաքին պայմանների վրա՝ վերացնելու համար սոցիալական միջավայրի էքստրեմալ, սահմանային կացությունը: Նման պատկերը հանգեցնում է սոցիալական նոր ավանդույթների ստեղծման ու ամրակայման, նոր սոցիալական նորմերի ձևավորման գործընթացին: Այս դեպքում կարելի է խոսել նոր պայմանների նկատմամբ ոչ միայն անձի, այլև՝ արտաքին միջավայրի ադապտացման մասին (Дьяченко, Кандыбович 1976): Անձի ադապտացման **դեստրուկտիվ** հատկանիշը նախորդի հակապատկերն է, երբ սոցիալական նոր իրավիճակում անձին չի հաջողվում ինքնառեակիզացվել, և անձի ադապտացման կամ հարմարման ջանքերը ձախողվում են: Այդ երկու հատկանիշները բնութագրում են ադապտացման **կոմպենսատորային** բնույթը:

Անձի զարգացմանը զուգընթաց անընդհատ բախվում ենք սոցիալական որոշակի նորմերի, մեխանիզմների ու արժեքների յուրացման սոցիալ-հոգեբանական անհրաժեշտության հետ (Абульханова-Славская 1980): Դրա մասին են վկայում անձի սոցիալականացման զանազան ինստիտուտներն ու անձի գործունեության նպատակաուղղվածությունը (Свиридов 1980: 47-48): Սակայն, զարգացնելով հայտնի տեսաբաններ Ֆրեյդի և Ադլերի հայացքները (Головин 1998) կոմպենսացիայի՝ որպես պաշտպանական մեխանիզմի մասին, որն ուղղված է հոգեկանի որոշակի թերությունների փոխհատուցմանը, մեր կողմից փորձ է արվում այդ հասկացությունը տեղափոխելու սոցիալական դաշտ, և առաջ է քաշվում կոմպենսացիայի սոցիալ-հոգեբանական դիտակետը, որն արտահայտվում է հետևյալում. **կոմպենսացիան անձի ադապտացման հոգեբանական ռեսուրսների վերաբաշխման այնպիսի պաշտպանական մեխանիզմ է, որն ուղղված է արտաքին միջավայրի (բնական կամ սոցիալական) արտակարգ կերպով ծագող «թերությունների» բացասական ազդեցության մարմանը կամ հարմարմանը:**

Այս վարկածն ապացուցելու նպատակով տեսամեթոդաբանական քննության մշակվել է արտակարգ իրավիճակներին անձի կոմպենսատորային ադապտացման հետևյալ մոդելը.

Բնութագրում	Կոնստրուկտիվ հատկանիշ	Դեստրուկտիվ հատկանիշ	Կոմպենսատորային ադապտացիա
Անձի հոգեբանական ռեսուրսներ	Աֆեկտիվ, կոգնիտիվ և վարքային բաղադրիչների դրական արտահայտվածություն	Բաղադրիչների բացասական արտահայտվածություն	Բաղադրիչներից մեկի գերակշռում մյուսների նկատմամբ

Ուղղվածություն	Համակարգում	Կազմալուծում	Հարմարում
Արդյունք	Հոգեբանական կայունություն, Ես-ի վերախմաստավորում	Հոգեբանական անկայունություն, Ես-ի ճգնաժամ	Անձի Ես-ի կոմպենսատորային բնութագիր

Դիտարկելով արտակարգ իրավիճակների պայմաններում անձի ադապտացման հոգեբանական ռեսուրսների կիրառման ուղղվածությունը, այսպիսով, առանձնացվել են հոգեբանական ռեսուրսների կոգնիտիվ, աֆեկտային և վարքային բաղադրիչները: Նրանց գործարկման արդյունքով առանձնացվել են դեպի սոցիալական համակարգում տանող կոնստրուկտիվ հատկանիշները և սոցիալական կազմալուծում ենթադրող դեստ-

րուկտիվ հատկանիշները: Այդ հատկանիշները այս կամ այն չափով ընդգրկվելով կոմպենսատորային ադապտացման պատկերի մեջ՝ հետևապես, բնութագրում են տվյալ արտակարգ իրավիճակում անձի հարմարման դրական կամ բացասական ուղղվածությունը, անձի Ես-ի ճգնաժամային կացությունը և ընդհանուր առմամբ հնարավորություն են տալիս տեսնելու նոր պայմաններում Ես-ի կոմպենսատորային բնութագիրը:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Абульханова-Славская, К.(1980). Стратегия жизни. Москва.
2. Василюк, Ф. (1984). Психология переживания: Анализ преодоления критических ситуации. Москва.
3. Головин, С. (1998). Словарь практического психолога. Москва.
4. Дьяченко, М., Кандыбович, Л. (1976). Психологические проблемы готовности к деятельности. Минск.
5. Зотова, О. Кряжева, И. (1979). Некоторые аспекты социально-психологической адаптации личности. В сб.: Психологические механизмы регуляции социального поведения. Москва.
6. Калайков, И. (1984). Цивилизация и адаптация. Москва.
7. Короленко, Ц. (1978). Психофизиология человека в экстремальных условиях. Ленинград.
8. Лебедев, В. (2001). Экстремальная психология. Психическая деятельность в замкнутых системах. Москва.
9. Маклаков, А. (2001). Личностный адаптационный потенциал: его мобилизация и прогноз в

экстремальных условиях. Психологический журнал. Москва, № 1.

- 10.Муздыбаев, К. (1998). Стратегия совладания с жизненными трудностями. Журнал социологии и социальной антропологии. Т.1, Вып. 2.
- 11.Нуркова, В.,Василевская, К. (2003). Автобиографическая память в трудной ситуации: новые феномены. Вопросы психологии. Москва, № 5.
- 12.Осипова, А. (2005). Справочник психолога по работе в кризисных ситуациях. Ростов н/Д.
- 13.Тарас, А., Сельченко,К. (сост.) (2000). Психология экстремальных ситуаций: Хрестоматия. Москва.
- 14.Свиридов, Н.(1980). Социальная адаптация личности в трудовом коллективе. Социологические исследования. Москва, № 3.
- 15.Соловьева, С. (2003). Психология экстремальных ситуаций. Санкт-Петербург.
- 16.Ильичёв, Л., Федосеев, П., Ковалёв, С., Панов, В. (ред.) (1983). Философский энциклопедический словарь.Москва.
- 17.Шибутани, Т. (2002). Социальная психология. Москва.

## ԱՆՁԻ ԿՈՄՊԵՆՍԱՏՈՐԱՅԻՆ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը ներկայացնում է արտակարգ իրավիճակներում անձի ադապտացման գիտամեթոդաբանական քննությունը: Հետազոտության առարկան անձի կոմպենսատորային ադապտացման բնութագրումն է: Հետազոտության նպատակն է անձի ադապտացման յուրահատկությունների դիտարկմանն ու բացահայտմանը ուղղված՝ այդ հատկանիշների դրական կամ բացասական ուղղվածության սահմանումն ու բնորոշումը: Հետազոտության մեթոդաբանական հիմք են ծառայել Տ.Շիբուտանիի, Ս.Ռուբինշտեյնի, Ֆ.Վասիլյուկի հայացքները ճգնաժամային, արտակարգ և շրջադարձային իրավիճակների, Ջ.Ֆրեյդի և Ա.Ադլերի հայացքները կոմպենսացիայի՝ որպես պաշտպանական մե-

խանիզմի վերաբերյալ: Հետազոտության արդյունքով կազմվել է անձի կոմպենսատորային ադապտացման հայեցակարգային մոդելը, ներկայացվել են անձի ադապտացման կոնստրուկտիվ և դեստրուկտիվ հատկանիշների դրսևորումները: Կոմպենսացիան բնութագրվել է որպես անձի ադապտացման հոգեբանական ռեսուրսների վերաբաշխման պաշտպանական մեխանիզմ:

*Հանգուցային հասկացություններ.*

ադապտացում, արտակարգ իրավիճակ, կոնստրուկտիվ հատկանիշ, դեստրուկտիվ հատկանիշ, կոմպենսատորային արտակարգ իրավիճակ:

*Arevik ERITSYAN*

## CHARACTERISTICS OF PERSON'S COMPENSATORY ADAPTATION IN EMERGENCY

### ABSTRACT

This article presents the theoretical-methodological review of person's adaptation in emergency. The object of investigation is characteristics of person's compensatory adaptation. The general goal of research is observation and determination of positive and negative features deal with the peculiarities of person's adaptation. The methodology of research is based on the works of T.Shibutani, S.Rubinshtain, F.Vasiljuk about emergency, crisis and the works of Z.Freud and A.Adler about

compensation as a way of defense. In the result of the research it is presented the concept of person's compensatory adaptation. Constructive and destructive features of adaptation are presented too. Compensation is characterized as a defensive mechanism of distribution of the psychological resources of person's adaptation.

*Key concepts:* adaptation, emergency, constructive feature, destructive feature, compensato-

ry emergency.

*Аревик ЕРИЦЯН*

## ХАРАКТЕРИСТИКА КОМПЕНСАТОРНОЙ АДАПТАЦИИ ЛИЧНОСТИ В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ

### РЕЗЮМЕ

В статье представлено теоретико-методологическое исследование адаптации личности в чрезвычайных ситуациях. Предметом исследования является характеристика компенсаторной адаптации личности. Целью исследования является наблюдение и определение положительной или отрицательной направленности признаков адаптации, способствующее выявлению особенностей адаптации личности. Методологической основой исследования стали работы Т.Шибутани, С.Рубинштейна, Ф.Василюка о кризисных, чрезвычайных и поворотных ситуациях, взгляды Фрейда и Адлера о компенсации как за-

щитном механизме. В результате исследования была выдвинута концептуальная модель компенсаторной адаптации личности, представлены проявления конструктивных и деструктивных признаков адаптации личности. Компенсация была охарактеризована в качестве защитного механизма перераспределения психологических ресурсов адаптации личности.

*Ключевые понятия:* адаптация, чрезвычайная ситуация, конструктивный признак, деструктивный признак, компенсаторная чрезвычайная ситуация.

## ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ «ՓԻԼԻՍՈՓԱՅՈՂ» ԵՐԵԽԱՆ

Մեր օրերում կրթությանը, գիտությանը, դաստիարակությանը վերաբերող հարցերն ու խնդիրները կարևորվում են ավելի, քան երբևէ: Առանձնահատուկ ուշադրության է արժանանում երիտասարդ սերնդի աշխարհայացքային կրթության ձևավորման և զարգացման խնդիրը: Այս ոլորտում ամեն մի ներդրում (ժամանակ, ջանք, ֆինանսական միջոցներ), ըստ էության, ներդրում է տվյալ երկրի, պետության և ողջ մոլորակի առողջ, ամուր, առաջադեմ և ապահով ապագայի համար: Խնդրո առարկա համատեքստում առավել կարևորվում են երեխաները, և ներկա հետազոտությունը նպատակ ունի վերհանելու «փիլիսոփայող երեխայի» կրթության կազմակերպման մի կոնկրետ տեսանկյունը. այն է՝ երեխայի արժեհամակարգը ձևավորող լեզվամշակութային միջավայրի և դրա ներգործության մեխանիզմների ուսումնասիրությունը:

Երեխայի խոսքի, լեզվամշակութային ինքնության ձևավորումը, սեփական ես-ի ու շրջապատող աշխարհի ճանաչողությունը զուգակցվում է ժամանակի բնույթի, գոյության, ինքնաճանաչողության, բարու և չարի, մարդու և բնության փոխհարաբերության և այլնի մասին բազում փիլիսոփայական-մետաֆիզիկական հարցերի տարափոփ, որոնք, սակայն, միշտ չէ, որ արժանանում են անհրաժեշտ ուշադրության, և միշտ չէ, որ մեծահասակներին հաջողվում է բավարարել երեխայի հետաքրքրասիրությունը, ինչի հետևանքով, ինչպես նշում է Ն.Յուլինան, 10-11

տարեկան հասակում երեխաների մոտ նկատվում է ակնհայտ անտարբերություն, իսկ ուսումնառության միջին հաստիքում գիտելիքի ընկալումը նրանց համար վերածվում է տեղեկույթի մեխանիկական կուտակման (տե՛ս Юлиан 1996: 5):

Այս և նման լրջագույն խնդիրներին լուծում տալու նպատակով 20-րդ դարի 60-ական թթ. վերջին Կոլումբիայի (ԱՄՆ) համալսարանում փիլիսոփայության դասախոս Մեթյու Լիպմանը ստեղծեց *Փիլիսոփայությունը երեխաների համար* ծրագիրը դպրոցականների համար: Մ.Լիպմանի և նրա հետևորդների ջանքերի շնորհիվ հետագայում ստեղծվեց *Փիլիսոփայությունը երեխաների համար ծրագրի զարգացման և խթանման ինստիտուտը* (այս մասին հանգամանորեն տե՛ս Հովհաննիսյան 2015):

Մ.Լիպմանն իր՝ *Մտածողությունը կրթության գործընթացում* (*Thinking in Education*) մենագրության հինգերորդ գլխում՝ *Բռնության նվազեցմանն ուղղված հետազոտողների ընկերությունը* (*The Community of Inquiry Approach to Violence Reduction*) (տե՛ս Lipman 2003: 105-124), կրթության գործընթացում հնարավորինս բացառում է «բռնությունը»՝ որպես կարծրատիպային մտածողության հետևանք, երբ մարդուն պարտադրվում են տվյալ հանրությանը հատուկ, ընդունված կաղապարներ, որոնք կոնկրետ իրավիճակներում չարդարացված գնահատականների և հետևությունների տեղիք են տալիս՝ դառնալով իրականության ոչ ճիշտ ընկալման

պատճառ: Ուստի, որպես խնդրի լուծման հնարավոր տարբերակ, Մ.Լիպմանն առաջարկում է երեխայի ինքնուրույն մտածողության խթանման խնդիրը, ինչը կբացառի նրա՝ արտաքին ազդակներին բնագոյաբար և մեխանիկորեն տրվող պատասխանների հավանականությունը:

Ըստ Մ.Լիպմանի՝ երեխայի ինքնուրույն մտածողության ձևավորման և զարգացման միջոց է նրան հնարավորություն տալը ինքնուրույն սահմանելու կամ բացատրելու *խաղաղություն, ազատություն, հավասարություն, ժողովրդավարություն, անհատականություն, իրավունք, արդարություն* և այլ հասկացությունները, որոնց շուրջ ծավալվող քննարկումները իրականացվում են դասարանում՝ այն վերածելով «հետազոտողների ընկերության», որտեղ երեխաներն ազատ արտահայտում են իրենց մտքերը, մասնավորեցնում հասկացություններ, ծավալում քննարկումներ, զարգացնում վարկածներ, գնահատում հնարավոր հետևանքները և, ի վերջո, սովորում մտորել միահամուռ ուժերով, ըմբռնել ինտելեկտուալ շփումն ու հաղորդակցումը, փոխադարձ կապվածությունը, իսկ ուսուցիչը հետևում, ուղղորդում է մշակութային-աշխարհայացքային պատկերներ փոխանցելու այդ ամբողջ գործընթացը՝ կիրառելով սոկրատեսյան երկխոսության սկզբունքը (տե՛ս Lipman 2003: 105-106): Վերջինս փիլիսոփայության և աշխարհընկալման տեսանկյունից շփման, մարդկային փոխհարաբերությունների գենետիկորեն ելակետային ձևն է և ենթադրում է մեծահասակների ու երեխաների անմիջական շփման ընթացքում արժեքաբանական, իմացաբանական, գոյաբանական, բարոյական, գեղագիտական, աշխարհայացքային և այլ փիլիսոփայական խնդիրների առաջադրում և դրանց լուծման քայլերի ձեռնարկում: Արդյունքում երեխան մեծահասակ-

ների և հասակակիցների հետ համատեղ կերտում է աշխարհի գիտակցված իմաստային պատկերը՝ սեփական աշխարհայացքը<sup>1</sup>:

Ամեն մի հասարակության մեջ և ամեն մի լեզվական միջավայրում առկա են արժեքային հասկացություններ, որոնք ի սկզբանե հայտնի են, և լեզվին տիրապետողը գիտի, որ որոշ բառեր ունեն իմաստային դրական (օրինակ՝ «առաքինություն», «քաջ») կամ բացասական (օրինակ՝ «արատ», «վախկոտ») երանգավորում, ինչն անքակտելիորեն կապված է բառերի բուն իմաստի հետ: Երեխաների՝ բառերին հատուկ իմաստային այս կամ այն երանգավորումը տարբերակելու կարողությունը հիմք կդառնա լավը վատից տարբերակելու խնդրում, և նա վստահորեն կկարողանա պնդել, որ «մեծահոգությունը» միշտ լավ է, իսկ «դաժանությունը» վատ: Ուստի մայրենի լեզվին տիրապետելը բավարար պայման է լավն ու արդարը տարբերելու համար (տե՛ս նույն տեղում):

Արժեքային բնույթի բառերը, ինչպես նաև մի շարք վերացական բառեր երեխայի ակտիվ և պասիվ բառապաշարի մասն են, դրանք արտահայտում են հոգևոր երևույթներ, և դրանցում արտացոլվում է ազգի բարոյական-էթիկական փորձը: Այդպիսի բառերը երեխաներն օգտագործում են ինչպես հաղորդակցման, գիտելիքի փոխանցման, այնպես էլ որոշ երևույթներ մատնանշելու նպատակով, և, հետևաբար, այդ բառերի հետ կապվում է որոշակի բովանդակություն: Վերացական բառը և

<sup>1</sup> Այս մասին տե՛ս, Ռուսաստանի կրթության ակադեմիայի հոգեբանական ինստիտուտի, Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի գիտաշխատողների ջանքերով մշակված և ՌԴ կրթության նախարարության կողմից երաշխավորված «Философия для детей» կրթական ծրագրի պաշտոնական կայք-էջում՝ [www.p4c.ru](http://www.p4c.ru):



կենդանի պատկերը արտաքին, իրավիճակային, ակներև հատկանիշների ամբողջություն են, իսկ ինքնաբերական աշխարհայացքային պատկերացումը երեխայի աշխարհընկալման կայացման իրական կենդանի մասնիկն է: Լ.Վիգոտսկու կարծիքով՝ առօրյա լեզվի վերացական բառերի իմաստների զարգացումն ու կայացումը և աշխարհայացքի ձևավորումը նույն գործընթացն է: Առօրյա լեզվի վերացական բառը և այն սուբյեկտիվ իրականությունը, որն արտահայտված է այդ բառով, ոչ միայն մշակութային փոխադասարարության, այլև աշխարհընկալման մի մասնիկն են: Աշխարհայացքային պատկերացումների մասին տեսությունը, այդպիսի պատկերացումների գիտականորեն հիմնավորված դասակարգումը թույլ կտան նախքան երկխոսություն սկսելը վստահորեն և ճշգրտության բարձր հավանականությամբ կանխատեսել, թե ինչորոշ առարկա թեմայի շուրջ ինչպիսի աշխարհայացքային պատկերացումների է տիրապետում մեր երիտասարդ գրուցակիցը<sup>2</sup>:

Ինչպես արժեքաբանական, այնպես էլ վերացական բնույթի բառերը, որոնք կարևոր տեղ են գրավում փոխադասարար «երեխայի բառապաշարում», պայմանավորված են կոնկրետ լեզվամշակութային միջավայրի յուրահատկությամբ, որն իր անմիջական դրոշմն է թողնում երեխայի և առհասարակ լեզվակիր անհատի մտային գործընթացների վրա:

<sup>2</sup> Այս մասին տե՛ս Ռուսաստանի կրթության ակադեմիայի հոգեբանական ինստիտուտի, Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի գիտաշխատողների ջանքերով մշակված և ՌԴ կրթության նախարարության կողմից երաշխավորված «Философия для детей» կրթական ծրագրի պաշտոնական կայք-էջում՝ [www.p4c.ru](http://www.p4c.ru), մասնավորապես *Философия для детей. Актуальный этап развития* բաժնում (<http://www.p4c.ru/index.php?view=book&item=660&cat=0&full=yes>):

Իսկ ի՞նչ է *լեզվամշակութային միջավայրը* որպես այդպիսին: Ընդհանրացնելով *Լեզվաբանական տերմինների բառարանի* (Словарь лингвистических терминов 2010), *Մեթոդական տերմինների և հասկացությունների նոր բառարանի* (Новый словарь методических терминов и понятий 2009), *Լեզվական հաղորդակցումներ. համառոտ բառարանի* (Языковые контакты: краткий словарь 2011) սահմանումները՝ *լեզվական միջավայր* տերմինը կարելի է սահմանել որպես պատմականորեն ձևավորված հանրության ընդհանուր լեզվի և մշակույթի վրա հիմնված հաղորդակցական միջավայրի տեսակ, որում իրականանում է լեզվական սոցիալականացման գործընթացը՝ լեզվի տարրերի և կառուցվածքի յուրացման, այս կամ այն սոցիալական միջավայրի խոսքային նորմերի տիրապետման, խոսքային վարվելաձևի կարծրատիպերի յուրացման և կիրառման միջոցով: Լեզվական սոցիալականացման գործընթացը, որը ենթադրում է տիրապետում լեզվին՝ որպես հաղորդակցման մեթոդի, նպաստում է հասարակության շրջանակներում սոցիալական փոխհարաբերության հաստատմանը:

Լեզվական միջավայրն անբաժանելիորեն կապված է տվյալ էթնոսի մշակութային յուրահատկությունների և առանձնահատկությունների հետ, որոնք համակարգված կերպով կերտում են մշակութային միջավայրը: *Լեզվական միջավայր* և *մշակութային միջավայր* հասկացություններն այնքան փոխկապակցված և պայմանավորված են մեկը մյուսով, որ հաճախ միավորվում են մեկ՝ *լեզվամշակութային միջավայր* տերմինի ներքո:

Լեզվի և մտածողության փոխադարձ կապի, ինչպես նաև աշխարհընկալման և ճանաչողության գործընթացում լեզվի կարևոր դերի մասին վկայում է ճանաչողական (կոգնիտիվ) լեզվաբանությունը, որը մարդու ճանաչողա-

կան աշխարհին ուսումնասիրում է ըստ իր գործունեության և վարքագծի, որոնք պայմանավորված են և իրականանում են լեզվի՝ որպես մարդկային ցանկացած գործունեության խոսքային-մտածական հենքի ակտիվ մասնակցությամբ (տե՛ս Маслова 2004: 7):

Ճանաչողական լեզվաբանության շրջանակներում կարևորվում է լեզվի՝ որպես իմացության պայմանի և միջոցի դերի բացահայտումը: Լեզուն կերտում է լեզվակիր անհատի աշխարհի պատկերը և նպաստում լեզվական գիտակցության կազմավորմանը (տե՛ս նույն տեղում. 12), ինչն առավել ցայտուն է արտահայտվում, երբ լեզվակիր անհատը երեխա է: Աշխարհի լեզվական պատկերը կերտվում է լեզվում ամրագրված հասկացությունները մեկ ընդհանուր պատկերում համակարգելու արդյունքով: Քանի որ աշխարհի պատկերը՝ որպես խճանկար, կազմված է հասկացություններից և դրանց միջև առկա կապերից, այն հաճախ անվանվում է *աշխարհի հասկացության պատկեր* (տե՛ս Хроленко 2009: 56), որտեղ դրոշմված են յուրաքանչյուր ազգին հատուկ էթնո-մշակութային առանձնահատկությունները: Աշխարհի պատկերի ազգային յուրահատկությունը պայմանավորված է դրանում այս կամ այն հասկացությունների առկայությամբ կամ բացակայությամբ, դրանց փոխադարձ կապերով և արժեքաբանական աստիճանակարգությամբ (տե՛ս նույն տեղում. 56):

Ազգային լեզուն ստեղծում է աշխարհի յուրահատուկ պատկերը և յուրովի է տրոհում աշխարհը, ունի հասկացության դաշտի կերտման յուրահատուկ միջոցներ: Լեզվակիր անհատի խոսքը և շրջապատող իրականության ընկալումը ձևավորվում են այդ պատկերին համապատասխան, ինչը վկայում է լեզվի մեջ մարդու աշխարհընկալման ամրագրվածության մասին: Այսպես՝ երեխաները վաղ

հասակում մշակում են իրենց յուրօրինակ լեզուն, ինչը վկայում է նրանց կողմից աշխարհի աստիճանական ընկալման մասին:

Այսպիսով, լեզուն շրջապատող իրականության մասին մարդու գիտելիքի կազմավորման և գոյության, ինչպես նաև պահպանման և փոխանցման կարևորագույն միջոց է, իսկ աշխարհի լեզվական պատկերը աշխարհի մասին մարդկային գիտելիքի ամբողջությունն է՝ ամրագրված լեզվում: Յու.Ապրեսյանի բնորոշմամբ՝ «յուրաքանչյուր բնական լեզու աշխարհընկալման և աշխարհի կարգավորվածության, հասկացության դաշտի կերտման որոշակի միջոց է: Դրանում արտահայտված իմաստները միավորվում են հայացքների ընդհանուր համակարգում, այսպես կոչված կոլեկտիվ փոխափայտության մեջ, որը պարտադրվում է յուրաքանչյուր լեզվակիր անհատի» (տե՛ս Хроленко 2009: 55):

Լ.Վիգոտսկին գտնում է, որ «լեզվի միջոցով է իրականանում մեր մտածողությունը՝ որպես փորձի ներքին համակարգային կարգավորվածության արտացոլում» (Выготский 2000: 195):

Երեխայի կողմից մայրենի լեզվի յուրացումը տեղի է ունենում մտքերի ներքնայնացման միջոցով: Երեխան որպես մայրենի լեզու է ընկալում այն լեզուն, որով խոսում են իր շրջապատում, այն լեզուն, որը նա ավելի հաճախ է լսում: Երեխան ճանաչում է աշխարհն այն հասկացությունների միջոցով, որոնք գոյություն ունեն իր մայրենի լեզվում, ասել է, թե՛ իր մայրենի լեզվի կերտած աշխարհի լեզվական պատկերի միջոցով:

Հայտնի է, որ տարբեր լեզուների կրողները նույն երևույթն ընկալում են տարբեր կերպ՝ հենվելով իրենց մայրեի լեզվի հասկացության կազմի վրա: Կարելի է ասել, որ հենց լեզուն է արտացոլում լեզվական-մշակութային իրականությունը, իր մեջ կրելով տվյալ

ազգի և հասարակության բարոյահոգեբանական, կրոնական, մշակութային և ազգային մտածելակերպով (մենթալիտետով) պայմանավորված առանձնահատկությունները:

Ասվածից ակնհայտ է, որ լեզվամշակութային միջավայրի դերը «փիլիսոփայող երեխայի» ինքնուրույն, վերլուծական, քննադատական, կշռադատված մտածողության ձևավորման և զարգացման գործում կարևոր խնդիր է: *Փիլիսոփայությունը երեխաների համար* ծրագիրը «հանրամատչելի», «սիրողական», կամ պարզապես «երեխայական» փիլիսոփայություն չէ: Այն լուրջ գիտատեսական հիմնախնդիրների հարմարեցումն է երեխաների ընկալման յուրահատկություններին: Ուստի ԱՄՆ-ում մշակված և մի շարք այլ երկրներում տարածում գտած *Փիլիսոփայությունը երեխաների համար* ծրագրի սկզբունքների և այդ երկրներում դրա իրականացման հարուստ փորձի հիման վրա հայ

իրականությանը համապատասխան ազգային տարբերակի մշակումը և ներմուծումը ՀՀ նախադպրոցական ու դպրոցական կրթական համակարգեր՝ այն համապատասխանեցնելով հայ լեզվամշակութային միջավայրի յուրահատկություններին, ժամանակի պահանջներին և ազգային խնդիրներին, կնպաստի հայ մանկան՝ որպես «փիլիսոփայող երեխայի» ձևավորմանն ու բազմակողմանի կայացմանը, ինչն էլ կդառնա մեր հասարակության, մեր երկրի առաջադեմ և կայուն ապագայի գրավականը:

Հասկանալի է՝ մի հողվածի շրջանակներում հնարավոր չէ ավարտուն կերպով իրականացնել այսքան ծավալուն և հրատապ խնդրի լուծմանն ուղղված տեսական և գործնական բազմակողմանի ուսումնասիրությունը: Այն կդառնա հետագա հետազոտությունների օբյեկտ:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովհաննիսյան, Հ. (2015): «Վաղ տարիքում փիլիսոփայական մտածողության զարգացման հեռանկարները հայ իրականության մեջ»: *Իմաստություն* գիտական հոդվածների ժողովածու (գլխ. խմբ. Բրուտյան Գ.), 2(3), 2014 (էջ 56-75): Երևան, *Տիգրան Մեծ* հրատարակչություն:
2. Lipman, M. (2003). *Thinking in Education*, 2nd edition. Cambridge: Cambridge University press, 304p.
3. Выготский, Л.С. (2000). *Психология*. Москва: изд-во ЭКСМО-Пресс, 1008 с.
4. Маслова, В.А. (2004). *Когнитивная лингвистика*. Учебное пособие. Минск: изд-во *ТетраСистемс*, 256 с.

5. Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам) (2009). Азимов, Э.Г., Щукин, А.Н. (ред.). Москва: изд-во ИКАР.
6. Словарь лингвистических терминов (2010). Жеребило Т.В. (ред.). Изд. 5-е, испр-е и дополн. Назрань: изд-во *Пилигрим*.
7. Хроленко, А.Т. (2009). *Основы лингвокультурологии*. Учебное пособие для филологов и культурологов. Пятое издание. Москва: изд-во Флита: *Наука*, 184 с.
8. Юлина, Н.С. (1996). *Философия для детей*. Москва: изд-во ИФРАН, 241 с.
9. Языковые контакты: краткий словарь (2011). Панькин, В.М., Филиппов, А.В. (ред.). Москва: изд-во *Наука*.

## ԼԵԶՎԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ «ՓԻԼԻՍՈՓԱՅՈՂ» ԵՐԵԽԱՅԻ

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հաշվի առնելով մեր օրերում կրթությանը, գիտությանը, դաստիարակությանը վերաբերող հարցերի նկատմամբ մշտական ուշադրությունը և հատկապես երիտասարդ սերնդի աշխարհայացքային կրթության ձևավորման և զարգացման խնդրի կարևորությունն ու հրատապությունը՝ հողվածում առաջին անգամ առաջադրվում է «փիլիսոփայող երեխայի» աշխարհայացքի և դրա ձևավորմանը նպաստող լեզվամշակութային միջավայրի փոխադարձ կապի ուսումնասիրության խնդիրը:

Խնդիր է դրվում է ստեղծել դիտարկվող ծրագրի ազգային տարբերակը՝ ըստ հայ լեզվամշակութային միջավայրի յուրահատկությունների, ժամանակի պահանջների և ազգային խնդիրների, ինչը կնպաստի ՀՀ նախադպրոցական ու դպրոցական կրթական

համակարգերում «փիլիսոփայող երեխայի» ձևավորմանն ու բազմակողմանի կայացմանը:

Հետազոտությունը որպես այդպիսին նախագծային է և նպատակ ունի գիտական հանրության ուշադրությունը կենտրոնացնել առաջադրված խնդիրների վրա, որոնց բազմակողմանի ուսումնասիրությունը հետագա դիտարկումների օբյեկտ կդառնա:

*Հանգուցային հասկացություններ.* «փիլիսոփայող երեխա», հետազոտողների ընկերություն, լեզվամշակութային միջավայր, սոկրատեսյան երկխոսություն, արժեքաբանական բառ, վերացական բառ, աշխարհի լեզվական պատկեր, լեզվական գիտակցություն, լեզու և մտածողություն:

Satenik KUZANYAN

## LINGUOCULTURAL ENVIRONMENT AND THE “PHILOSOPHIZING” CHILD

### ABSTRACT

Taking into consideration current continual attention to the questions concerning education, science, upbringing and especially the importance and urgency of younger generation's ideological education formation and development, in the present article is advanced the issue of investigation of the interrelation of “philosophizing child's” worldview and linguocultural environment that influences on the formation of the latter.

In the article it is suggested to develop the national variant of the concerned program according to the specifics of Armenian linguocultural environment, time requirements and national issues that will promote the formation and comprehensive implementation of “Philosophizing child's” personality in the preschool and school educational systems of RA.

The investigation is projective in its nature. Its aim is to concentrate the interest of scientific

community on the advanced issues, the comprehensive study of which will become the object of further observations.

*Key concepts:* «philosophizing child», community of inquiry, linguocultural environment, socratic dialogue, axiological word, abstract word, language picture of the world, language consciousness, language and thinking.

Տառնիկ ԿՈՉԱՆՅԱՆ

## ЛИНГВОКУЛЬТУРОЛОГИЧЕСКАЯ СРЕДА И «ФИЛОСОФСТВУЮЩИЙ» РЕБЕНОК

### РЕЗЮМЕ

Учитывая постоянное внимание современности к вопросам касательно образования, науки, воспитания и, особенно, важность и urgency вопроса формирования мировоззренческого образования молодого поколения, в статье впервые выдвигается проблема исследования взаимосвязи мировоззрения «философствующего ребенка» и способствующей его формированию лингвокультурологической среды.

Предлагается создать национальный вариант рассматриваемой программы согласно особенностям армянской лингвокультурологической среды, требованиям времени и национальным проблемам, что способствует формированию и многостороннему становлению

«философствующего ребенка» в дошкольных и школьных учебных системах РА.

Исследование само по себе проектное, которое направлено на то, чтобы сосредоточить внимание научного общества на выдвинутые проблемы, многостороннее исследование которых станет объектом дальнейшего рассмотрения.

*Ключевые понятия:* «философствующий ребенок», сообщество исследователей, лингвокультурологическая среда, сократический диалог, аксиологическое слово, абстрактное слово, языковая картина мира, языковое сознание, язык и мышление.

## ՓՈՔԻ ՄՅԵՐ. ԸՆԴՎՁՈՂ, ԹԵ՞ ՕՏԱՐՎԱԾ ՀԵՐՈՍ

Էպոսի կերպարների քննությունն անսահման հնարավորություններ է ընձեռում ազգային հոգեկերտվածքի ուսումնասիրման տեսանկյունից, այն թույլ է տալիս ներթափանցել էպոսաստեղծ ժողովրդի ենթագիտակցական և անգիտակցական ոլորտներ և վերծանել այդ գաղտնարանի ծածկագրերը: «Ժողովրդի հոգին հասկանալու համար հարկավոր է ներթափանցել նրա երազների մեջ: Ժողովրդի երազներն են նրա էպոսը, նրա հեքիաթները, նրա պոեզիան: ... Ժողովրդի ենթագիտակցական հոգին էպոսում արտահայտում է այն ամենը, ինչը նա ծածուկ է տեսնում և ինչից վախենում է: Այդ ենթագիտակցական ուժերում է ամփոփված ողջ անցյալն ու ապագան» (Виславац 1995: 346, 351): Էպոսն իր մեջ ամփոփում է ժողովրդի խորախորհուրդ իմաստությունն ու պատգամները գալիք սերունդներին. «Այս իմաստով հայոց էպոսը ոչ թե դաս, այլ ամբողջական համակարգված դասընթաց է ձևակերտել՝ իր հերոսների ճակատագրի, վարքի և սխալների ճիշտ ընթերցում-մեկնությունը վստահելով ապագայի մեկնիչներին» (Ավետիսյան 2013): Հայկական էպոսն իր մեջ խտացրել է հայի աշխարհայացքի, աշխարհընկալման ողջ համակարգը, հիրավի այն հայ ժողովրդի գլուխգործոց ստեղծագործությունն է: Ամենին պատահական չէ, որ էպոսի թեմային անդրադառնալիս հայ մտավորականներն այն համարել են հայկական մշակույթի բարձրակետը, ոմանք նույնիսկ սրբացրել՝ համարելով հնագույն հեթանոսական Աստվածաշունչ (Արմին 2007), այն չընդունելով սոսկ որպես ժողովրդի ստեղծագործական մտքի հղացք: «Մեր էպոսն ինձ

համար ուղղակի հայ ողջ մշակույթի գագաթն է: Հենց Փոքր Միերի ճյուղը ...» (Մաթևոսյան 2005. 51),- ասա, թե որքան է արժևորում էպոսը Հր.Մաթևոսյանը: Էպոսի հերոսների վարքն ու բարքը, նրանց սխալներն ու սխալները խորհելու տեղիք են տալիս, դրանք կարծես յուրօրինակ գաղտնագրեր են, որ կարիք ունեն վերծանման, մեր անգիտակցականի խորքերից մի ժամանակ ազատված խորհուրդներ են, որոնց անտեսումը կարող է կործանիչ լինել մեզ համար: «Ինչու էր Հր.Մաթևոսյանը շեշտադրում՝ «Հենց Փոքր Միերի ճյուղը», որովհետև նրանում առավել քան ողբերգականորեն խտացած է Սասնա գարմի նախորդ սերունդների սխալ վարքագծի ճակատագրականությունը, ինչը էպոսի նախորդ ճյուղերում հնչեցվել էր որպես վտանգված ինքնության ահազանգ» (Ավետիսյան 2013):

Փոքր Միերը, թերևս, հայկական էպոսի ամենաառեղծվածային կերպարներից է, նա կարծես մեր ժողովրդի ենթագիտակցական և անգիտակցական մղումների խորախորհուրդ մարմնավորումն է: Փոքր Միերը նաև ամենահակասական կերպարներից է: Շատ հետազոտողներ յուրովի են մեկնաբանել Փոքր Միերի կերպարը՝ նկատելով թաքնված խորհուրդներ, անբացատրելի վարքաձև: Այսպես է նրան տեսել նաև մեծանուն հայ բանաստեղծ Ավ.Իսահակյանը՝ ընդգծելով Միերի երկակի բնույթը. «Էպիկական Միերը դիալեկտիկ հակասությունների մի կոմպլեքս է. նա բարի է, նա չար է, վերջնական սինթեզի մեջ բարի է: Կարծես ժողովուրդը կործանել է իր հեթանոսական մեհյանները և քրիստոնեական տաճարները և նրանց քարերից նոր շաղախով

բարձրացրել է իր մոնումենտալ նոր շենքը – Մհերին՝ մարգարեական լուսապսակով զարդարված» (Իսահակյան 1977. 157, 166): Ի տարբերություն էպոսի մյուս դյուցազունների՝ նրան բոլորովին այլ ճակատագիր է բաժին հասել: Փոքր Մհերը կարծես բնականի և գերբնականի սահմանագծում մոլորված ոգի լինի, որն անվերջ դեգերումների մեջ է: «Ներսի մեջ աճող երկակի գոյություն ուներ, որ մեկ էլ տեսար ինքն իր դեմ հակադիր կեցվածքների էր վերածվում: Մեկը ներհակ, անհնազանդ խռովարարի ըմբոստությունն էր, որ հանում էր բոլորի դեմ, անհաշտ էր պահում աշխարհի հետ, երկրորդը ստիպում էր կյանքը, անգամ իրեն անհասկանալի, անհայտ ինչ-որ բանի նվիրաբերել, լինել անընդհատ շրջապատյա ճանապարհների վրա: Մի գործությունն օտարում էր աշխարհից, երկրորդը անապատներում թափառական դարձնելով՝ նպաստում էր անտեսանելի աշխարհի դռները որոնելուն» (Խեչոյան 2014. 94):

Նրա առեղծվածային բնույթը նկատվում է հենց ծնված օրից, երբ հարազատները զարմանում են նրա խուփ ձեռքը տեսնելով, իսկ այն բացելուց հետո՝ մի կաթիլ արյունը նկատելով.

«Թորոս առավ ըզողան, տեսավ.  
 Չմանուկի ձեռք մաժեց, մատներ բացվան.  
 Տեսավ, կաթ մի արյուն ձեռքի մեջ.  
 Ասաց.- Հայ, հայ, թե քար էտր մուտ տա,  
 մուտ տա,  
 Հող չի կարնա պահի.  
 Չաշխարհ արեր է կաթ մի արուն,  
 Դրեր է ի մեջ ձեռքին:  
 Թե որ էդի մնաց  
 Էդոր մոտեն զարմանալի բան տելնի»  
 (Մասունցի Դավիթ հայկական ժողովրդական էպոս 1939. 327):

Ինչ է հուշում մեզ այս դիպվածը. մի՞թե Մհերի ճակատագիրն արդեն կանխորոշված էր նրա ծննդյան առաջին իսկ օրվանից, չէ՞ որ քեռի Թորոսի կանխատեսումն իրականություն է դառնում, մի՞թե լույս աշխարհ գալով՝ Մհերն արդեն դատապարտված էր. ամեն ինչ ի վերուստ կանխորոշված էր, և նա պարզապես եկել էր խաղալու իրեն բաժին հասած դերը: Իսկ սա նշանակում է, որ նա ազատվում է որևէ պատասխանատվությունից, և զուր են նրան ուղղված բոլոր մեղադրանքները: Այս դեպքում հարց է ծագում, ինչու՞ է հայ ժողովուրդն իր վերջին դյուցազունին դատապարտել այսպիսի ճակատագրի: Փոքր Մհերի կյանքը ներթափացված է ողբերգականությամբ: Մանկուց նրան ուղեկցում է որբության զգացումը, որից ազատվելու համար նա որոշում է գտնել հորը, սակայն այս քայլն ավարտվում է հոր հետ մենամարտով և վերջինիս կողմից բանադրմամբ, որն էլ սկիզբ է դնում նրա հետագա դեգերումներին և ավարտվում աշխարհից մեկուսանալով: Ամենուր նրան ուղեկցում է օտարվածության և լքվածության զգացումը: Նա փորձում է փախչել անցյալից, սակայն իր ներկան ևս ոչինչ չի խոստանում, կյանքն սոսկ դատապարտվածության մի զգացում է, որի դեմ Մհերը փորձում է ընդվզել. նա Աստուծուց կռիվ է պահանջում՝ այդպիսով ցանկանալով ձերբազատվել այն դաժան վիճակից, որն իրեն բաժին էր հասել: Նա իր վրա է կրում ողջ մարդկության հոգսը, անարդար աշխարհը փոխելու անգործությունը ստիպում է նրան այդ աշխարհից հեռանալ:

«... Փոքր Մհերը հայոց առաջին escapist փախստականն է,- այսպես է բնորոշում նրան Ա.Ռսկանյանը,- հայրենի հողը չափազանց թույլ ու փխրուն է դառնում Մհերի ու նրա ձիու ոտքերի տակ, չի դիմանում սրանց ծանրությանը, նա իր վրա է կրում սեփական հոր



անեծքը և ահա այդ մեծ Հրաժարվողը պարփակվում է ժայռի մեջ, հայտարարելով, որ աշխարհը չար է, հողը ծերացել և խաբուսիկ է դառել, որ ինքը դուրս կգա լույս աշխարհի այն ժամանակ, երբ աշխարհը քանդվի ու նորից վերաշինվի: Պատմական ժամանակից խույս տված և Հավերժության մեջ պարփակված այդ տիպիկ մարգինալը կանգնեց հայոց Սփյուռքի սկունքներում» (Ոսկանյան 1993): Ինչպես տեսնում ենք՝ Փոքր Միերը հայոց ինքնության հարացույցում ունի իր ուրույն նշանակությունը, նա հայոց ինքնության արքետիպերից է: Մակայն Ա.Ոսկանյանի մեկնաբանության մեջ մի տեսակ հանդիմանություն է նկատվում, ինչը տարիներ անց նա այսպես է մեկնաբանում. «Միերի մեղավորության մասին թեզին հասնելով, տողերիս հեղինակը ստիպված է ընդհատել իր դատողությունների ընթացքը, խոստովանելու համար, որ շփոթված է: Քանի որ տարիներ առաջ Փոքր Միերի թեմային նրա անդրադառնալու հիմնական պատճառը վրդովմունքն է եղել: Հասարակական նորոգության եռանդով ներշնչված հեղինակը Միերին հայոց առաջին փախստական-էսկապիստն է համարել, որը նախնյաց ավանդական կարգի մեջ հենարան չգտնելով՝ նեղացել է աշխարհից, ապաստան գտել Ագռավաքարում և այսպիսով հիմք դրել հայերիս նեղացած, այսինքն, պատասխանատվությունից խուսափող հերոսների շարքին: Հեղինակն այժմ բոլորովին վստահ չէ, որ ճակատագրի քմահաճույքին թողնված խեղճ որբուկն ընտրության հնարավորություն ունեք: Նա ուզում է հասկանալ, այս ինչպես եղավ, որ տոհմի պատմության կեռմաններում կուտակված ողջ ծանր բեռն իր անտանելի ահռելիությամբ հանկարծ բարդվեց անձնող մնացած այդ հսկա մանուկի փխրուն ուսերին» (Ոսկանյան 2004.82): Այսպիսով, Ա.Ոսկանյանը այդուհանդերձ արդարացնում է Միերի փախուստը՝

հանգելով այն մտքին, որ վերջինս այլ ելք չուներ, նա դատապարտված էր «...Միերն այլևս խնդրելու բան չունի... Ժայռի ճեղքվելը սեփական արդարության չափանիշ կարգելով՝ նա փաստորեն ինքնուրույն որոշում է ընդունում: Դա փոքրիկ մի ապստամբությունն է, որից սկիզբ է առնում հայերիս՝ դիցաբանական համառությամբ վերարտադրվող «բարոյական հաղթանակների» անվերջանալի շարանը: Հաղթանակներ, որ մենք մշտապես տանում ենք *դայրացած հողի* և *չար* աշխարհի նկատմամբ» (Ոսկանյան 2004. 84): Գիտակցելով աշխարհի չարությունն ու հողի դալբացումը՝ Միերն իրեն օտարված և դատապարտված է զգում: «Միերն ստիպված էր հեռանալ եռաչափ գոյաբանական աշխարհից իր նախնիների սխալների պատճառով, քանզի նրանք՝ պապն ու հայրը, բավարար չափով խոհեմ չէին եղել երկրի նյութական և հոգևոր գանձերին տեր լինելու գործում, վտանգել էին իրենց և սերունդների ինքնությունը, ահա թե ինչու ծնողների հոգիները նրան հավերժ փրկության են մղում, իսկ համազգային միջակայան աշխարհագրությունը անվերջ վերադարձի գործառույթ շնորհում: Մենք՝ հայերս, սպասում ենք Միեր փրկչի հայտնությանը» (Ավետիսյան 2015): Այսպիսով, Միերի հեռացումը կամ օտարումը միակ լուծումն էր՝ կուտակված մեղքի ահռելի բեռի թթափման միակ առհավատչյան: Մակայն կյանքի արհավիրքներին դիմակայած ազգի վերջին դյուցազունը չէր կարող համակերպվել և հնազանդվել իր դժխեմ ճակատագրին՝ իր ներսում կրելով այդ խռովքը և փակվելով Ագռավաքարում՝ նա լիովին օտարված չէ, արտաքին աշխարհը չի դադարել գոյություն ունենալ նրա համար:

Պատմության տխուր դասերը յուրացրած հայը, ենթարկվելով դաժան փորձությունների, այդուհանդերձ չի դադարում հավատալ, նա կռիվ ունի աշխարհի հետ, այն անարդար աշ-

խարհի, որում կարծես ինքն այլևս օտարված է, այն աշխարհում, որտեղ արդարության հաստատման անվերջանալի կռիվ ունի: Ցեղասպանություն վերապրած հայը ցայսօր այդ անարդար աշխարհից պահանջում է ճանաչում և հատուցում, բայց կարծես թե աշխարհը չի շտապում արձագանքել: Հայը կարծես չի ուզում հավատալ, որ ինքն այլևս անելիք չունի. իր էպոսի վերջին դյուցազունն այդ հուսահատությունը փարատելու մի վերջին փորձ է անում. Մհերն Աստծուց խնդրում է.

«Որ կամ կռիվ մի տա իրեն,  
Կամ իրեն ամանաթ առնի» (Մասունցի  
Դավիթ հայկական ժողովրդական էպոս  
1961. 318):

Այստեղ արտառոց մի երևույթ է պատահում. Աստված հրեշտակների գորք է ուղարկում նրա հետ կովելու, սակայն այդ մենամարտը հաղթող չի ունենում: Մհերի այս խնդրանքն էլ է անհասկանալի հետևանք ունենում: Նա չի հասկանում՝ ինչու այդպես եղավ, չէ՞ որ իր հորդորը այլ էր, նա կասկածներ ունի, փորձում է հասկանալ՝ ո՞րն է իր մեղքը և արդյո՞ք մեղավոր է.

«Կանգնի, իմ թուր գարնետ էդ քարին,  
Թե կտրեց, ես չեմ մեղավորցեր,  
Թե չկտրեց, մեղավորցեր եմ:  
Թուր որ էզար քարին,  
Քար երկու կողմեն փեղկվավ,  
Ինք, իր ձին գնացին մեջ.  
Քար էկավ, իրար կպավ» (Մասունցի  
Դավիթ հայկական ժողովրդական էպոս  
1961.318):

Փաստորեն Մհերն ինքը կասկածում է իր անմեղությանը, նա ուզում է հասկանալ, գուցե ինքը մեղանչե՞լ է որևէ հարցում, և այդ է պատճառը, որ աշխարհը նրան չի հանդուրժում: «Աստծո կողքին արարելու համար, էպոսի լեզվով՝ *Ազոավի քարի* մեջ բնակվելու համար անհրաժեշտ է վերջնականապես և

անվերապահորեն վստահ լինել սեփական էության մեջ: «Քարը» չի հանդուրժի աննշան մեղավորությունը՝ այդ թագավորություն մուտք կունենա միայն նա, ով Աստծո Գառան պես անմեղ է» (Շահվերդյան 2001.110): Ժայռի բացվելը Մհերին նշան է, նրան տանջող հարցերից գեթ մեկը անպատասխան չի մնում, նա անմեղ է, բայց այս դեպքում մեկ այլ հարց է ծագում. ինչու՞ է նա արժանացել այսպիսի ճակատագրի:

Մի պահ թվում է, թե Մհերը որոշում է հեռանալ՝ պարզապես հոգնելով պայքարելուց: Շատ հետազոտողներ են նրան համարում փախստական, խռովյալ հերոս, անգամ մեղադրում իր այդ որոշման համար, սակայն էպոսը թույլ է տալիս այլ բան կարծել. նա այլ ելք չունի: Նա անվերջ պայքարում է իրեն բաժին հասած դառը ճակատագրի դեմ: Անգամ առժամանակ փակվելով Ագոավաքարում՝ նա չի կորցնում իր հույսը, նա դուրս է գալիս ժայռից ստուգելու հողի ամրությունը, ստուգելու՝ արդյո՞ք աշխարհը նորոգվել է: Ա.Ոսկանյանը Մհերի՝ ժայռում փակվելը համարում է ոչ արդարացված՝ նշելով, որ այդ հարցում նրա հայր Դավիթն ավելի շատ պատճառներ ուներ «չար» աշխարհից խռովելու. «Եթե աշխարհի «չար» լինելը արտաքին ճնշումներով բացատրվեր, ապա ժայռում փակվելու շատ ավելի մեծ հիմքեր պիտի ունենար Դավիթը, որը ստիպված էր մշտական և կատաղի պայքար մղել Մսրա Մելիքի եքսպանսիոնիզմի դեմ» (Ոսկանյան 2004.85): Առաջին հայացքից միանգամայն տրամաբանական է թվում այս բացատրությունը, այդուհանդերձ կարելի նկատել, որ խնդիրն այն չէ, որ Դավիթն անընդհատ ստիպված է եղել պայքարել հանուն հայրենի հողի ազատագրման, քանի որ Փոքր Մհերն այս հարցում առնվազն չի զիջում հորը, այլ այն, որ Մհերն իր վրա կրում էր բանադրվածի ծանր

լուծը: Եթե համեմատենք հոր և որդու կյանքը, ապա կնկատենք թե՛ նմանություններ, թե՛ էական տարբերություններ, որոնց արդյունքով նրանց ճակատագրերը տարբեր ընթացք ունեցան: Ե՛վ Դավիթը, և՛ Միերը ջանք չենք խնայել հայրենի հողի պաշտպանության համար՝ վտանգելով իրենց կյանքը և գրկանքներ կրելով: Նրանց երկուսին էլ մանկուց ուղեկցել է որբության զգացումը, սակայն հարկ է նկատել, որ Միերի դեպքն այլ էր: Ի տարբերություն Դավթի, որի լույս աշխարհ գալու համար ծնողները նվիրաբերեցին իրենց կյանքը, Միերն այլ կերպ է զգում որբության ծանրությունը: Ի վերջո այդքան փափագելով գտնել հորը՝ նա հայրական անեծքին է արժանանում. իր անվերջանալի դեգերումներից հոգնած՝ նա հանգուցյալ ծնողներին է դիմում՝ իրեն ուղղորդելու: Հենց նրանք էլ խորհուրդ են տալիս փակվել Ագռավաքարում: Այսպիսով, կարծել, թե Դավիթն ավելի շատ պատճառներ ուներ ժայռում փակվելու, ճիշտ չէ: Էպոսում մենք տեսնում ենք Միերի տառապանքը, նրա երկմտանքը: Ժայռում փակվելու որոշումը ինչ-որ իմաստով թելադրված էր նրան, այդ խորհուրդ տվեցին հանգուցյալ ծնողները, դա էր նրան հուշում Աստծու հրեշտակների հետ մենամարտը, ժայռը թրով կիսելու նրա պայմանը, «հողի դալբացումը». այս ամենն էլ հանգեցրեց այդ վճռին:

Ագռավաքարում Փոքր Միերի փակվելու ինքնատիպ մեկնաբանություն է ներկայացնում Ավետիսյանը, ըստ որի՝ Փոքր Միերին Ագռավաքարում փակելը վտանգված սերմը փրկելու հավատավոր ճիգ էր, մինչև հայոց միտքն ու ոգին զորություն կստանային գատորոշելու և վնասագերծելու մեր տեսադաշտից խուսափող անիրական թշնամուն (Ավետիսյան 2013): Այս կերպ, փաստորեն, Միերի հեռացումն արդարացված է. դա ժամանակ շահելու հուսահատ մի փորձ է, այլ ոչ թե հրա-

ժարում կամ սեփական խնդիրների լուծման անկարողության գիտակցումով պայմանավորված թուլակամության դրսևորում: Նրա առժամանակյա բացակայությունը պարզապես հուսահատության արդյունք չէր, Միերի ոչ-ը սոսկ մերժում չէր, այլ ընդվզում: Միերն ընդվզեց աշխարհի կարգի դեմ, նա ոչ ասաց «չար» աշխարհին, նա ձեռնոց նետեց անգամ Աստծուն՝ և չպարտվեց, և չհաղթեց: Միերի ընդվզումը սովորական ընդվզում չէր, նա միայն իր դժբախտ ճակատագրի դեմ չէր ընդվզում, այլ աշխարհակարգի, նրա ընդվզումը մետաֆիզիկական էր. «Մետաֆիզիկական ընդվզումը մարդու ապստամբությունն է իր բախտի և ողջ աշխարհակարգի դեմ: Այդ ընդվզումը մետաֆիզիկական է, քանի որ վիճարկում է մարդու և տիեզերքի վերջնական նպատակները: Ստրուկը բողոքում է իրեն բաժին հասած ստրկական վիճակից, մետաֆիզիկական ընդվզողը բողոքում է իրեն բաժին հասած բախտից, որին արժանացել է իբրև մարդկային ցեղի ներկայացուցիչ: Ապստամբած ստրուկը չի հաշտվում իր հանդեպ տիրոջ վերաբերմունքի հետ, մետաֆիզիկական ընդվզողը հայտարարում է, որ ինքը գրկված և խաբված է աշխարհի կողմից» (Kamio 1990:135): Եվ իսկապես, Միերը, ժայռում փակվելով, չէր ցականում պարզապես փախչել իր դժիսեմ բախտից, նա իր անձնական ճակատագրի համար չէր սրտնեղել, նրա բողոքն ավելի խորն արմատներ ուներ, նա ընդվզում է աշխարհակարգի դեմ, նրա մեջ է հայ ժողովուրդը արտացոլել իր բողոքն առ Աստված, ավելին, այդ ընդվզման հիմքում միայն բողոքը չէ, նրանում կա նաև սպասում, նա դեռ անելիք ունի, բայց սպասում է իր ժամին.

«...աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,  
Երբոր ցորեն եղավ քանց մասուր մի,  
Ու գարին եղավ քանց ընկուզ մի,

Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն» (Սասունցի Դավիթ հայկական ժողովրդական էպոս 1961. 319, 320):

Ինչպես և Մհերը, հայ ժողովուրդը շարունակում է սպասել այդ լուսավոր ապագային, աշխարհի նորոգությանը և արդարության վե-

րականգմանը: «Ապագայապաշտ է հայը. նրա կյանքի ամենաազդու մղումը լինելիական տենչանքն է. գալոց հավիտենականի կարոտը» (Ասատրյան 1998. 66): Եվ «գալոց հավիտենականի կարոտ»-ը սրտում դեռ սպասում է:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան, Հ. (1998): Արթնացի՛ր, հայ մարդ, Երևան:
2. Ավետիսյան, Ս. «Վտանգված ինքնության ահագանգը «Սասնա ծռերում» կամ էպոսի դասերը», Անդին, 6.06.2013, [www.andin.am](http://www.andin.am).
3. Ավետիսյան, Ս. «Հայոց հոգու Ագռավաքարը», Գրանիշ, 26.02.2015, [www.granish.org](http://www.granish.org).
4. Արմին, Ա. (2007): Հնագույն հեթանոսական Աստվածաշունչ՝ Սասնա ծռեր էպոսը, Լուսինջելես, հ. 1:
5. Իսահակյան, Ավ. (1977): Երկերի ժողովածու, հ. 5, Երևան:
6. Խեչոյան, Լ. (2014): Մհերի դռան գիրքը, Երևան:

7. Մաթևոսյան, Հ. (2005): Սպիտակ թղթի առջև, Երևան:
8. Շահվերդյան, Գ. (2001): Փոքր Մհերից դեպի Քրիստոս, Երևան:
9. Ոսկանյան, Ա. Արդյոք Հայաստանը Եվրոպա է, ՀՀ օրաթերթ, 16.12.1993.
10. Ոսկանյան, Ա. (2004): «Homo trickster, կամ էսթետիզմի ծուղակները», Ռուբիկոն, Երևան:
11. Սասունցի Դավիթ, (1939): Հայկական ժողովրդական էպոս, Երևան:
12. Սասունցի Դավիթ հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961:
13. Вышеславцев, Б. (1995). “Русский национальный характер”, Вопросы философии, № 6.
14. Камю, А. (1990). Бунтующий человек, Москва.

*Արուսյակ ՂԱՐԻԲՅԱԼ*

ՓՈՔՐ ՄՀԵՐ. ԸՆԴՎԶՈ՞Ղ, ԹԵ՞՞ ՕՏԱՐՎԱԾ ՀԵՐՈՍ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայկական էպոսի ամենաառեղծվածային կերպարներից է Փոքր Մհերը: Շատ հետազոտողներ յուրովի են մեկնաբանել Փոքր Մհերի կերպարը՝ նկատելով թաքնված խորհուրդներ, անբացատրելի վարքաձև, նրան վերագրելով երկակի բնույթ: Հողվածում փորձ է արվել բացահայտելու այդ երկվության ակունքները, ներկայացնելու խնդրի առարկային վերաբերող որոշ հետազոտողների աշ-

խատանքներ, նոր մոտեցան լույսի ներքո վերլուծելու Փոքր Մհերի կերպարը: Փոքր Մհերի կյանքը ներթափացված է ողբերգականության: Ամենուր նրան ուղեկցում է օտարվածության և լքվածության զգացումը: Նա իր վրա է կրում ողջ մարդկության հոգսը: Լինելով բանադրված և զգալով իր ճակատագրի ողջ ողբերգականությունը՝ Մհերն ընդվզում է աշխարհի կարգի դեմ, նա ոչ է ասում «չար» աշ-

խարհին: Այդ ընդվզումը սովորական ընդվզում չէր. դա մետաֆիզիկական ընդվզում էր:

*Հանգուցային հասկացություններ. Էպոս, ազգային հոգեկերտվածք, օտարում, լքվածություն, մետաֆիզիկական ընդվզում:*

*Arusyak GHARIBYAN*

## LITTLE MHER : REVOLTING OR ALIENATING HERO?

### ABSTRACT

One of the most enigmatic personages of Armenian epic is a Little Mher (Pokr Mher). His personage was interpreted peculiarly by many researchers highlighting the hidden sacrament and inexplicable behavior attributing him a dualistic essence. The aim of the article is to discover the path of dual nature, introducing the works of some researchers concerning the subject matter and analyzing the personage of Little Mher with a different approach. The life of Pokr Mher is ingrained with tragedies. The feeling of alienation and abandonment is accompanying him everywhere. He is bear-

ing a burden of all the mankind. But considering Mher's personage as a refugee and sulky perhaps is a result of hasty approach. Being excommunicated and feeling the whole tragedy of his destiny, Mher is struggling gainst world manner and saying "NO" to the wicked world. His revolt is not a simple as it was not directed to the personal unfortunate fortune, but it is a revolt against the world manner, his revolt is metaphysical.

*Key concepts:* epic, national mentality, alienation, abandonment, metaphysical revolt.

*Арусяк ГАРИБЯН*

## МГЕР МЛАДШИЙ: БУНТУЮЩИЙ ИЛИ ОТЧУЖДЕННЫЙ ГЕРОЙ?

### РЕЗЮМЕ

В статье представлены и проанализированы основные работы исследователей, в которых обсуждается персонаж героя армянского эпоса Мгера Младшего (Покр Мгер). Он является самым противоречивым и загадочным героем армянского эпоса. Многие исследователи по разному интерпретировали его персонаж и поведение, заметив необъяснимые и скрытые мотивы и двойственность его сущности. Вся его жизнь пропитана трагизмом. Всюду

его преследовали чувство заброшенности и отчуждения. Однако, глубоко чувствуя всю тяжесть своей судьбы, он выражает свое несогласие со своей участью и бунтует против «злого» мира. Его бунт необычный, это метафизический бунт против мироустройства.

*Ключевые понятия:* эпос, национальный менталитет, отчуждение, заброшенность, метафизический бунт.

ԳՈՐԾԱՐԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԴՐՄԵՎՈՐՄԱՆ ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Խորհրդային տնտեսության փլուզումից հետո ՀՀ տարածքում ձևավորվեցին բոլորովին նոր բնույթի առևտրատնտեսական հարաբերություններ: Պլանային տնտեսությունից ու պետական սեփականությունից շատ արագ անցումը մասնավոր սեփականության ու շուկայական հարաբերությունների իր հետ բերեց բազմաթիվ չնախատեսված խնդիրներ, որոնք մինչև օրս լիարժեքորեն լուծված չեն: Բիզնեսի բնագավառում ի հայտ եկան նոր երևույթներ /կոշտ մրցակցությունը, դրամի արժեզրկման ու սնանկացման վտանգը, շուկայում իր տեղն ունենալու և պահպանելու դժվարությունները և այլն/, որոնք փորձ չունեցող գործարար անձանց համար ստեղծեցին բավականին լուրջ դժվարություններ: Մոցիալ-տնտեսական դժվարություններն ու դրանց հետ կապված անհարմարությունները անդրադարձան մարդկանց ապրելակերպի, նրանց ընդհանուր և հոգեկան առողջության վրա:

Համաշխարհային առողջապահական կազմակերպության (ՀԱԿ) կողմից սահմանված հոգեկան առողջության բնութագրերում կարևորվում է ոչ միայն անձի օրգանիզմում հիվանդությունների բացակայությունը, այլև առօրյա կյանքում նրա ակտիվ գործունեությունը, գործունեության մեջ նրա արդյունավետությունը (Գրիմակ 1989): Ըստ Պ.Անդրիանի՝ սթրեսածին պայմաններում երկարատև ապրելակերպը հանգեցնում է անձի

ֆունկցիոնալ հնարավորությունների անկման, որի հետևանքով իջնում է նրա հոգեկան աշխատունակությունը, գործունեության արդյունավետությունը (Анохин 1975): Ըստ հեղինակի՝ նրա վարքագծի դրսևորումներում դիտարկվում են դուրսագրգռվածության, գերհոգնածության, անքնության, զգայաշարժական համակարգությունների ֆունկցիոնալ խանգարումներ, հուզական ոլորտի անկայունության, ուշադրության ցրվածության, հիշողության կորստի, և այլ բնույթի հակազդումներ: Ըստ Ի.Գ.Մավկինա-Պիխի՝ որպես օրինաչափություն, սթրեսային պայմաններում տևական գործունեությունը անվերապահ հանգեցնում է անձի հետվնասվածքային սթրեսային խանգարումների (Posttraumatic stress Disorder) (Малкина-Пых 2006): Անցումային կամ փոխակերպվող հասարակությունն իր սոցիալ-քաղաքական, տնտեսական հարաբերությունների շարունակական փոփոխությունների բնութագրերով մոտ է արտակարգ իրավիճակների բնութագրերին (Акимов 2003, Бодров 1995, Майерс 1997): Մյուս կողմից՝ կան երևույթներ, որոնք տեսանելի չեն բոլորի կողմից, որոնք հետագայում վճռորոշ դեր են խաղում գործարար անձանց ձախողումներում (Виткин 1996, Виткин 1996, Малкина-Пых 2006): Այս տեսանկյունից՝ անցումային հասարակության պայմաններում ՀՀ բիզնես բնա-

գավառի համար առաջնային պլան է մղվում գործարար անձի ընդհանուր առողջության ու նրա գործառնության հնարավորությունների ուսումնասիրման հիմնախնդիրը: Մասնավորապես՝ գործունեության արդյունավետությունն ապահովող հոգեկան այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ուշադրության կամածին կենտրոնացման, զգայաշարժական հնարավորությունների նպատակային համագործակցության, ճգնաժամային իրադրություններում հոգեկան հավասարակշռության պահպանման, ժամանակի կառավարման, ճշգրիտ որոշումներ իրականացնելու, ինչպես նաև անսովոր, արտակարգ իրավիճակներում օրգանիզմի ընդհանուր մոբիլիզացման հատկությունները:

Հետազոտությունն իրականացվել է 2013-2014 թթ. ընթացքում: Հետազոտական աշխատանքներին մասնակցել են Երևանի տարբեր առևտրական ձեռնարկությունների 300 գործարար անձինք (120 կին և 180 տղամարդ): Աշխատանքների կազմակերպումն ընթացել է երկու փուլով. առաջին փուլում մեր կողմից մշակված հարցաթերթիկների միջոցով բացահայտել ենք գործարար անձանց կենսագրական և որոշ հոգեֆիզիոլոգիական փոփոխություններ, որոնք սոցիալ-տնտեսական դժվարությունների դեպքում սովորաբար բնորոշ են մարդկանց (առողջական վիճակի, քնի, ախորժակի, ընդհանուր ակտիվության, ինքնազգացման, էներգետիկ հնարավորությունների բաշխման և ծախսի, ինտիմ հարաբերությունների հաճախականության, քնի ու հանգստի ռեժիմների և այլ տեղաշարժեր): Ուսումնասիրվել են նաև անցումային հասարակությունում գործարար անձանց գործունեության արդյունավետության և նրանց հոգեկան ակտիվության

վրա անդրադարձող գործոնների բազմազանությունը:

Երկրորդ փուլում հետազոտվել են գործարար անձանց հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների դրսևորման նկարագրերը: Որպես հիմնական հետազոտական խումբ՝ ընդհանուր խմբից առանձնացվել են կայուն եկամուտներ ունեցող 90 հաջողակ գործարարներ (45 կին և 45 տղամարդ): Հետազոտությունն իրականացվել է տեպինգ տեստի գրաֆիկական տարբերակի կիրառմամբ (Ра́йгородский 1998), որում բացահայտվում են ուշադրության կենտրոնացման, շարժողական հնարավորությունների մոբիլիզացման ու դրանց ֆունկցիոնալ համագործակցության հնարավորությունները:

Աշխատանքների կազմակերպման այդպիսի դրվածքը նպատակ ուներ նաև բացահայտելու անցումային հասարակությունում «հաջողակ գործարարների» ֆունկցիոնալ հնարավորությունների հոգեֆիզիոլոգիական բնութագրերը, որոնց հիման վրա հնարավորություն է ընձեռվում հետագայում ձևավորելու գործարար անձանց գիտականորեն հիմնավորված ֆունկցիոնալ մոդելը: Անցումային հասարակությունում գործարարների գործունեության ու նրանց անձի վրա անդրադարձող բացասական գործոնների ուսումնասիրման արդյունքներն արտացոլված են թիվ 1 նկարում

Ըստ հետազոտվողների կողմից առանձնացրած բացասական գործոնների կարևորման, որոնց ազդեցությամբ անձի նյարդային համակարգում առաջանում են տևական լարվածության ու յուրահատուկ հոգեվիճակների ֆոն (վախ, տագնապ, սթրես, ներտալիկ երևոյթներ, հենաշարժական համակարգի գործառնության խանգարումներ, և այլն) գործունեության արդյունավետության ցուցանիշների գնահատման առումով ժա-



մանակի մեջ դրանք ունեն խիստ բացասական ուղղվածություն: Ֆիզիոլոգիական մակարդակում դրանք դրսևորվում են անքնության, մղջավանջային երազներով, կծկտուրքնի, մարմնի ջարդարվածության ու հոգնածության, ախորժակի կորստի ձևերով, օրգանիզմի ընդհանուր հյուծվածությամբ:

Ընդհանուր առողջական խնդիրների արտահայտվածության առումով, ըստ գոր-

ծարար անձանց սուբեկտիվ գնահատականի, սիրտանոթային համակարգերում նկատվում են հոգեֆիզիոլոգիական փոփոխությունների համախտանիշներ, որոնք գործարար անձանց ֆունկցիոնալ հնարավորությունների անկման հիմնական բնութագրիչներն են:



Նկ. թիվ 1. Գործարարների վրա ազդող անբարենպաստ գործոնների և առողջության փոփոխությունների արտահայտվածությունը՝ ըստ կարևորման և աղդեցության հերթականության:

Հետազոտվել են նաև գործարար անձանց զգայաշարժական, մոբիլիզացիոն կարողությունների, ուշադրության կենտրոնացման և տեղափոխման ֆունկցիոնալ հնարավորությունների ժամանակային բնութագրերը (աղյուսակ թիվ 1): Ինչպես արդեն նշել ենք հետազոտությունն իրականացվել է Տեպինգ-տեստի օգնությամբ: Հետազոտությունն իրականացվել է 3 փորձով: Ըստ Դ.Ռայգորոդսկու՝ գծանշումների մաքսիմալ տեմպի աճը ֆոնի նկատմամբ 3-5 % և ավելի քանակի դեպքում ստացված արդյունքը հանդիսանում է զգայաշարժական համակարգի բարձր մակարդակի հոգեկան աշխատունակություն, և սթրեսային իրադրությունում անձի ֆունկցիոնալ վիճակի ինքնակառավարման օպտիմալ մակարդակի ցուցանիշ, ֆոնային ցուցանիշների նկատմամբ 5-7 % անկումը, ըստ հեղինակի, համարվում է սթրեսային լարված վիճակի ցուցանիշ: 8-10 % և ավելի անկումը՝ խոսում է սթրեսային արգելակման աստիճանի մասին (Райгородский 1998): Գործարարների՝ փորձից փորձ կատարվող գրաֆիկական շարժումների տեմպի արագացումը ցույց է տալիս նրանց նյարդահոգեկան լարվածության աճը (ինչպես դրական, այնպես էլ բացասական ուղղությամբ) (Райгородский 1998):

Աղյուսակում արտացոլված հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ գործարարների պարզ

շարժողական գործողությունների իրականացման ժամանակ, առաջին «ստուգարքային» սերիայում, հիմնական խմբի միջին տվյալներն ակնառու տարբերվում են ստուգիչ խմբի ցուցանիշներից, չնայած որ հիմնական խմբի կանանց մոտ, համեմատած ստուգիչ խմբի, այդ տարբերությունը նշանակալի չէ: Փորձից փորձ դժվարացող առաջադրանքների իրականացման պայմաններում արժեքային տարբերությունների ցուցանիշներն արտահայտում են գործարարի նյարդահոգեկան լարվածության դինամիկան (Райгородский 1998): Հետագա վերլուծությունները ցույց են տալիս, որ գործարար անձանց նյարդային համակարգության ֆունկցիոնալ հնարավորություններն առավել զարգացած է հիմնական խմբի գործարողամարդկանց մոտ, իսկ կարճաժամկետ գործողության կատարման ցուցանիշներում հավանական տուգանվելու սպառնալիքի ազդեցության պայմաններում առավելությունը կանանց կողմն է, որոնք ցուցաբերում են նյարդահոգեկան աշխատունակության, ինչպես նաև սթրեսային իրավիճակում հոգեկան հավասարակշռության պահպանման ընդունակություն:

Աղ. թիվ 1

Շարժողական ակտիվության ցուցանիշները (տեպ-թեստով)	Չափումների միջին արդյունքների ցուցանիշները					
	Հիմնական խումբ			Ստուգիչ խումբ		
	կանայք	տղ.-իկ	P	կանայք	տղ.-իկ	P
Շարժ. ակտ. տեպ-թեստով	29±0.5	31±0.6	< 0.05	24±2.3	26±1.4	> 0.05
Սխալները	15±2.1	12±0.3	> 0.05	19±3.1	15±4.4	< 0.001

1-ին սերիա	45±4.4	48±0.7	< 0.001	40±1.3	42±2.4	< 0.001
Միավները	32±3.1	28±0.6	< 0.01	34±0.8	31±4.2	< 0.001
2-րդ սերիա	52±1.3	53±0.8	< 0.001	42±2.4	47±2.1	< 0.001
Միավները	36±1.1	33±0.7	< 0.001	40±1.6	38±1.4	< 0.001
3-րդ սերիա	49±4.6	56±0.9	< 0.001	40±3.3	44±4.6	< 0.001
Միավները	37±5.4	25±0.9	< 0.001	37±3.5	40±1.2	< 0.001

Հետազոտվող խմբերի զգայաշարժական հակազդումների, մոբիլիզացիոն կարողությունների ցուցանիշները:

Հիմնական խմբի տղամարդկանց առաջին «ստուգարքային» գծանշանների թիվը կազմում է  $31 \pm 0.5$ , սխալների թիվը՝  $12 \pm 0.3$ , մինչդեռ ստուգիչ խմբի կանանց մոտ, համեմատած հիմնական խմբի, այն չնչին է, որը կազմում է  $24 \pm 2.2$  ( $P > 0.05$ ), իսկ սխալները՝ ամենաշատը  $19 \pm 3.1$  ( $P < 0.001$ ): Ստուգիչ խմբի տղամարդկանց մոտ գրաֆիկական տեպինգ-թեստի միջին ցուցանիշը կազմում է  $26 \pm 1.4$  ( $P > 0.05$ ), սխալների թիվը, համեմատած նույն խմբի կանանց ցուցանիշների հետ, փոքր է մոտավորապես 4-ով, սակայն հիմնական խմբի տղամարդկանց համեմատ բավա-կանին լավ արդյունք է (3-ով ավել): Հիմնական խմբի հետազոտվող կանանց շրջանում գծանշանների թիվը կազմում է  $29 \pm 0.5$  ( $P < 0.05$ ), չնայած, որ տղամարդկանց համեմատ տարբերությունը մեծ չէ, սակայն սխալներն էլ անհամեմատ շատ են ( $15 \pm 2.6$ ):

Գրաֆիկական տեպինգ-տեստի ռաջին ստուգարքային փորձի արդյունքներով խմբերի անդամների միջև գոյություն ունեցող տարբերություններն առանձնապես մեծ չեն, սակայն այստեղ անհամեմատ սխալների թիվն է մեծ: Հիմնական խմբի տղամարդկանց կատարած սխալները ( $28 \pm 0.6$ ), համեմատած նույն խմբի կանանց կատարած սխալների (այդ թվում և ստուգիչ խմբի կողմից թույլ տրված բոլոր սխալների) հետ /համապատասխանաբար կազմում է  $34 \pm 0.8$

( $P < 0.01$ ),  $31 \pm 4.2$  ( $P < 0.001$ ),  $32 \pm 3.1$  ( $P < 0.01$ )/, անհամեմատ փոքր է:

Երկրորդ փորձի ժամանակ, երբ անհրաժեշտ է էլ ավելի արագացնել առաջադրանքի իրականացման տեմպը, ամենաբարձր ցուցանիշները դրսևորվել են հիմնական խմբի հետազոտվողների մոտ, չնայած որ կանանց սխալների արտահայտվածությունը զգալի է: Դա բացատրվում է կանանց հուզականությամբ ու նրանց ներքին լոկուս կոնտրոլի ընդհանրական բնութագրով, քանի որ տղամարդիկ կոնկրետ հանձնարարականների դեպքում կարողանում են անհամեմատ արդյունավետ կենտրոնանալ, քան կանայք: Նկատվում են նաև մտավոր գործողությունների կատարման սխեմատիկ մոդելներ կառուցելու տարբերություններ: Կանայք հակված են գործողությունը տեսնել մասնավոր դետալների մեջ, որը բացատրվում է դրանց կիրառականության ու իրենց համար կոնկրետ պահին հետաքրիք լինելու հանգամանքով: Սակայն այս տարբերությունը կարելի է դիտարկել որպես միտում, քանի որ հավաստիության գնահատման դեպքում  $P > 0.05$ , հիմնական խմբի տղամարդկանց սխալները կազմում են  $36 \pm 1.1$  ( $P < 0.001$ ): Արդյունքների այդպիսի արտահայտվածությունը պետք է մեկնաբանել այն հանգամանքով, որ տղամարդիկ ան-

համեմատ հակված են ռիսկի (հանդգնության), արկածախնդրության:

Գրաֆիկական գործողությունների երրորդ փորձի ժամանակ խմբերին առաջարկվում էր հնարավորության սահմաններում չիջեցնել առաջադրանքի կատարման տեմպը, բայց և բարելավել գործողությունների կատարման որակը: Արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնական խմբում ընդգրկված տղամարդիկ իրենց գործողություններում կատարած սխալների թիվը 32-ից իջեցրել են 25-ի, նույնիսկ նրանց մոտ ավելացել է գրաֆիկական գործողությունների քանակը (53-ից՝ 56):

Երեք փորձի արդյունքների հիմնական տվյալներն ստանալուց հետո հետազոտվող խմբերի ցուցանիշներում հնարավոր դարձավ կատարելու լրացուցիչ վերլուծություն: Մասնավորապես կարևորվել են այնպիսի ցուցանիշներ, որոնք բնութագրում են գործարար անձանց շարժողական գործողություններում ինքնուրույն մոբիլիզացման հնարավորությունները, գործողությունների կատարման ինտենսիվությունը, ինքավերահսկողությունը: Առանձին վերլուծվել են նաև այնպիսի որակներ, ինչպիսիք են զգուշավորությունը, անհաջողության նկատմամբ վախը: Ինչպես արդեն նշվել է, երրորդ փորձի ժամանակ շարժողական գործողություններում պահանջվում էր ինչպես երկրորդ փորձի դեպքում (հնարավորիս զերծ մնալով սխալներից) գործել նույն առավելագույն տեմպով, քանի որ յուրաքանչյուր «սխալ» գործողության համար նրանց ընդհանուր արդյունքից հանվում է 2 միավոր:

Ինքնուրույն մոբիլիզացման ընդունակությունը գնահատվել է գծանշումների երկրորդ սերիայի արդյունքների աճի հիման վրա: Արդյունքների ելակետը համարվում է

առաջին փորձի արդյունքները, որոնց հետևում էր համեմատվում են մնացած արդյունքները

Հետազոտվող խմբերում սեփական գործողությունների վերահսկման ընդունակությունը կոնկրետ գործողություններում գնահատվել է հետազոտության երրորդ փորձի ընթացքում, որտեղ այդ ցուցանիշը գտնվում է բարձր մակարդակում հատկապես հիմնական խմբի մասնակիցների մոտ: Արդյունքների ցածր ցուցանիշ է գրանցվել ստուգիչ խմբում: Ավելի բարդ առաջադրանքում հիմնական խմբի անդամները իջեցրել են կատարված սխալների թիվը՝ 33-ից մինչև 25, այսինքն՝ 24.2 %: Ստուգիչ խմբի կանանց թույլ տված սխալների թիվը իջնելու փոխարեն ավելացել է 17.5 %-ով, տղամարդկանց մոտ՝ 13 %-ով: Հիմնական խմբի կանանց մոտ այն կազմում է 1 % ( $36 \pm 1.1$ ), երկրորդ սերիայում  $37 \pm 5.4$ : Կարծում ենք, որ այստեղ լրացուցիչ մեկնաբանության կարիք կա: Հիմնական խմբի տղամարդիկ, հրահանգ ստանալով «ինչքան հնարավոր է գործել արագ, բայց անսխալ», նրանք իրենց մեջ ուժ գտան ավելացնելու շարժողական գործողությունների տեմպը: Նրանց արդյունքները երկրորդ փորձի ընթացքում հավաստիորեն աճել են  $53 \pm 0.8$ -ից մինչև  $56 \pm 0.9$  ( $P < 0.001$ ): Նույն հրահանգի դեպքում կանանց խմբում դիտարկվում է արդյունքների հետևյալ պատկերը.  $52 \pm 1.3$  - ից մինչև  $49 \pm 4.6$  ( $P < 0.01$ ), ստուգիչ խմբի տղամարդկանց մոտ  $47 \pm 2.1$  -ից իջել է  $44 \pm 4.6$  ( $P < 0.01$ ), կանանց մոտ՝  $42 \pm 2.4$  -ից իջեցրել են  $40 \pm 4.1$ : Չնայած ստուգիչ խմբում նույնպես առկա են որոշ հաջողություններ, սակայն նրանց մոտ գերակշռում է զգուշավորության տակտիկան, քանի որ արդյունքների պահպանման հաշվին նրանց մոտ կատարված սխալներն ավելի են մեծացել:

Տարբերությունների հավաստիության գնահատումն իրականացվել է Ստյուդենտի t չափանիշի կիրառմամբ: t- ցուցանիշիցից ստացված արդյունքը հնարավորություն է տալիս տարբերությունը  $P < 0.01$ ի հավանականությամբ հաստատելու, որ արդյունքները վիճակագրորեն հավաստի են: Ստացված արդյունքներից կարելի է եզրակացնել, որ բացի հիմնական խմբի տղամարդկանցից և կանանց գերակշռող մասից, ստուգիչ խմբի հետազոտության արդյունքները հուսադրող չեն, չնայած որ առանձին տվյալներ մոտիկ են բավարար համարվելուն:

Գործարար անձանց գործունեության կազմակերպման այդպիսի ոճը նրանց հնարավորություն է տալիս կանխավ գերազանցելու իրենց մրցակիցներին, քանզի միշտ չէ, որ կոշտ մրցակցության այդ բնագավառում մրցակիցների կողմից ճշգրիտ հաշվարկ է արվում “հակառակորդի” հակաքայլերի, նրանց կողմից կիրառվող մրցակցական հնարքների, կիրառվող տեխնոլոգիաների վերաբերյալ: Այստեղ գոյություն ունի անձի ակտիվության դրսևորման մի կարևոր առանձնահատկություն, որում ի հայտ են գալիս գործարար անձանց պահեստային հնարավորությունների մոբիլիզացման ու դրանք նպատակային օգտագործելու թաքնված կարողությունները:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հիմնական խմբի հետազոտվողներն իրենց գործողությունների կարգավորման ընդունակությամբ ունեն մեծ առավելություն, իսկ բարդ կոորդինացիոն շարժողական հնարավորություններով ցուցադրում են լավագույն արդյունքներ: Միևնույն ժամանակ, նրանք ոչ միայն բարելավում են իրենց գրաֆիկական գործողությունների որակական ցուցանիշները, այլև ավելի մեծացնում աշխատանքի տեմպը: «Վտանգի» դեպքում, երբ յուրա-

քանյուր կատարված սխալի համար նրանցից պակասեցվում է 2 միավոր, շարժողական գործողությունների առավելագույն տեմպի բարձրացման համար նրանք օգտվում են իրենց պահեստային հնարավորություններից: Այստեղ գործում է նաև այն օրինաչափությունը, որ հաջողակ գործարարներն իրենց գործելաոճով սովորական չեն: Եթե նրանք չդիմեն ռիսկի, չունենան հանդգնության ու ոչ ստանդարտ որոշումներ կայացնելու ընդունակություններ ու շատերի համար անհաղթահարելի իրավիճակներում չկարողանան դրսևորել «արկածախնդրություն», հանդուգն ու համարձակ որոշումներ չիրականացնեն, բիզնեսում նրանք հաջողություններ չեն ունենա: Դա միևնույն ժամանակ նրանց անձի համար բնութագրական նկարագիր է: Նրանք գործունեության մեջ հանդես են գալիս որպես զարմանահրաշներ /чудаки/: Թերևս դա է այդ մարդկանց առավելությունը, որը հոգեբանական տեսանկյունից մեկնաբանվում է որպես անձի խորքային հնարավորությունների օպտիմալ օգտագործման կարողունակություն, որն այդպիսի անձանց համար հանդիսանում է նաև առանձնահատուկ բնութագիր:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀԳՎԱԾ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Акимов, О. (2003). Мальный и средний бизнес. Эволюция понятий, рыночная среда, проблемы развития. Москва: Финансы и статистика.
2. Анохин, П.С. (1975). Очерки физиологии функциональных систем. Москва: Медицина.
3. Бодров, В. (1995). Психологический стресс: развитие учения и современное состояние

- проблемы. Москва: Институт психологии РАН.
4. Виткин, Д. (1996). Женщина и стресс. СПб: Питер.
5. Виткин, Д. (1996). Мужчина и стресс. СПб: Питер.
6. Гримак, Л. П. (1989). Резервы человеческой психики. Москва: Полит. литература.
7. Майерс, Д. (1997). Социальная психология. СПб: Питер.
8. Малкина-Пых, И. (2006). Экстремальные ситуации. Москва: Эксмо.
9. Райгородский, Д. (1998). Практическая психодиагностика. Методики и тесты. Самара: изд. Дом «БАХРАХ».
10. Райгородский, Д. (1998). Практическая психодиагностика. Методики и тесты. Самара: изд. Дом «БАХРАХ».
11. Райгородский, Д. (1998). Практическая психодиагностика. Методики и тесты. Самара: изд. Дом «БАХРАХ».

*Վազգեն ՄԿՐՏՈՒՄՅԱՆ*

ԳՈՐԾԱՐԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀՈԳԵՖԻԶԻՈՒԼՈԳԻԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են անցումային հասարակության, գործարար անձանց՝ արդյունավետության ապահովման ֆունկցիոնալ հնարավորությունների հիմնախնդիրները: Հետազոտական ճանապարհով բացահայտված են գործարար անձանց ֆունկցիոնալ հնարավորությունների դրսևորման հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ինչպես նաև գործու-

նության արդյունավետության ապահովման գործոնների համակարգը:

*Հանգուցային հասկացություններ.* Անցումային հասարակություն, ֆունկցիոնալ հնարավորություն, գործունեության արդյունավետություն հոգեֆիզիոլոգիական բնութագիր:

PSYCHOPHYSIOLOGICAL FEATURES OF EXPRESSION OF FUNCTIONAL ABILITIES OF  
BUSINESSMEN IN TRANSFORMATIONAL SOCIETY

ABSTRACT

The article discusses the problems of transformative society and also functional systems of supporting the businessmen' productivity.

Through the experiments there are revealed both psycho-psychological features of the businessmen' functional opportunities and the sys-

tem of factors supporting the businessmen' activity.

*Key concepts:* transformative society, functional opportunities, effectiveness of the activity, psychophysiological characteristics

*Вазген МКՐՏՄՅԱՆ*

ПСИХОФИЗИОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ФУНКЦИОНАЛЬНЫХ  
ВОЗМОЖНОСТЕЙ БИЗНЕСМЕНОВ В ТРАНСФОРМАЦИОННОМ ОБЩЕСТВЕ

РЕЗЮМЕ

В статье обсуждаются проблемы трансформационного общества, а как же функциональные системы обеспечения результативности бизнесмена. Экспериментальным путем выявлены психофизиологические особенности проявления функциональных возможностей бизнесменов, а так же система факторов

обеспечивающий результативность деятельности.

*Ключевые понятия:* трансформационное общество, функциональная возможность, результативность деятельности, психофизиологическая характеристика.



**ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ  
ԴԵՌԱՀԱՍ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄՈՏ ՄՆՆԴԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ  
ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌ**

Մենդային վարքի շեղումների առաջացման և զարգացման երևույթի ինքնության ուսումնասիրությունն արդիական խնդիր է ժամանակակից հոգեբանության ասպարեզում: Մասնավորապես արդիական է դեռահաս աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, զգայազեն և էքստերնալ շեղումների առաջացման սոցիալ-հոգեբանական պատճառների ուսումնասիրությունը:

Տվյալ երևույթների առաջացման հիմնադրյուր մենք տեսնում ենք դեռահասության փուլում ձևավորվող անձնային առանձնահատկությունները, անձնային և սոցիալական ինքնագնահատականը, համապատասխանաբար նաև անձնային և սոցիալական դիրքորոշումները, անձնային, սոցիալական, կրթական, միջսեռային ասպարեզներում ինքնահաստատվելու անձի բնական ձգտումը և դրա հետևանքով սննդային վարքի շեղումների հնարավոր առաջացումը: Այսպիսով, տվյալ հոդվածում ամփոփված հետազոտության իրականացումը մասնավորապես դեռահաս աղջիկների շրջանում առավել արդիական է: Ի սկզբանե իրականացված հետազոտության վերջնականատակն է եղել մի շարք հոգեբանական մեթոդների կիրառման արդյունքով դուրս բերել սննդային վարքի սահմանափակումային, զգայազեն և էքստերնալ շեղումներ ունեցող դեռահաս աղջիկների մոտ առկա անձնային որակների օրինաչափություն-

ներ՝ նախկինում չուսումնասիրված անձի ինքնադրսևորման ոլորտներում, ինչը հիմք կհանդիսանա քննարկվող սննդային վարքի շեղումների զարգացման կանխման ռազմավարությունների առավել արդյունավետ մշակման և կազմակերպման համար:

Հոդվածում քննարկվող հետազոտությունը ծավալուն աշխատանք է՝ նվիրված սննդային վարքի շեղումների առաջացման հիմքում ընկած սոցիալական դիրքորոշումների ուսումնասիրությանը: Տվյալ հոդվածում ներկայացված են հետազոտության 200 մասնակից դեռահաս աղջիկների շրջանում իրականացված անձնային և սոցիալական ինքնագնահատականը որոշող, բազային համոզմունքներն ու իռացիոնալ դիրքորոշումները բացահայտող թեստավորումների արդյունքները և դրանց վերլուծությունը սննդային վարքի վերոհիշյալ շեղումների առաջացման տեսանկյունից:

Հետազոտությունը ներառել է դիտման, գրույցի և հոգեբանական թեստավորումների մեթոդները: Հոգեբանական թեստավորումների մեթոդի կիրառմանը տրված է առանձնակի նշանակություն:

Ինչպես հայտնի է, հոգեախտորոշիչ թեսթը անձի հոգեբանական հատկանիշների չափման հատուկ գործիք է, որը կազմված է հարցերի և առաջադրանքների համակարգերից և ուղղված է անձի վարքային առանձնահատկությունների բացահայտմանը (Блейхер 1978: 13):

Հոգեախտորոշիչ հետազոտության շրջանակներում հոգեբանական թեստերի անհրաժեշտությունը հիմնավորվում է դրանց օբյեկտիվության, վալիդայնության և արժանահավատության բարձր մակարդակով:

Հոգեախտորոշիչ թեստավորումների մեթոդի կիրառումը տվյալ հետազոտության շրջանակներում թույլ է տվել բացահայտել այն անձնային հատկանիշները և դիրքորոշումները, որոնք նպաստել են հետազոտության մասնակից դեռահաս աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացմանը:

Սննդային վարքի սահմանափակումային, զգայագեն և էքստերնալ շեղումներ ունեցող դեռահաս աղջիկների անձնային և սոցիալական ինքնագնահատականի ուսումնասիրությունը հատկապես կարևոր է, քանի որ այն լույս է սփռում սննդային վարքի շեղումների առաջացման և անձի ինքնագնահատականի կապի երևույթի վրա: Այս նպատակի իրականացման համար ընտրվել է 1954 թ. Ջ.Բաթլերի և Գ.Հայդի կողմից մշակված «ԵՍ իրականի» և «Ես կատարյալի» տարբերությունները բացահայտող թեսթը (ԹԿԿԿ 2005: 286-288): Դրա կիրառման արդյունքները ցույց տվեցին, որ.

1. Սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող դեռահաս աղջիկների շրջանում տվյալ շեղման առկայությունը գուճակցվում է սեփական արտաքին տեսքի նկատմամբ դժգոհության բարձր մակարդակով, ինքնաբավարարվածության զգացման բացակայությամբ և շփման խնդիրների առկայությամբ: Հետևաբար, դեռահաս աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային շեղման առաջացումը սեփական մարմնակազմի նկատմամբ բացասական վերաբերմունքի և սննդային վարքի խիստ սահմանա-

փակման միջոցով այն վերափոխելու ցանկության արդյունք է: Մյուս կողմից կարելի է ենթադրել, որ տվյալ դիսմորֆիկ երևույթները հանգեցնում են անձի ապասոցիալականացմանը, և սննդային վարքի խիստ սահմանափակումային մոդելն այսպիսի անհատների կողմից ընտրվում է որպես կանացի արտաքին տեսքին վերագրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերին համապատասխանելու, հետևաբար նաև սոցիալական խմբում ընդունված լինելու ենթադրյալ արդյունավետ ռազմավարություն:

2. Սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող դեռահաս աղջիկների շրջանում տվյալ շեղումը գուճակցվում է շրջապատի հավանությանն արժանանալու ձգտմամբ, սեփական կարծիքի և կամային որակների նկատմամբ անվստահության: Ենթադրում ենք, որ այսպիսի անհատը, ձգտելով ցանկացած սոցիալական միջավայրում հավանության արժանանալ, ընտրում է անկայուն սննդային վարքաձևի դրսևորումները՝ որպես տարբեր միջավայրերում արդյունավետ սոցիալականացման ռազմավարություն: Այսպիսի անհատները հակված են դրսևորելու այնպիսի սննդային վարք, ինչպիսին որ ընդունված է սոցիալական այն խմբերում, որոնցում անհատն իրականացնում է իր գործունեությունը: Այդպիսի սննդային վարքը կարելի է բնութագրել որպես ծայրահեղական, քանի որ այն ներառում է բացառիկ ասքետիզմից մինչև ակնհայտ շատակերություն ընկած սննդային վարքի մոդելները:
3. Սննդային վարքի զգայագեն շեղում ունեցող դեռահաս աղջիկների մոտ տվյալ շեղման առաջացումը գուճակցվում է ներքին հանգստության զգացման և հա-

վասարակշռվածության պակասի, ինքնավստահության ցածր մակարդակի և շփման խնդիրների առկայությամբ: Հետևաբար, սննդային վարքի զգայազեն շեղումը դեռահաս աղջիկների մոտ առաջանում է որպես արդեն առկա սոցիալականացման խնդիրների արդյունք, որոնց ենթատեքստում անձը, դրսևորելով ակնհայտ շատակերություն, կամ լիովին հրաժարվելով սննդի ընդունումից, ձգտում է ազատվել տվյալ խնդիրների արդյունքով առաջացած ներքին լարվածությունից:

Հետազոտության մասնակիցների բազային համոզմունքների դուրս բերման և սննդային վարքի սահմանափակումային, զգայազեն ու էքստերնալ շեղումների առաջացման հետ դրանց հնարավոր կապի բացահայտման համար հետազոտվողների շրջանում կատարվել է ամերիկացի հոգեբան Ջանոֆֆ-Բուլմանի մշակած բազային համոզմունքների բացահայտման թեսթի կիրառում (Jacobs 1986: 237-250; Janoff-Bulman 2000: 29-44):

Թեսթն իրականացվել է հետազոտության մասնակիցների մոտ շրջապատող աշխարհի, բարու և չարի վերաբերյալ պատկերացումները, մարդկանց նկատմամբ սպասումների առանձնահատկությունները, անձնային իմաստների համակարգը, սեփական Ես-ի արժեքավորության մասին պատկերացումները բացահայտելու համար:

Սննդային վարքի սահմանափակումային, զգայազեն և էքստերնալ շեղումներ ունեցող դեռահաս աղջիկների շրջանում իրականացված բազային համոզմունքների բացահայտման թեսթավորման արդյունքում ստացվեցին հետևյալ տվյալները.

ա) Սննդային վարքի զգայազեն շեղում ունեցող դեռահաս աղջիկների համար բնորոշ

է բազային ապահովության զգացման բացակայություն մասնավորապես աշխարհի և մարդկանց նկատմամբ վստահության, արդարության, սեփական «ԵՄ»-ի արժեքավորության և ինքնակառավարման ասպարեզներում:

Հետևաբար սննդային վարքի զգայազեն շեղման առկայությունը դեռահաս աղջիկների մոտ գուցակցվում է բացասական մտածողությամբ և արտաքին աշխարհի, ինչպես նաև սեփական անձի նկատմամբ բացասական վերաբերմունքով:

բ) Սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող դեռահաս աղջիկների համար բնորոշ է թերահավատությունը սեփական հնարավորությունների նկատմամբ, ընդհանուր հոռետեսական տրամադրվածությունը, բացասական կողմնորոշման սոցիալական սպասման բարձր մակարդակը և ցածր ինքնագնահատականը: Այսպիսի արդյունքները որոշակիորեն բացատրում են սննդային վարքի անկայունությունը տվյալ անձանց մոտ: Վերջինները, ձգտելով համապատասխանել սննդային վարքի ներխմբային ավանդույթներին, կարող են լիովին անտեսել սեփական մարմնի կարիքները և դրսևորել այնպիսի սննդային վարքի տարատեսակ մոդելներ, որոնք բացարձակ չեն համապատասխանում իրենց կարիքներին և ցանկություններին:

գ) Սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող դեռահաս աղջիկների համար բնորոշ է ապահովության զգացման բացակայություն մասնավորապես աշխարհի նկատմամբ վստահության, արդարության, աշխարհի կառավարելիության և սեփական «ԵՄ»-ի արժեքավորության ասպարեզներում: Հետևաբար, սննդային վարքի սահմանափակումային շեղման առկայությունը դեռահաս աղջիկ-

ների մոտ զուգակցվում է ցածր ինքնագնահատականով, սեփական կյանքի կառավարման զգացման բացակայությամբ: Հետևաբար, սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող դեռահաս աղջիկները ձգտում են սննդի ընդունման խիստ սահմանափակման միջոցով կոմպենսացնել սեփական անձի նկատմամբ թերարժեքության զգացումը և ենթագիտակցորեն ձգտում են ստեղծել սեփական կյանքի կառավարման երևակայական զգացում:

Հաջորդիվ, նպատակ ունենալով բացահայտել հետազոտվողների մոտ առկա իռացիոնալ դիրքորոշումների էությունը, հետազոտությունում կիրառվեց Ա. Էլլիսի կողմից մշակված իռացիոնալ դիրքորոշումների բացահայտման թեստավորում (Камеиюкин 2007: 201-205; Крюкова, Куптяк 2007: 200-205):

Տվյալ աշխատանքի շրջանակներում այս թեստավորման իրականացման իմաստն է եղել բացահայտել, թե սննդային վարքի սահմանափակումային, զգայագեն և էքստերնալ շեղումներ ունեցող դեռահաս աղջիկների մոտ ինչպիսի իռացիոնալ դիրքորոշումներն են գերակշռում ու որքանով դրանք կարող են արտահայտվել սննդային վարքի շեղումների առաջացման ասպարեզում:

Թեստավորման արդյունքով մենք ստանք հետևյալ օրինաչափային տվյալները.

ա) Սննդային վարքի զգայագեն շեղում ունեցող 78 դեռահաս աղջիկներից 56-ի մոտ իռացիոնալ դիրքորոշումների առկայությունն բացահայտվեց թեսթի «ողբերգականացում» սանդղակում: Այս տվյալները ցույց են տալիս, որ հարցվողները հակված են իրավիճակների գերագնահատման, կարող են փոքր անհաջողությունից ողբերգություն սարքել և երկար տառապել այդ կապակցությամբ: Այս խմբի մասնակիցներից 22-ի

մոտ ցածր ցուցանիշներ արձանագրվեցին «ֆրուստրացիոն տուլերանտություն» սանդղակում, ինչը վկայում է ցածր սթրեսակայունության մակարդակի մասին:

Այսպիսի դեռահասներին բնորոշ է գերզգայունությունը սոցիալական գնահատականների նկատմամբ: Սննդային վարքի զգայագեն շեղումն այս անհատների մոտ հանդիսանում է ներքին ներդաշնակության բացակայության և անընդհատ հոգեբանական լարվածության արդյունքով ձևավորված կեղծ կոմպենսատոր մեխանիզմ, որն առանձնապես ցայտուն արտահայտվում է սթրեսային պայմաններում: Մի փոքր իրական կամ հնարածին բացասական սոցիալական գնահատականը տվյալ անձանց մոտ սուր տագնապի զգացողություն է արթնացնում, և վերջինները հակված են սննդային խախտանքներում «վիշտը խեղդելու»:

բ) Սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող 20 դեռահաս աղջիկների մոտ թեստավորման արդյունքներն իռացիոնալ դիրքորոշումների առկայություն ցույց տվեցին «սեփական անձի և ուրիշների նկատմամբ պարտավորության զգացում» սանդղակում, ինչը ցույց է տալիս սեփական անձի և ուրիշների նկատմամբ չափազանց բարձր պահանջներ դնելու, սոցիալական բարձր սպասումներ ունենալու հակվածությունը:

Այսպիսի արդյունքների հիման վրա ենթադրում ենք, որ սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող դեռահաս աղջիկների համար հատկանշական է սոցիալական միջավայրի պայմաններին ամբողջությամբ վստահելու, դրանց անմնացորդ ենթարկվելու հակվածությունը: Միևնույն մոդելով վերջիններն առաջնորդվում են նաև սննդային վարքի դրսևորումներում՝ անկայուն սննդային վարք ցուցաբերելով տարբեր սոցիալական խմբերում շփման ընթացքում:

զ) Մանդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող 102 դեռահաս աղջիկներից 88-ի մոտ թեսթավորման արդյունքներն իռացիոնալ դիրքորոշումների առկայություն ցույց տվեցին «սեփական անձի և ուրիշների նկատմամբ պարտավորվածության զգացում» սանդղակում: Այս ցուցանիշները մատնանշում են սեփական անձի և ուրիշների նկատմամբ չափազանց բարձր պահանջներ և սպասումներ ունենալու հակվածությունը: 10 մասնակիցների մոտ իռացիոնալ դիրքորոշումների առկայություն բացահայտվեց «ողբերգականացում» և 4 մաս-

նակիցների մոտ՝ «ինքնագնահատական և մտածողության ռացիոնալություն» սանդղակներում:

Այսպիսով, սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող դեռահաս աղջիկների մոտ առկա են սեփական անձին և վարքաձևերին վերաբերող իռացիոնալ դիրքորոշումներ: Դրանք արտահայտվում են սեփական անձի նկատմամբ չափազանց բարձր պահանջներ դնելու հակումով, ինչը հատկանշական է նաև սեփական մարմնակազմի ձևավորմանն ուղղված վարքային դրսևորումների համար:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Блейхер, В., Бурлачук, Л. (1978). Психологическая диагностика интеллекта личности. – Киев: Выща школа.
2. Каменюкин, А., Ковпак, Д. (2007): Антистресс тренинг. – СПб.: «Питер».
3. Крюкова, Т., Куфтяк, Е. (2007). Опросник способов совладания (адаптация методики WCQ) / Журнал практического психолога. М.: № 3.

4. Янчук, В. (2005). Введение в современную социальную психологию. – Минск: АСАР.
5. Jacobs, B. and Isaacs, S. (1986). Pre-pubertal anorexia nervosa. A retrospective controlled study. Journal of Child Psychology and Psychiatry, 27, pp. 237-250.
6. Janoff-Bulman R., Berger A. (2000). The other side of trauma: Towards a psychology of appreciation // Loss and trauma: General and close relationship perspectives. Philadelphia: Bronner-Routledge, pp, 29—44.

*Հասմիկ ՇԱՀԻՆՅԱՆ*

ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ  
ԴԵՌԱՀԱՍ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄՈՏ ՄՆՆԴԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ  
ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌ

ԱՄՓՈՓՈՒՄ

Չնայած սննդային վարքի շեղումների երևույթը ծավալուն ուսումնասիրությունների առարկա է հոգեբանական գիտությունների տարբեր ճյուղերի համար, այնուամենայնիվ հատուկ ուշադրության կարիք ունի

այնպիսի երևույթների ուսումնասիրությունը, ինչպիսիք են դեռահաս աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման սոցիալ-հոգեբանական հիմնադրույթները: Տվյալ հոդվածում քննարկվում է

դեռահաս աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, զգայագեն և էքստերնալ շեղումների առաջացման վրա անձնային և սոցիալական ինքնագնահատականի, բազային համոզմունքների և իռացիոնալ դիրքորոշումների ազդեցությունը: Հանգամանորեն ուսումնասիրվել են հետազոտության մասնակիցների «Ես իրական» և «Ես կատարյալ» պատկերների օրինաչափային տարբերությունները, ինքնավերաբերմունքի, սեփական Ես-ի կարևորության զգացման մակարդակը և սոցիալական սպասումների որակները: Հոդվածում ներ-

կայացված են իրականացված հետազոտության արդյունքով ստացված այն օրինաչափային տվյալները, որոնք բնորոշ են սննդային վարքի սահմանափակումային, զգայագեն կամ էքստերնալ շեղում ունեցող դեռահաս աղջիկներին:

*Հանգուցային հասկացություններ.* սննդային վարք, դեռահաս աղջիկներ, սոցիալական դիրքորոշումներ, ինքնագնահատական, բազային համոզմունքներ, իռացիոնալ դիրքորոշումներ:

*Hasmik SHAHINYAN*

## PERSONAL AND SOCIAL ATTITUDES AS THE REASON OF NUTRITIONAL BEHAVIOR DEVIATIONS OF TEENAGE GIRLS

### ABSTRACT

Even though the eating behavior disturbances are a theme for multiple researches in different branches of the psychological sciences, however the study of socio-psychological adjustments role within the development of eating behavior disturbances in adolescent girls requires special attention. The impact of personal and social self-esteem, basic beliefs and irrational adjustments within the development of restrictive, emotional and external eating behavior disturbances in adolescent girls is discussed. Particularly, the research focuses on solid study of such consistent

patterns as the "Real-Me" and "Perfect Me" differences, features self-assessment, sense of self-value and social expectations circumstances in adlocent girls with adolescent girls with restrictive, emotional and external eating behavior disturbances. In the article the obtained legitimate data is presented.

*Key concepts:* eating behavior disturbances, adolescent girls, social adjustments, self-assessment, basic beliefs, irrational adjustments.

## ЛИЧНЫЕ И СОЦИАЛЬНЫЕ ПОЗИЦИИ КАК ПРИЧИНА ОТКЛОНЕНИЙ В ПИЩЕВОМ ПОВЕДЕНИИ У ДЕВОЧЕК ПОДРОСТКОВОГО ВОЗРАСТА

### РЕЗЮМЕ

Не смотря на то что нарушения пищевого поведения являются объектом исследований разных отраслей психологических наук, тем не менее особого внимания требует исследование таких явлений, как роль социально-психологических установок в развитии нарушений пищевого поведения у девочек подростков. В данной статье обсуждается воздействие личностной и социальной самооценки, базовых убеждений и иррациональных установок на развитие ограничительного, эмоциогенного и экстернального типов нарушений пищевого поведения у девочек подростков. В частности данное исследо-

вание посвящено основательному изучению закономерностей в разнице “Реального Я” и “Идеального Я”, особенностей самоотношения, чувства ценности собственного “Я” и качеств социальных ожиданий девочек подростков с нарушениями пищевого поведения ограничительного, эмоциогенного и экстернального типов. В статье предявлены полученные в ходе исследования закономерные данные.

*Ключевые понятия:* нарушения пищевого поведения, девочки подростки, социальные установки, самооценка, базовые убеждения, иррациональные установки.



## ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻՆ ԸՆԾԱՅՎԱԾ ՄԱՆՐ ԵՐԿԵՐԸ

Ս. Գրիգոր Լուսավորիչն անկյունադարձային դեր կատարեց հայ ժողովրդի քրիստոնեացման գործում: Նրա անձն ու պատմական վաստակն անգնահատելի են Հայ եկեղեցու պատմության մեջ: 301 թ. Հայաստանում քրիստոնեության պետականացման և դրա հետ կապված իրողությունների պատմության մասին շատ է խոսվել, բայց Լուսավորչի անունով ավանդված գրական ժառանգությունը հիմնականում հայտնի է մասնագետներին:

Հայ մատենագրության մեջ Ս. Գրիգորի անունով մեզ են հասել մի շարք երկեր (տե՛ս Մատենագիրք Հայոց 2003. 7), որոնք էական ազդեցություն են թողել հայ քրիստոնեական մտքի հետագա զարգացման վրա: Թեպետ այդ երկերի հեղինակային պատկանելությունը բանասիրության մեջ կասկածի տակ է առնվել, բայց միայն Լուսավորչի անունը կրելը ցույց է տալիս այդ երկերի վայելած հեղինակությունը: Ս. Գրիգոր Լուսավորչի անունով հայտնի են երկու հիմնական երկեր, ինչպես նաև այլ բնագրեր, որոնք հիմնականում առանձնանում են իրենց ճառախոսական բնույթով:

Ճառը հռետորական արվեստի, այսինքն՝ ճարտասանական կանոններով գրված ընդարձակ մի քարոզ է, որը եկեղեցական մատենագրության հնագույն ու կարևոր գրական տեսակներից մեկն է: Այն հանդիսավոր առիթներով ընթերցվում կամ արտասանվում էր ատյանում, եկեղեցում և այդ պատճառով էլ կոչվում էր ատենախոսություն, բանախոսություն:

Ինչպես ընդհանուր եկեղեցական գրականությունը, այնպես էլ մեր հին մատենագ-

րությունը հարուստ են եկեղեցական հայրերի ճառերով:

Գրերի գյուտից և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից հետո մեր թարգմանիչ վարդապետները մեծ ուշադրություն են դարձնում նաև ճառերի թարգմանության վրա:

Կորյունը վկայում է, որ Մեսրոպ Մաշտոցը, իհարկե, նաև Սահակ Պարթևը, ստանում էին «բազում շնորհագիր մատենա զհարցն եկեղեցույ» և «գհայրապետացն սրբոց ճշմարիտ զիմաստութիւնն» և թարգմանելով տարածում էին Հայաստանում (Մովսես Խորենացի 1913. 242):

Ե դարում մեր թարգմանիչների ձեռքով հայերենի վերածված հույն և ասորի եկեղեցական հայրերի գրվածքների մեջ հիշատակվում են Աթանաս Ալեքսանդրացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Հովհան Ռակեբերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Եփրեմ Ասորու և այլ եկեղեցական հայրերի ճառերի թարգմանությունները:

Ճառ են գրում նաև մեր եկեղեցու հայրապետներն ու վարդապետները, ինչպես Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը, Եզնիկն ու Եղիշեն, Խորենացին ու Դավիթ Անհաղթը, Մանդակունին և ուրիշներ՝ հետագա դարերում (Հովանու Մանդակունույ ճառք, Վենետիկ, 1860):

Սակայն, ըստ մեր վաղ շրջանի պատմիչների և մատենագիրների վկայության, Գրիգոր Լուսավորիչն է հանդիսանում ո՛չ միայն հայ հոգիների լուսավորիչը՝ «զմերոյ լուսաւորութեանցն լուսաւոր վերակացու»-ն, ինչպես նրան բնութագրել է Խորենացին, այլ նաև «մերոյ լուսաւորութեան նախաշաւիղ և նահա-

պետ»-ը, այսինքն հիմնադիրը մեր եկեղեցական մատենագրության (Մ.Խորենացի 1913. 247): Արդարև, մատենագրական հնագույն վկայությամբ՝ Լուսավորչին են ընծայվում, այլ գործերի շարքին, հատկապես կրոնական մեծ արժեք ներկայացնող երկու կարևոր աշխատություններ և մանր երկեր, որոնք իրենց բովանդակությամբ հիմք և աղբյուր են հանդիսացել մեր հետագա դարերի մատենագիրների և աստվածաբանների համար իրենց մատենագրական երկասիրությունների մեջ:

Այդ աշխատություններն են՝

1. **Յաճախապատում ճառք լուսավորք սրբոյ չորն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսավորչի**
2. **Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի**
3. **30 կանոններ, կցված Նիկիայի 325 թ. Ա. Տիեզերածոհովի կանոններին**
4. **«Կանոն Սրբոյն Գրիգորի Պարթևի, դարձեալ յարցումն և պատասխանիք» երկը**
5. **«Մահմանադրութիւն կարգաց, ընկալեալ ի նահատակէն տեսոնէ Գրիգորէ, թարգմանեցաւ ի ձեռն Եզնկայ, հրամանաւ երանելոյն Մահակայ Եպիսկոպոսապետին Հայոց և նորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշումն վանաց» վանական սահմանադրությունը,**
6. **Ժամագրքի «Աստուած մեծ, հզօր և փառաւորեալ» մաղթանքը,**
7. **«Օրհնեալ է մարդասիրութիւն Քոյ, Տէր իմ» աղոթքը,**
8. **«Աղաչեմ զՔեզ» աղոթքը,**
9. **«Յորժամ յորոգայթ անկանի ոք» աղոթքը**
10. **Պատարագամատույցի մի խմբագրություն**

Առաջին երկուսին՝ «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորին» և «Յաճախապատում ճառք»-ին հայագիտության մեջ բազմիցս անդրադարձել են, բայց նրա անունով հայտնի մանր երկերը քիչ են ուսումնասիրվել: Այս-

պես՝ ստորև համառոտ կանոնադրական դրանց:

**1. Կանոն սրբոյն Գրիգորի.**

Հայոց Կանոնագրքի մեջ (Тигранян 1918: 32, նաև տե՛ս Կանոնագիրք հայոց 1964: 243-249), կան 30 կանոններ, որոնք կրում են Գրիգոր Լուսավորչի անունը: Լուսավորչի որդի Արիստակեսը ներկա էր Նիկիայի Ա տիեզերածոհովին. իր հետ բերել էր այդ ժողովի դավանաբանական բանաձևերը (հավատաբար): Լուսավորչի դրանց կցել է ևս 30 կանոններ: Այս հարցին անդրադառնալով՝ Մովսես Կաղանկատվացին գրում է. «Մեր հայրերը ընդունեցին Սուրբ Գրքից՝ Հին ու Նոր Կտակարաններից, Սուրբ Գրիգորի, Նիկիայի երեք հարյուր տասնութի... միջոցով» (Մովսես Կաղանկատուացի 1969. 93):

Հովհաննես Դրասխանակերտցու մոտ ևս կա վկայություն Արիստակեսի կողմից Նիկիական ժողովի կանոնները բերելու, ինչպես նաև Լուսավորչի լրացումների մասին. «Իսկ ապա մերն Արիստակես դարձեալ անտի բերելով ընդ իւր զարժանընկալն քսանական կանոնեալ զգլուխս ի ժողովոյն, ընդ որ յաւէտ իւրախլեալ Սրբոյն Գրիգորի՝ յաւելոյր այլ եւս գլուխս ի նոյն ի զգուշութիւն վիճակելոյ իւրոյ» (Հովհաննես Դրասխանակերտցի 1912. 41): Մասնագետների կարծիքով Դ դարի բանավոր ավանդությունը գրի է առել Մահակ կաթողիկոսը և վերագրել Լուսավորչին (Կանոնագիրք հայոց 1964. 594, տե՛ս նաև Վարդանյան 1999), ինչպես ընդունված է ասել ավանդաբար՝ հետևելով Մ.Օրմանյանին (Օրմանյան 1959. 103): Մինչդեռ այդ կանոնները, անկասկած, գրված էին հունարենով, և Մահակ Պարթևը կարող էր այն թարգմանել և խմբագրել: «Այդպես մտածելու համար... պետք է նկատի առնել այն կարևոր փաստը, որ Գրիգոր Լուսավորչին պատկանող մի սահմանադրության հունարենից թարգմանված լինելու մասին կա

որոշակի վկայություն» (Խաչիկյան 1973. 27, նույնը, 1995. 33): Դրան դեռ կանոնադաշտնանք քիչ հետո, իսկ այստեղ պետք է հիշատակել ևս մի անտոլոգիկ վկայություն հենց Նիկիական հավելվածից, որ լրիվ կերպով վերագրված է «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի՝ յավելումն Նիկիական», կամ փոքր-ինչ այլ կերպ (Տե՛ս Կանոնագիրք հայոց 1964. 594), որտեղ 4-րդ կանոնի տակ կարդում ենք. «... որք երթան ի տունս հեթանոսաց եւ ուտեն եւ խմեն անխտիր, Գ (3) ամ արտաքոյ ապաշխարեսցեն» /էջ 245/: Այս կանոնն իր բովանդակությամբ համապատասխանում է IV դ. պատմամշակութային համատեքստին: Այն ժամանակավրեպ է V դ. համար, որովհետև V և հետագա դարերից ունենք հեթանոսական սովորությունների մնացուկներ, բայց ոչ նման զանգվածային իրողություն, ինչպես ձևակերպված է կանոնի մեջ: Իսկ ինչ վերաբերում է IV դարին, ապա տարօրինակ է թվում կանոնի արգելքը՝ չերթալ հեթանոսների տները: Չե՞ որ հեթանոսների տներ այցելելը պարտադիր պայման է անհատապես քրիստոնեական ուսմունքը նրանց քարոզելու և դարձի բերելու համար: Արգելելու դեպքում հավանաբար չէինք ունենա Ներսես Մեծի օրոք քրիստոնեության վերջնական հաստատման փուլը Հայաստանում: Նշանակում է բնագիրը պետք է կարդալ ավելի ճիշտ, համաձայն մի ընթերցվածքի, որով ասվում է. «...որք երթան ի տունս հեթանոսաց...»: Այս դեպքում հակասությունը վերանում է, և կանոնի մեջ արտացոլված երևույթը լիովին տեղավորվում է IV դ. I կեսում և իրավացիորեն վերագրվում Գրիգոր Պարթևին, ինչպես հակված է ասելու հայագետ Լ. Խաչիկյանը. «Պարզ նշմարվում է, որ (կանոնները – Ն.Պ.) շարադրված են ոչ վաղ անցյալում քրիստոնեություն ընդունած մի միջավայրում, ուր դեռևս մեծ ազդեցություն ունեն կախարհները... ուր...թաղման ժամանակ կա-

տարվում են հեթանոսական ծեսեր («կոծ դնեն...զհերս խզեն... զճակատս հարկանեն»), ուր կան դեռևս մեծ թվով հեթանոսներ, որոնց նկատմամբ քրիստոնյաներից շատերը շարունակում են ունենալ բարիդրացիական բնականոն հարաբերություններ («...որք երթան ի տունս...») (Խաչիկյան 1995. 33): Միայն թե հայագիտության մեծ երախտավորը չի նկատել հակասությունը:

Կանոնները վերաբերում են վաղ միջնադարյան Հայաստանի եկեղեցական, հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներին և դրսևորում են դարաշրջանի իրավական գիտակցության տարբեր կողմերն ու շերտերը:

Կանոնք Ս. Գրիգորի Պարթևի կանոնները կարծես շարունակում են «Սահմանադրութիւն կարգացը» և ուսումնասիրված չեն հայագետների կողմից<sup>1</sup>:

Վերջիններս հիմնականում քննության նյութ են դարձրել Լուսավորչի անվանակիր 30 կանոնները: Հաշվի առնելով «Սահմանադրութիւն կարգաց» երկի տեղեկությունը հույների և հռոմեացիների վերաբերյալ՝ կարելի է եզրակացնել, որ մեր կանոնները գրվել են V դարի առաջին կեսին՝ 431 թ. հետո, քանի որ այստեղ կիրառված է «Աստվածածին» եզրը, որը ուժի մեջ մտավ 431 թ. Եփեսոսի տիեզերածողովից հետո: Կանոնները, փաստորեն, ներկայացնում են Հայ եկեղեցու բարեպաշտական հնագույն սովորություններից մեկի՝ մատաղի նկարագրությունը: Դրա կարևորության մասին է վկայում այն փաստը, որ մատաղի վերաբերյալ Աշոտ իշխանի հարցումին

<sup>1</sup> Հայոց կանոնագիրք բովանդակող Մաշտոցի անվ. Մատենադարանի թիվ 659 ձեռագրում այս բնագիրը (Կանոնագիրք հայոց ԽԱ-ԽԴ հոդվածներ) զետեղված է «Կանոն Լուսավորչին» անվան տակ: Ա. Մխիթարյանցը, ինչպես երևում է, հետևելով ձեռագրային ծանուցմանը, կանոնական հոդվածների այս ենթախումբը ևս բերում է «Կանոնք Ս. Գրիգորի Պարթևի» անվան ներքո. տե՛ս Մխիթարեանց 1874. 31-32:

ի պատասխան՝ Սահակ Մռուտ վարդապետը (IX դ.) վկայակոչում է Գրիգոր Լուսավորչի սահմանումը. «Մուրբն Գրիգոր սահմանեաց զիրաւունս եկեղեցոյ եւ զհաս քահանայից, յորժամ գտունս Հայոց լուսաւորեաց, նոյնպէս եւ վասն մատաղի, քանզի զպատարագ գոհիցն, զոր յաղեաց կոռցն մատուցանէին, հրամայեաց զայն Աստուծոյ մատուցանել, եւ զի սրբոյ Լուսաւորչին է հրամանս, մեծ ամբարշտութիւն է թողուլ գտանն առանց մատաղի, զի որպէս ասէ սուրբ Սահակ, քանզի Հայք ոչ ողջակէզս գոհից ըստ հին արինացն մատուցանեն ... այլ յանուն Աստուծոյ Հայք զենուն զարջառս եւ զոչխարս, եւ վայելեն աղքատաւք, զԱստուած փառաւորեն եւ գտանն մեծարեն ըստ հրամանի սրբոյն Գրիգորի...» (տե՛ս Վարդան Այգեկցի 1998. 288-289):

Լուսավորչին վերագրված 30 կանոնների մեջ չկա ազգային վերաբերող այս կանոնը: Խոսքը վերաբերում է միայն «Սահմանադրութիւն կարգաց»-ի շարունակություն հանդիսացող այս կանոնին (Պարթարյանց 1873. 444, տե՛ս նաև Կանոնագիրք հայոց 1964. 399-402):

## **2. Ս. Գրիգորի Պարթևի դարձեալ հարցումն եւ պատասխանիք**

Ի թիվս բազմաթիվ հեղինակների այլևայլ երկերի՝ Եզնիկ Կողբացու օգտագործած աղբյուրներից մեկն էլ եղել է «Հարցումն և պատասխանիք Ս. Գրիգորի Պարթևի» խորագրով պահպանված փոքրածավալ, բայց շատ արժեքավոր գրվածքը՝ ձեռագրերում վերագրված Ս. Գրիգոր Լուսավորչին (Խաչատրյան, Քյոսեյան 2003. 45): Եզնիկի այդ աղբյուրի մասին նախ գրել է մեծանուն միջնադարագետ Ն.Ադոնցը (1920-ական թթ.) (տե՛ս Ադոնց 2006. 169-184), իսկ ավելի հիմնավոր՝ անվանի հայագետ Լ.Խաչիկյանը: Այժմ արդեն որոշակի է, որ Եզնիկն իր աշխատության առաջին գրքի ԺԵ-ԻԷ հատվածները (ըստ վենետիկյան 1826

թ. հրատարակության) շարադրելիս օգտվել է ժողովրդական կենդանի միջավայրից առած նյութերից՝ իբրև աղբյուրի դիմելով Գրիգորի Պարթևի հիշյալ աշխատությանը: Խաչիկյանի սկզբնական ենթադրությամբ՝ «Հարցումի» հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է (Խաչիկյան 1995. 57-71, 85-91), սակայն, այդ հողվածից մոտ տասը տարի անց (1973 թ.) նա հնարավոր է համարել, որ այս երկը միայն խմբագրվել և հայացվել է Մաշտոցի կողմից, ուստի իրական հեղինակը եղել է Ս. Գրիգորը (Խաչիկյան 1995. 35): Ավելի լավ է մեջբերել Լ.Խաչիկյանին. «Գրիգորի Պարթևին վերագրված «Հարցումը» որպես հայ մատենագրության երախայրիք» մեր հողվածում, ելնելով անվիճելի այն իրողությունից, որ Եզնիկն իր ձեռքի տակ է ունեցել այդ բնագիրը, այն համարել էինք հայ ինքնուրույն մատենագրության ցարդ հայտնի հուշարձաններից մեկը՝ կարծելով, որ Մեսրոպ Մաշտոցն է նրա հավանական հեղինակը... Գրերի գյուտից առաջ օտարալեզու հայ գրականության առկայության մասին գոյություն ունեցող նյութերի համախմբումից հետո այլևս չենք տեսնում որևէ պատճառ՝ կասկածի տակ առնելու քննարկվող գրվածքի խորագրի ուղղակի վկայությունը այն Գրիգորի Պարթևի կողմից շարադրված լինելու մասին (Խաչիկյան 1995. 35): Նման եզրահանգման համար Լ.Խաչիկյանն ունեցել է ոչ միայն տրամաբանական, այլև բնագրագիտական հիմք, որը նա ներկայացնում է «Հարցումն տեառն Ներսեսի Հայոց կաթողիկոսի առ Եպիփան Միայնակեաց» գրվածքի հետ համեմատելով: Պարզվում է, որ IV դ. երկրորդ կեսին հայ ժողովրդական հավատալիքներում ու պատկերացումներում պահպանված ոգիների մասին Ներսես Մեծի հարցին ի պատասխան Եպիփանը, ով Հայաստանի հույն հոգևորականներից էր, մեջ է բերում Գրիգոր

Պարթևի «Հարցմունքի» 14-րդ կետը, որ նույն հարցին է վերաբերում.

Գրիգոր Պարթև Եպիփան Միայնակեաց

Նախ զայն տեսցուք, թե գոն այլ Նախ զայս պարտ է գիտել, զի ոչ արարածք բանաւորք քան զհրեշտակս այլ բավական արարածք գոն եւ զմարդիկ եւ զդէս... քան զհրեշտակս եւ զմարդիկ...

Վերջում Լ.Խաչիկյանն իրավամբ նշում է, որ նկատվող բնագրական տարբերությունները հավանաբար առաջացել են այն պատճառով, որ «գույգ բնագրերը տարբեր անձնավորությունների կողմից հունարենից թարգմանվել են հայերեն» իրարից անկախ (Խաչիկյան 1995. 35):

Այս բավականին հետաքրքիր երկը Գրիգոր Լուսավորչի և հրեշտակի երկխոսություն է, որը վերաբերում է անդրշիրիմյան աշխարհին: Այն հրեշտակաբանության մասին ամենավաղ երկերից մեկն է: Պետք է նշել, որ պատմիչներից և ոչ մեկը չի հիշատակել այն: Երկի մասին իրենց աշխատություններում գրել են Աբել արքեպիսկոպոս Պարթարյանցը (Պարթարյանց 1873. 408-409), Նիկողայոս Մառը (Մառ 1898. 301-302), Բարսեղ Սարգիսյանը (Սարգիսեան 1898. 468) և Լևոն Տեր-Պետրոսյանը (Տեր-Պետրոսյան 1993. 29): Ուշագրավ են Մառի և Սարգիսյանի կարծիքները: Ինչպես նկատում է Բ. Սարգիսյանը, հրեշտակի հետ այս հարցուպատասխանն իր վրա որոշակիորեն կրում է Եզրի Գ գրքի ազդեցությունը: «Հարցաքննութիւն Եզրի մարգարէին ընդ հրեշտակն Տեառն վասն հոգւոց մարդկան» խորագրով այս երկը համեմատելով Ս. Գրիգորի խնդրո առարկա հարցուպատասխանի հետ՝ նա եզրակացնում է. «Ահա այս համեմատութենէն յայտնապէս կը տեսնուին, բաց ի գաղափարական նոյնութենէն, որ կատարեալ է, նոյն իսկ այնպիսի բառական նմանութիւններ, որոնք դիպուածով եղած չեն,

այլ մէկուն՝ միւսին հետեւողութեամբ միայն՝ (Սարգիսեան 1898. 469): Գիտնականը, ցավոք, ենթադրում է, թե Ս. Գրիգորի հարցուպատասխանը ստեղծվել է ԺԲ դարից ոչ շուտ (Սարգիսեան 1898. 472):

Մառը ևս անդրադարձել է Գրիգոր Լուսավորչի անունով հայտնի հարցուպատասխանին: Ըստ նրա (անգիտանալով Եզրի մասին)՝ այդ երկի համար կարևոր սկզբնաբյուրներ են եղել Մարիամ Աստվածածնի և Սուրբ Մակարի Տեսիլքները (Մառ 1898. 303): Արդ, հենվելով Մառի տված այն տեղեկության վրա, ըստ որի՝ Գրիգորի հարցաքննությունը հայտնի է նաև վրացերեն թարգմանությամբ, Սարգիսյանն ենթադրաբար եզրակացնում է, թե Գրիգոր Լուսավորչին «ընծայուած հարցաքննութեան սկզբնագիրն ոչ հայերէն լեզուով գրուած էր եւ ոչ այլ Գրիգորի անունը կը կրէր իւր վերայ, այլ ասորի կամ պարսիկ լեզուով, եւ Եզրի կամ բոլորովին այլ մակագրութեամբ: Այդ սկզբնագիրն շատ կը տարբերէր՝ մեր ձեռքը հասած Եզրի եւ Գրիգորի հարցաքննութիւններէն եւ համեմատութեամբ աւելի ազատ էր քրիստոնէական ներածութիւններէն» (Սարգիսեան 1898. 473):

Չվիճարկելով այս տեսակետը՝ մենք հակված ենք ենթադրելու, որ այդ երկը շարադրված է հայ իրականության մեջ, քանզի նրանում առկա սուրբգրային քաղվածքները համապատասխանում են Աստվածաշնչի հայերեն կանոնական թարգմանությանը: Մենք ուսումնասիրեցինք այն Մաշտոցի անվան Մատենադարանի N 11, 39, 2546, 2650, 2890, 3050, 3081, 3246, 4525 ձեռագրերով, բայց արդյունքը կներկայացնենք այլ տեղ՝ թեմայից չջեղվելու համար: Կարևորն այն է, որ արդի գիտական մակարդակը թույլ է տալիս եզրակացնելու, որ երկը գրվել է հունարեն՝ Գրիգոր Լուսավորչի կողմից, թարգմանվել և խմբագրվել է հայերեն՝ Մաշտոցի կողմից:

### **3. Սահմանադրութիւն կարգաց.**

Այս երկը բաղկացած է 2 մասից: Առաջինը վերագրված է Գրիգոր Լուսավորչին, երկրորդը համարվում է Սահակ կաթողիկոսի հավելումը: Հայոց կանոնագրքում ԼԶ-Խ հոդվածներով ներկայացվող այս միավորը Ա. Մխիթարյանը բերում է Գրիգոր Լուսավորչի անունով (Տե՛ս Մխիթարեանց 1874. 25-32): Ի մտի ունենալով այն հանգամանքը, որ «Սահմանադրութիւն կարգացը» ունի երկու խորագիր՝ մեկը սկզբում, մյուսը՝ վերջում՝ իբրև հիշատակարան (ուր համառոտիվ խոսվում է թարգմանության մասին)՝ Վ.Հակոբյանը ենթադրում է, որ «միայն այս ենթախումբը՝ ԼԶ-ԽԳ հոդվածները, սակայն ոչ այս ծավալով, այլ համառոտ, եղել է հունարեն, Գրիգոր Լուսավորչի անվամբ, որը հետագայում՝ V դարում, թարգմանվել է հայերենի: Մեզ հասած «Սահմանադրութիւն կարգացի» վերջում պահպանված հիշատակարանի խորագրի ներքո կարդում ենք. «Սահմանադրութիւն կարգաց ընկալեալ ի նահատակէն տեառնէ Գրիգորէ թարգմանեցաւ ի ձեռն Եզնկայ հրամանաւ երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին հայոց և նորին աթոռակեաց թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն վանաց»: Ս. Գրիգորի հունարեն գրած սահմանադրությունը Սահակ Պարթևի կարգադրությամբ թարգմանել է Եզնիկ Կողբացին, որից հետո Սահակ կաթողիկոսը լրացրել, ընդարձակել և ճոխացրել է դրանք և որպէս կանոնական շրջաբերական ուղարկել տեղերը»<sup>2</sup>:

<sup>2</sup> Կանոնագիրք հայոց, հտ. Ա, էջ 626: Ի դեպ, հայագիտության մեջ Սահակ Պարթևի կանոնների վավերականությունը համարվել է կասկածելի. տե՛ս **Յ.Գաթրճեան**, Սրբազան Պատարագամատոյցը հայոց, աշխատակցութեամբ **Յ. Վրդ. Տաշեանի**, Վիեննա, 1897, էջ 141, ծնթ. 103, էջ 231, ծնթ. 38, էջ 323, 733, նաև՝ **Ն. Ակիներեան**, Ս. Սահակին վերագրուած կանոնները, «Հանդէս մատուցեալ», 1946, էջ 48-70, 1947, էջ 1-25:

Պետք է նշել, որ երկի մասին չկա ոչ մի պատմական ակնարկ: Առաջին հատվածը իրենից ներկայացնում է եկեղեցու՝ որպէս քարեղեն շինության, գաղափարի մերժումը. «Քանզի ոմանք կարծեցին տգիտութեամբ այլ գոմն Եկեղեցի ասել Կոչարան, եւ այլ գոմն Վանս. եւ տխմար բանիւք իւրեանց կամեցան կոչիւ, հերձուածս մուծանել ի միաբանութիւն հաւատոյ...» (Պարթարյանց 1873. 442): Վերը նշվածից արդէն պարզ երևում է այս տեքստի հիմնական բովանդակությունը: Խոսքը վերաբերում է եկեղեցու նվիրապետական կառուցվածքին. «Արդ զինչ իմանայցեմք ասելն զՊետրոս Վեմ. միթէ որպէս զմի ոք ի քարա՞նց. քաւ լիցի. այլ մարդ բանաւոր եւ զլուխ առաքելական դասուն...» (Պարթարյանց 1873. 442): Հեղինակը տալիս է եկեղեցու «ստորաբաժանումները»՝ ըստ Պողոս առաքյալի խոսքի ընդդէմ աղանդավորների, որոնք ժխտել են եկեղեցու նվիրապետական կառույցը: Այն, որ հերձվածողների տակ հեղինակը չի հասկացել քաղկեդոնականներին, երևում է հույներին և հռոմեացիներին որպէս քրիստոնյա օրինակ բերելուց: Դա կարող է վկայել, որ այս հատվածը գրվել է շատ վաղ, այսինքն՝ V դարի առաջին կեսին: Խոսքը վերաբերում է մի աղանդավորական շարժման, որը ժխտել է եկեղեցու նվիրապետական կառույցը և «եկեղեցի» ասելով հասկացել լոկ շինությունը: V դարի սկզբին Հայաստանում լայն տարածում էր գտել մծղնեական շարժումը՝ ուղղված եկեղեցու դեմ: 444 թ. այդ կապակցությամբ գումարվեց Շահապիվանի ժողովը, որը դատապարտեց նրանց չարափառ ուսմունքը (Տեր-Մինասյան 1968. 64-67): Քանի որ Շահապիվանի ժողովից հետո անիմաստ կլինէր նման երկ գրելը, ապա ենթադրում ենք, որ այն գրվել է Սահակ Պարթևի ժամանակ: Դա է հաստատում նաև երկի մաս կազմող՝ Գրիգոր Լուսավորչին վերագրված կանոնը, ուր օգտագոր-

ծված է Աստվածածին պատվանունը, որը գործածության մեջ մտավ 431 թ. Եփեսոսի ժողովից հետո: Այսպիսով, այս երկը և Կանոնքը գրվել են 431-444 թթ. ընկած ժամանակահատվածում, իսկ եթե կապենք Սահակի անվան հետ, ապա գրվել է 431-439 թվականի միջև:

**4. Աստուած մեծ, հզօր և փառաւորեալ.**

Ժամագրքի այս մաղթանքի վերաբերյալ Մաղաքիա արք. Օրմանյանը նշել է «Իսկ Աստուած մեծ» քարոզի վրա կարդացած մակագիրը. «Ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ առաքեալ, աւելի լաւ կը լինէր՝ Վասն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ասացեալ կարդալ, այնչափ հեռու կը գտնենք Լուսաւորչի ժամանակին մէջ... քարոզի մը յօրինուածը, զի այս ձեւի սկզբնաւորութիւն ալ հետագա դարերու կը պատկանի: Լուսաւորչին կարողութենէն հեռու չենք գտներ գրական արդիւնքները, վասն զի կ'ընդունենք թէ լաւ յունական զարգացում ստացած Փիլիպիանոսի ձեռքին տակ, բայց ոչ երբէք հայ գրութեամբ զարգացած մընք որ տակաւին գոյութիւն չունէր» (Օրմանյան 1959. 8): Այս երկն ունի ծիսական նշանակություն: «Աստուած մեծ, հզօր և փառաւորեալ» մաղթանքը, ըստ ավանդության, երգվել է Սուրբ Հովհաննէսի և Սուրբ Գայանէանց աճյունները վկայարանների մեջ ամփոփելիս:

**5. Աղաչեմ զՔեզ.**

Այս աղոթքն ունի բարոյաբանական ուղղվածություն: Ինչպես երևում է, այն վաղ շրջանի ծնունդ է, քանի որ այստեղ չկան ընդհանուր մաղթանքներ «Աստուածածնի» անու-

նով: Ելնելով բոլոր նշաններից՝ պետք է ենթադրել, որ այս աղոթքը գրվել է բավականին վաղ, քանզի նրանում բացակայում են այն բոլոր եզրերն ու մաղթանքները («Աստուածածին», «Աստուածածնի բարեխօսութեամբ» և այլն), որոնք կանոնացվեցին Եփեսոսի Գտիեզերածողովի կողմից:

**6. Յորժամ յորոզայթ անկանի որ.**

Այս աղոթքը, նախորդի պես ավանդության համաձայն, կրում է Գրիգոր Լուսավորչի անունը և, հիրավի, ստեղծվել է վաղ շրջանում, որովհետև այստեղ «բարեխօսութեամբ սրբոց»-ի մեջ բացակայում է «Աստվածածնի» հավելումը: Աղոթքը բաղկացած է 4 հատվածներից՝ հիմնականում արտահայտելով մարդ-Աստված անդրանցական կապը:

**7. Պատարագամատույցի մի խմբագրություն**

Լուսավորչին ընծայվող այս «Պատարագամատույցը» (Աճառյան 1968. 349) իրականում պատկանում է Ս. Բարսեղ Կեսարացուն: Այն հունարենից թարգմանվել է հավանաբար V դարում:

Վերջում փաստենք, որ Գրիգոր Լուսավորիչը հանդիսանում է մեր եկեղեցական մատենագրության առաջին հեղինակը, իսկ նրա մատենագրական ժառանգությունը իր կարևորությամբ ուրույն ու արժեքավոր տեղ է գրավում հայ մշակույթի գանձարանում:

ՄԵՋԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադոնց, Ն. (2006) Երկեր, հտ. Բ, Երևանի համալսարանի հրատ., Երևան, էջ 680:

2. Ակինեան, Ն. (1946) Ս. Սահակին վերագրուած կանոնները, «Հանդէս ամսօրեայ», էջ 48-70, 1947, էջ 1-25:  
3. Աճառյան, Հ. (1968) Հայոց գրերը, Երևան, Հայաստան, էջ 399:



4. Գաթրճեան, Յ. (1897) Սրբազան Պատարագամատոյցք հայոց, աշխատակցութեամբ Յ. վրդ. Տաշեանի, Վիեննա, էջ 746:
5. Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության (2003) էջմիածին, աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի և Հ. Քյոսեյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, էջ 808:
6. Խաչիկյան, Լ. (1973) Օտարալեզու հայ գրականությունը IV դարում, (Ներսես Պարթևի և Եպիփանի նորահայտ «Հարցման» առիթով), Պատմա-բանասիրական հանդես, N 3, էջ 27-51:
7. Խաչիկյան, Լ. (1995): «Աշխատություններ», հտ. Ա, Երևան, էջ 72-84:
8. «Կանոնագիրք հայոց», աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հտ. Ա, , (1964): Երևան 742 էջ:
9. Մառ, Ն. ( 1892): Ամառնային ուղեւորութիւն դէպ ի Հայս, «Հանդէս ամսօրեայ», էջ 301-302:
10. Մատենագիրք Հայոց, հտ. Ա, (ե դար), Անթիլիաս, 2003, 1288 էջ:
11. Մխիթարեանց, Ա. (1874): Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք ի պէտս ժառանգաւորաց, Վաղարշապատ, էջ 159:
12. Մովսէս Խորենացի (1913): Պատմություն հայոց, Տփղիս, էջ 396:
13. Մովսէս Կաղանկատուացի (1969): Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ., թարգմ. և ծանոթ. Վարազ Առաքելյանի, Երևան, էջ 321:
14. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, Պատմութիւն Հայոց (1912): Թիֆլիս, էջ 427:
15. Պարթարյանց, Ա. (1873): Մահմանադրութիւն կարգաց..., «Արարատ», էջ 408-442:
16. Սարգիսեան, Բ. (1898): Ուսումնասիրութիւնք Հին Կտակարանի անվաւեր գրոց վրայ, Վենետիկ, էջ 486:
17. Վարդան Այգեկցի (1998): Գիրք Հաստատութեան եւ Արմատ Հաւատոյ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., էջ 448:
18. Վարդանյան, Ռ. (1999): Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ) Երևան, էջ 647:
19. Տեառն Յովաննու Մանդակունոյ Հայոց հայրապետի ճառք (1860): Բ տպագրություն, Վենետիկ, էջ 219:
20. Տեր-Մինասյան, Ե. (1968): Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, էջ 239:
21. Տեր-Պետրոսյան, Լ (1993): Դասեր հայ եկեղեցական մատենագրությունից (Ե դար), Սոչի, էջ 80:
22. Օրմանյան, Մ.( 1959), Ազգապատում, հտ. Ա., Պեյրութ, էջ 103:
23. Тигранян, С. (1918), Древнеармянская книга канонов, СПб, 182 с.

## ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՆ ԸՆԾԱՅՎԱԾ ՄԱՆՐ ԵՐԿԵՐԸ

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում անդրադարձել ենք հայ մատենագրության մեջ Ս. Գրիգոր Լուսավորչի անունով մեզ հասած երկերին, որոնք էական ազդեցություն են թողել հայ քրիստոնեական մտքի հետագա զարգացման վրա: Թեպետ այս երկերի հեղինակային պատկանելությունը բանասիրության մեջ կասկածի տակ է առնվել, բայց միայն Լուսավորչի անունը կրելը ցույց է տալիս այդ երկերի վայելած հեղինակությունը: Ս. Գրիգոր Լուսավորչի անունով հայտնի են երկու հիմնական երկեր՝ «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» և «Յաճախապատում ճառք»ը, ինչպես նաև այլ բնագրեր:

«Յաճախապատում ճառք» և «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» աշխատություն-

ներին հայագիտության մեջ բազմիցս անդրադարձել են, բայց նրա անունով հայտնի մանր երկերը քիչ են ուսումնասիրվել: Այս հոդվածում վեր են հանվել այդ երկերի բովանդակային առանձնահատկությունները և շեշտվել բացառիկ կարևորությունը հայ մշակույթի մեջ:

*Հանգուցային հասկացություններ.* հայ մատենագրություն, Ս. Գրիգոր Լուսավորչի, «Յաճախապատում ճառք», «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի», հեղինակային պատկանելություն, ժողովրդական հավատալիքներ, դավանաբանական բանաձևեր, բովանդակային առանձնահատկություններ, բացառիկ կարևորություն:

Nelly PETROSYAN

## THE SMALL WORKS OFFERED TO ST. GREGORY THE ILLUMINATOR

## ABSTRACT

The article referred to the literature St. Gregory the Illuminator named extant works, which affected the further development of Christian thought. Though the author has taken ownership of Philology in doubt, but the Illuminator works that bear the name indicates enjoyed the reputation. St. Gregory the Illuminator's two main works are known: "Catechism of Saint Gregory" and "Faitful Speech" in other texts.

"Faitful Speech" ("Hachakhatum chark") and "Catechism of Saint Gregory" armenology has

repeatedly referred to the works, but her name is little known small works are studied. This article has been withdrawn and stressed that features exclusive content works the importance of culture.

*Key concepts:* Armenian literature, S. Gregory the Illuminator, "Faitful Speech", "Catechism of Saint Gregory." the author's identity, folk beliefs, dogmatic formulas, content features, exceptional importance.

## НЕБОЛЬШИЕ ПРОИЗВЕДЕНИЯ, ПРИПИСЫВАЕМЫЕ ГРИГОРИЮ ПРОСВЕТИТЕЛЮ

## РЕЗЮМЕ

В статье рассмотрены сочинения армянского книгописания, дошедшие до нас в авторстве Св. Григория Просветителя, оказавшие существенное влияние на последующее развитие армянской христианской мысли. Хотя авторская принадлежность этих сочинений в филологии поставлена под сомнение, но только тот факт, что они дошли до нас под именем Просветителя, демонстрирует авторитет, которым они пользуются. В авторстве Св. Григория Просветителя известны два основных сочинения – «Догматика Святого Григория» и «Многovesцательные речи», а также другие рукописи.

Работы «Многovesцательные речи» и «Догматика Святого Григория» были многократно изучены в арменоведении, но известные под его авторством небольшие произведения иссле-

дованы мало. В данной статье выявлены содержательные особенности этих сочинений и подчеркнута их исключительная важность в армянской культуре.

*Ключевые понятия:* армянское книгописание, Св. Григорий Просветитель, «Многovesцательные речи», «Догматика Святого Григория», авторская принадлежность, народные верования, догматические формулы, содержательные особенности, исключительная важность.

## ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են ընտանիքի հետ հոգեբանական աշխատանքի որոշակի ուղղություններ, որոնք տարբերվում են ինչպես իրենց մեթոդաբանությամբ, այնպես էլ աշխատանքի նպատակային ուղղվածությամբ: Հետևաբար, դրանցում տարբեր է նաև ընտանիքի բնույթի և նշանակության հասկացումը: Նման պայմաններում առաջ է գալիս ընտանիքի հոգեբանական հետազոտության և ընտանիքի հետ տարվող հոգեբանական աշխատանքի առանձին ուղղությունների համակարգման անհրաժեշտություն:

Առավել լայն իմաստով ընտանիքի հետ հոգեբանական աշխատանքի խնդիրներն ուսումնասիրվում են «Ընտանիքի հոգեբանության» շրջանակներում: Ըստ սահմանման՝ «Ընտանիքի հոգեբանությունը» հոգեբանության միջգիտակարգային բնագավառ է, որը ներառում է սոցիոլոգիական, տնտեսագիտական, փիլիսոփայական, պատմագիտական, իրավաբանական, ժողովրդագրական, ազգաբանական և այլ բնագավառների հետազոտություններ: Ընտանեկան հոգեբանության տվյալները կազմում են այն հիմքը, որի վրա կառուցվում և գործնականում կիրառվում են ընտանիքի օգնության սոցիալական, հոգեբանական և հոգեթերապիական տարբեր ծրագրեր: Ընտանիքի և ամուսնության հետազոտություններն առաջին հերթին կոչված են բացահայտելու այն պայմաններն ու գործոնները, որոնք ազդում են ընտանիքի բարեկեցության և դրա անդամների հոգեկան առողջության վրա (Коваль 2007: 11):

Ինչպես տեսնում ենք, բերված սահմանման մեջ որոշակիորեն ուրվագծվում են ընտանիքի հոգեբանության երկու հիմնական՝ հետազոտական և կիրառական կողմերը: Ընտանիքի հոգեբանության կիրառական կողմը ներկայանում է երկու ձևով՝ որպես ընտանիքի հոգեթերապիա և որպես ընտանիքի հոգեբանական խորհրդատվություն: Ընտանիքի թերապիան՝ «լայն հասկացություն է, որով նշանակվում է տարբեր կենսաբանական, հոգեբանական և սոցիալական դժվարություններ ունեցող ընտանիքների հետ աշխատանքի մեթոդների շարքը» (Carr 2006: 3):

Սակայն ոչ բոլոր դեպքերում է ընտանիքը հանդես գալիս որպես հոգեթերապևտիկ միջամտության նպատակակետ: Որոշ դեպքերում ընտանիքը դիտարկվում է որպես ընտանիքի անդամի կենսագործունեության միջավայր և նրա վրա թերապիական ազդեցություն գործելու միջոց: Այս պարագայում «...հիվանդը (այսինքն՝ նա, ում պատճառով ընտանիքը դիմել է խորհրդատվության) դիտարկվում է ոչ թե որպես բժշկական տեսանկյունից հիվանդ, այլ ավելի շուտ որպես դիսֆունկցիոնալ ընտանեկան համակարգի տարր: Ընտանեկան թերապիան ենթադրում է երեխային կամ մեծահասակ հիվանդին ընտանիքի, որում նա հիվանդացել կամ ձեռք է բերել տարատեսակ շեղումներ, միջոցով թերապևտիկ օգնություն ցույց տալու հնարավորություն: Համապատասխանաբար, աշխատանքի կիզակետում հայտնվում են ոչ թե ընտանիքի անդամների ներհոգեկան խնդիրները, այլ ընտանեկան փոխազդեցությունների, ընտանիքի կառուց-

վածքի և գործընթացների ձևերը (տիպերը): Այսպիսով, ընտանեկան թերապիայի նպատակը ֆունկցիոնալ ընտանեկան կազմակերպություն ձևավորելու համար պայմանների ստեղծումն է, որը կապահովի ընտանիքի յուրաքանչյուր անդամի ներուժային հնարավորությունների առավելագույն աճ» (Черников 2001: 5):

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում թերապիական ազդեցության գլխավոր առարկան ընտանիքի առանձին անդամն է, իսկ ընտանիքը հանդես է գալիս որպես այդ իսկ ազդեցության միջոց: Ընդ որում թերապիական ազդեցությունը կարող է և ուղղված լինել ամբողջական ընտանիքին, սակայն միայն ընտանիքի առանձին անդամի վրա ազդեցություն գործելու նպատակով: Ընտանեկան հոգեթերապիայի նմանատիպ մեկնաբանության ենք հանդիպում Էյդեմիլերի մոտ: Նա մասնավորապես նշում է, որ ընտանեկան հոգեթերապիան հոգեթերապիայի ոլորտ է, որը ներառում է ընտանիքի հետազոտությունը և հիվանդությունների կանխարգելման ու բուժման, ինչպես նաև հետագա հասարակական-աշխատանքային վերականգնման նպատակով ընտանիքի վրա ազդեցությունը: Էյդեմիլերը նշում է, որ ընտանեկան հոգեթերապիայի մեթոդները կիրառելի են այնպիսի շեղումների դեպքում, ինչպիսիք են ներդոները, սուր հուզական և սուիցիդալ հակազդեցությունները, վարքի իրադրական պայմանավորվածություն ունեցող շեղումները, հարբեցողությունը, թմրամոլությունը, փսիխոպաթիաները, փսիխոզները և հոգեմարմնական (փսիխոսոմատիկ) հիվանդությունները (Эйдемиллер 1989: 4):

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Էյդեմիլերը ընտանեկան հոգեթերապիայի ոլորտից դուրս է մղում ընտանիքի վրա հոգեբանական ազդեցության այնպիսի ձևերը,

որոնք իրենց առջև չեն դնում բժշկական նպատակներ: Այդպիսի ոչ բժշկական հոգեթերապևտիկ ազդեցության օրինակ է պրոբլեմատիկ ընտանիքների խորհրդատվությունը, երբ ընտանիքը փորձում է դուրս գալ ստեղծված իրավիճակից, սակայն չի կարողանում ինքնուրույնաբար լուծել իր առջև ծառայած խնդիրները: Ընտանեկան խորհրդատվությունը, ըստ Էյդեմիլերի, թերապիա (բուժում) չէ բառի ճշգրիտ իմաստով (Эйдемиллер 1989: 4-5):


Իսկապես, ընտանիքի հոգեբանության երկու կիրառական կողմերը՝ ընտանիքի հոգեթերապիան և ընտանիքի հոգեբանական խորհրդատվությունը, ակնհայտորեն տարբերվում են: Այդ շինայի մոտ հանդիպում ենք ընտանիքի հետ հոգեբանական աշխատանքի այդ երկու տարատեսակների պայմանական տարաբաժանմանը: Նա հոգեբանական խորհրդատվությունը սահմանում է որպես մարդկանց հետ տարվող անմիջական աշխատանք, որն ուղղված է միջանձնային հաղորդակցության դժվարությունների հետ կապված տարատեսակ հոգեբանական խնդիրների լուծմանը: Ըստ Այդեմիլերի՝ հոգեբանական խորհրդատվության ընթացքում, որպես ազդեցության հիմնական միջոց, կիրառվում է զրույցը: «Զրույցի համապատասխան ձև է կիրառվում նաև հոգեշտկողական աշխատանքում և հոգեթերապիայում, - շարունակում է Այդեմիլերը, - սակայն եթե խորհրդատվությունը միտված է առաջին հերթին այցելուի միջանձնային փոխհարաբերությունների վերականգնմանը, ապա հոգեշտկողական և հոգեթերապևտիկ ազդեցությունն ուղղված է հիմնականում կենսական դժվարությունների և կոնֆլիկտների մեծ մասի հիմքերում ընկած՝ մարդու խորքային անձնային խնդիրների լուծմանը» (Алешина: 1999:11):

Ասվածից կարելի է եզրակացնել, որ ընտանեկան հոգեթերապիայի և ընտանեկան հոգեխորհրդատվության հիմնական տարբերությունը դրանց նպատակային ուղղվածությունն է: Առաջին դեպքում հոգեբանական միջամտության կիզակետում է ընտանիքի առանձին անդամը, իսկ ընտանիքի հետ աշխատանքը ծառայում է որպես նրա վրա ազդեցություն գործելու միջոց: Հոգեխորհրդատվության պարագայում նպատակակետը փոխվում է, այստեղ առավել կարևորվում են ներընտանեկան միջանձնային փոխհարաբերությունները:

Կարելի է ենթադրել, որ ընտանիքի հետ տարվող հոգեբանական աշխատանքի նշված կողմերը սերտորեն փոխկապակցված և փոխլրացնող են: Սակայն, ըստ ամենայնի, պրակտիկ աշխատանքի ընթացքում առաջ է գալիս այդ մակարդակներից որևէ մեկի ընտրության անհրաժեշտություն: Ըստ այդմ, կախված հոգեբանի կամ հոգեթերապևտի նպատակից, նրա կանխադրություններն ու մեթոդները կարող են տարբերվել մյուսների մեթոդներից և կանխադրություններից: Որպես հետևանք՝ ընտանեկան հոգեթերապիայի, հոգեխորհրդատվության,

ինչու չէ նաև ընտանիքի հոգեբանության բնագավառում առաջ է գալիս մեթոդաբանական խառնաշփոթ, զգացվում է հետազոտության կամ հոգեբանական միջամտության հիմքերում ընկած կանխադրությունների դասակարգման անհրաժեշտություն:

Ընտանեկան թերապիայի դպրոցների դասակարգման վաղ փորձերից մեկը ձեռնարկվել է ԱՄՆ-ում հոգեբուժության առաջընթացի խմբի ընտանիքի կոմիտեի կողմից 1965-1966 թթ.: Այստեղ ընտանեկան թերապիայի ամբողջ ոլորտը տարաբաժանվում է երեք խմբի, որոնցից երկուսը բևեռայնորեն հակադրված են, իսկ երրորդը գրավում է միջանկյալ դիրք: Առաջին խմբին պատկանող թերապևտները հենվում են հոգեվերլուծական տեսության վրա և ունեն անհատական կողմնորոշում: Դրան հակադրվող խմբում, որպես թերապևտիկ աշխատանքի տեսական հիմք, հանդես է գալիս համակարգերի տեսությունը: Այստեղ գերակշռում է միջանձնային կողմնորոշումը: Միջանկյալ խմբին պատկանող թերապևտների մոտ համադրվում են նշված երկու մոտեցումների կանխադրությունները (Черников 2001: 9-10):



Առաջին (A) տեսակետի կողմնակիցները հոգեդինամիկ կողմնորոշում ունեցող թերապևտներ են, որոնց համար ընտանեկան թերապիան նրանց թերապևտիկ զինանոցի հերթական մեթոդն է: Եվ չնայած որ նրանք երբեմն կազմակերպում են ընտանեկան հանդիպումներ, այդուհանդերձ այս ուղղության ներկայացուցիչները կենտրոնացած են անհատական հիվանդի վրա: Ընտանքն այս տեսանկյունից դիտարկվում է որպես սթրեսա-

ծին գործոն, որը պետք է հաղթահարվի հիվանդի կողմից: Այս դեպքում ընդգծվում են պատմական ինֆորմացիան (անցյալում տեղ գտած դեպքերի և իրադարձությունների մասին), ախտորոշումը, աֆեկտի արտահայտումն ու ինսայթը (Черников 2001: 10):

Երկրորդ (Z) խմբին պատկանող թերապևտներն ունեն բացառապես համակարգային ընտանեկան կողմնորոշում: Այստեղ ընտանեկան թերապիան դիտարկվում է ոչ թե

որպես մեթոդ, այլ որպես հոգեկան առողջության հիմնախնդրի արմատապես նոր մոտեցում: Թերապևտիկ աշխատանքը դիտվում է որպես ազդեցություն ընտանիքի՝ որպես ամբողջի, վրա: Մթերասային իրավիճակում անհատի՝ որպես հիվանդի հանդեպ վերաբերմունքը փոխարինվում է նրան՝ որպես ընտանեկան համակարգի դիսֆունկցիան արտացոլող «ախտանիշը կրողի» վերաբերմունքով: Z կողմնորոշման թերապևտներն ուշադրություն չեն դարձնում անցյալին, կենտրոնանում են ներկա, ընթացիկ փոխազդեցությունների վրա: Այս մոտեցման սահմաններում հաշվի չի առնվում անհատական նոգոլոգիայի վրա հիմնվող ախտորոշումը, աֆեկտի արտահայտումն անհրաժեշտ չի համարվում (Черников 2001: 10):

Այս դեպքում մենք դարձյալ կանգնում ենք նույն խնդրի առջև: Փաստորեն ընտանեկան թերապիայի առանձնացվող մոտեցումները տարբերվում են հիմնականում այն հանգամանքով, թե ընտանիքի գործառնան որ՝ անհատական, ընտանեկան, թե՛ սոցիալական, մակարդակին է ուղղված թերապևտիկ աշխատանքը: Եվ չնայած որ անհատական կողմնորոշում ունեցող թերապիան կարող է ընթանալ նաև ամբողջական ընտանիքի մակարդակում, այդուհանդերձ դրա թիրախն ակնհայտորեն տեղակայված է անհատական մակարդակում: Միջանձնային կողմնորոշման պարագայում որպես թերապևտիկ ազդեցության թիրախ են դիտարկվում ամբողջական ընտանիքը, ընտանիքում միջանձնային փոխհարաբերությունները: Իսկ որքանով են մեկուսացված նշված մակարդակները:

Ներկայացված խնդիրը չափազանց կարևոր է ընտանիքի հոգեբանական հետազոտության համար: Բանն այն է, որ, կախված հետազոտության նպատակային ուղղվածությունից, անհատական, խմբային կամ հասարակական միտվածությունից՝ հետազոտողի ուշադրությունից դուրս են մնում ընտանիքի գործառնան մյուս մակարդակները, կորսվում է ընտանիքի՝ որպես սոցիալ-հոգեբանական խմբի ամբողջականությունը: Դա նշանակում է, որ ընտանիքի գործառնան առանձին մակարդակների կարևորման պայմաններում իրականացված հետազոտությունները կարող են ոչ միայն չհամապատասխանել, այլև հակասել միմյանց:

Այս առումով բավականին հետաքրքրական է Ուիլյամ Փինսոֆի և Ջեյ Լեբովի կարծիքը: «Ընտանեկան հոգեբանության գիտական հարացույց» աշխատության մեջ նրանք նշում են, որ չնայած «ընտանեկան հոգեբանությունը» բավականին երիտասարդ հետազոտական բնագավառ է, այդուհանդերձ իր քառորդ դար տևած զարգացման ընթացքում այն հասցրել է բախվել անխուսափելի հակասությունների և մարտահրավերների, որոնք ժառանգել է հոգեբանությունից: Այսպես՝ մասնավորեցնելով իր առարկան՝ ընտանիքի հոգեբանությունն ավելի շատ կենտրոնանում է անհատական և կենսաբանական համակարգերի վրա: Լայնացնելով առարկան՝ սկսում է հետաքրքրվել այնպիսի լայն համակարգերով, ինչպիսիք են մշակույթը, ազգությունները, քաղաքականությունը (Pinsof, Lebow 2005: 3):

Որպես ստեղծված խնդրահարույց իրավիճակի լուծում՝ Փինսոֆն ու Լեբովն առաջարկում են ընտանիքի հոգեբանության տարամիտվող հայեցակարգերի համակարգման երկչափ մոդել: Առաջին չափումը ներառում է հայեցակարգի հիմքում ընկած տեսությունները, ներկայացնում է հայեցակարգի մեթոդաբանական կողմնորոշումը (հորիզոնական առանցք): Երկրորդ չափումը ներառում է այն իրական ոլորտները, հարցադրումների տիրույթները, որոնք մասնավորեցնում են հետա-



գա աշխատանքի շրջանակները (ուղղահայաց առանցք): Միավորելով այս երկու չափումները՝ հեղինակներն առաջարկում են ընտանիքի հոգեբանության գիտական հարացույցի մատրից (Pinsof, Lebow 2005: 3-18):

Անդրադառնալով ընտանիքի գոյաբանական կարգավիճակի չափանիշին՝ նշենք, որ վերջին ժամանակներս ընտանիքի հոգեբանության բնագավառում նկատվում է ակնհայտ միտվածություն դեպի համակարգային մոտեցումը: Համակարգային մոտեցման շրջանակներում ընտանիքը դիտարկվում է որպես բաց համակարգ, որը գտնվում է շրջակա միջավայրի հետ անընդհատ փոխադարձ փոխանակության մեջ: Ընտանեկան համակարգն ինքնակարգավորվող համակարգ է, այսինքն՝ դրա դրսևորումները նպատակառոտված են, և համակարգի փոխակերպումների աղբյուրը գտնվում է նրա ներսում: Ընդ որում կարևոր է այն հանգամանքը, որ ընտանիքն այս տեսանկյունից որպես համակարգ առաջնային է այն կազմող անդամների համեմատությամբ: Այս մոտեցման շրջանակներում ընտանիքի առանձին անդամների մտադրություններն ու դրսևորումները երկրորդական են և ենթարկվում են ընտանեկան համակարգի գործառնման օրենքներին և կանոններին: Հետևաբար, նպատակահարմար է աշխատել ամբողջ ընտանիքի և ոչ թե դրա առանձին անդամների հետ (Варга, Драбкина 2001: 4):

Այստեղ, սակայն, հարկ է կանգ առնել մի կարևոր հանգամանքի վրա: Եթե որպես հետազոտության հիմք ընդունենք համակարգային մոտեցման դրույթը և ընտանիքը դիտարկենք որպես համակարգ՝ երկրորդական պլան մղելով անհատական և հասարակական ազդեցությունների դերը, հաշվի չառնելով մի կողմից՝ ընտանիքը կազմող անհատների դրսևորումները, մյուս կողմից՝ դրա գործառ-

ման միջավայրի ազդեցությունը, ստիպված կլինենք ընտանիքը դիտարկել որպես մեկուսացված, ինքնաբավ միավոր: Այս դեպքում դրա բոլոր դրսևորումները կբխեցվեն հենց իրենից, ինչը, սակայն, մեթոդաբանորեն արդարացված չէ:

Ինչպես նշում են Փինսոֆն ու Լեբովը, հենց այսպես էին վարվում ընտանիքի հոգեբանության զարգացման վաղ շրջանում: Պատմականորեն ընտանեկան թերապիայի հայեցակարգերում և ինչ-որ չափով նաև ընտանիքի հոգեբանության տեսություններում հնարավորինս նեղացվում էին անհատի հոգեբանության և անհատական հոգեախտաբանության ներկայացվածության շրջանակները: Անհատի գործառնման վրա կենտրոնանալու ցանկացած փորձ դիտարկվում էր որպես անհամատեղելի իրականության համակարգային տեսության հետ: Այդուհանդերձ, Փինսոֆն ու Լեբովը անհատի և ընտանիքի փոխհարաբերություններն օժտում են ընտանիքի հոգեբանության համար էական, անհրաժեշտ նշանակությամբ: Նրանց կարծիքով՝ ընտանիքի հոգեբանության վաղ շրջանի հետազոտություններում հոգեախտաբանական երևույթների բացառումը կապված է այն հանգամանքի հետ, որ այդ ժամանակահատվածում հետազոտողների շրջանում տիրում էր կամ/կամ դիրքորոշումը, համաձայն որի՝ անհատական հոգեախտաբանությունը սկզբունքորեն անհամատեղելի է համակարգային հայեցակարգի հեռանկարի հետ: Ի հակադրության դրան՝ հեղինակների կողմից առաջարկվող տեսանկյունից այդ երկու՝ անհատական և համակարգային մոտեցումներն համատեղելի են (Pinsof, Lebow 2005: 11-12):

Այս տեսանկյունից ամուսնական զույգը դիտարկվում է որպես համակարգ, որը ներառում է անհատական ենթահամակարգեր (ամուսնական զույգերին) և իր հերթին հան-

